

Ժաննա Գալյան

# ԷԿՈՏՈՒՐԻՉՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՁԵՌՆԱՐԿ

Հայկական Էկոտուրիզմի ասոցիացիա

**Էկոտուրիզմը բնության հատուկ  
պահպանվող տարածքներում  
Պլանավորման և կառավարման ձեռնարկ**

*Ժաննա Գալյան*

Երևան  
«Լուսակն» հրատ. 2007

ՀՏԴ 502:796.5  
ԳՍԴ 20.1+75.81  
Գ 191

This project was funded through a Department of State Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the Author and do not necessarily reflect those of the Department of State.

Սույն նախագիծը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Հանրային գործերի բաժնի դրամաշնորհի միջոցներով: Այս ձեռնարկի հեղինակի կողմից արտահայտած տեսակետները, գրքում տեղ գտած եզրակացությունները և առաջարկությունները կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

Գ 191 Էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում /Պլանավորման և կառավարման ձեռնարկ/ Ժաննա Գալյան: Եր.- «Լուսակն» հրատ., 2007թ.: 100 էջ:

*Այս ձեռնարկը նախատեսված է պահպանվող տարածքներում զբոսաշրջությունը պլանավորողների և կառավարողների, ինչպես նաև այս բնագավառում որոշումներ ընդունողների համար: Գիրքը կարող է օգտակար լինել զբոսաշրջության դաշտում գործող այլ շահառուներին՝ տեղական համայնքներին, զբոսաշրջային օպերատորներին, հյուրատների աշխատողներին և այլոց:*

*Գիրքը կարող է նաև օգտագործվել որպես ուսումնական ձեռնարկ զբոսաշրջության մասնագետներ պատրաստող կրթական հաստատությունների ուսանողների և դասախոսների կողմից:*

### **Գրախոս՝ Արամ Աղասյան**

*Կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ Բնապահպանության նախարարության Կենսառեսուրսների կառավարման գործակալության Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բաժնի պետ*

Հեղինակը շնորհակալություն է հայտնում Արամ Աղասյանին սույն գրքի Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները՝ ընդհանուր պատկերացում բաժինը կազմելիս նյութեր տրամադրելու համար:

ISBN 978-99941-48-79-0

© Ժաննա Գալյան, 2007թ.

## Բովանդակություն

1. Ներածություն .....	5
2. Տուրիզմը որպես համակարգ .....	6
3. Կայուն տուրիզմ և էկոտուրիզմ .....	8
4. էկոտուրիզմի համաշխարհային փաստագրություն .....	10
5. Բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի համաշխարհային փորձը և դասերը .....	13
6. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները՝ ընդհանուր պատկերացում .....	16
6.1. Հայաստանի կենսաբազմազանության համառոտ նկարագրություն .....	16
6.2. Բնության հատուկ պահպանվող տարածքների դերը կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման գործում .....	18
6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պատմական համառոտ ակնարկ .....	18
6.4. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների ներկա համակարգը և հեռանկարային զարգացումը .....	19
7. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանվող տարրերը և զբոսաշրջության պոտենցիալը .....	23
7.1. Ընդհանուր նկարագրություն .....	23
7.2. «Սևան» ազգային պարկ .....	24
7.3. «Դիլիջան» ազգային պարկ .....	26
7.4. «Խոսրովի անտառ» պետարգելոց .....	28
7.5. «Շիկահող» պետարգելոց .....	29
7.6. «Էրեբունի» պետարգելոց .....	31
7.7. Արգելավայրեր .....	32
7.8. Նոր ստեղծվող ԲՀՊՏ-ներ .....	37
8. ԲՀՊՏ-ներում էկոտուրիզմի կառավարման ուղիներ .....	40
8.1. Ջբոսաշրջության նպատակները և խնդիրները պահպանվող տարածքներում .....	40
8.2. Իրավական կանոնակարգում .....	41
8.3. Մարդկային ռեսուրսների և մասնագիտացված կադրերի զարգացում .....	41
8.4. Պահպանվող տարածքների նախապատրաստումը զբոսաշրջային գործունեության համար .....	42

8.5. Առաջարկվող զբոսաշրջության ձևեր .....	48
8.6. Էկոտուրիզմի շուկայավարում և գովազդ .....	50
8.7. Համագործակցություն զբոսաշրջության մասնավոր սեկտորի հետ .....	57
8.8. Տեղական բնակչության մասնակցություն .....	61
8.9. Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության ազդեցության կառավարում .....	66
8.10. Զբոսաշրջության մոնիթորինգ .....	77
9. Պահպանվող տարածքներում զբոսաշրջության ֆինանսական կողմերը .....	78
10. Հավելվածներ .....	82
10.1. CBD Guidelines on Biodiversity and Tourism development .....	82
10.2. Baseline issues and indicators of sustainable tourism .....	98
Օգտագործված գրականություն .....	100

# 1. Ներածություն

XX դարի կեսից ի վեր զբոսաշրջությունը դարձել է տնտեսության ամենակարևոր հատվածներից մեկը, և կան բոլոր նախանշանները, որ գալիք տարիների ընթացքում այն ավելի մեծ կարևորություն է ձեռք բերելու: Դրա հետ զուգահեռ աշխարհում անընդհատ ավելանում է բնության և գյուղական միջավայրի հետ կապված զբոսաշրջության, այդ թվում բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) այցելելու պահանջարկը: Ըստ որում ներկայացվող պահանջների հարցում աճում է զբոսաշրջիկների բժախնդրությունը՝ ոչ միայն հարմարավետության և մատուցվող ծառայությունների որակի, այլ առավել իմաստային ճամփորդություն իրականացնելու տեսանկյունից: Սա ներառում է շփվել տեղի բնակչության հետ և ծանոթանալը ինքնատիպ մշակույթին, բնության, նրա բնակիչների՝ վայրի կենդանիների և բույսերի, այդ միջավայրում գտնվող պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրելը, ինչպես նաև նրանց պահպանության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերելը:

Սպասվող աճի և նկատվող նոր տենդենցների արդյունքում զբոսաշրջությունը հայտնվում է այնպիսի ռազմավարական դիրքում, որը հնարավորություն է տալիս նպաստելու ինչպես բնության պահպանվող տարածքների և շրջակա համայնքների զարգացմանը, այնպես էլ հակառակը՝ բացասաբար ազդելու բնության և տեղի բնակչության վրա: Ջրոսաշրջությունը կարող է կարևոր գործիք հանդիսանալ նման տարածքների պահպանության, ինչպես նաև տեղի բնակչության և այցելուների բնապահպանական իրազեկությունը բարձրացնելու համար: Այս նպատակներին կարելի է հասնել զբոսաշրջությունից ստացած ֆինանսական միջոցները բնապահպանական միջոցառումների իրականացմանը ուղղելով, ինչպես նաև այցելուների և տեղացիների համար համապատասխան տեղեկատվական, բացատրական և կրթական ծրագրեր իրականացնելով:

Սակայն երկարատև կայունություն ապահովելու համար զբոսաշրջության գործունեությունը պահպանվող տարածքներում պետք է մանրակրկիտ պլանավորվի, կառավարվի և ենթարկվի մոնիթորինգի, այլապես կարող են լինել բացասական հետևանքներ և դրական ազդեցության փոխարեն զբոսաշրջությունը կարող է խորացնել էկոհամակարգերի դեգրադացումը:

Այս ձեռնարկը նախ և առաջ նախատեսված է պահպանվող տարածքներում զբոսաշրջությունը պլանավորողների և կառավարողների, ինչպես նաև այս բնագավառում որոշումներ ընդունողների համար: Ձեռնարկը նպատակ ունի օգնել պահպանվող տարածքների ղեկավարներին մտածել զբոսաշրջության ներգործության մասին և հորդորել նրանց գիտակցաբար պլանավորել այցելուների և բնական ու մշակութային միջավայրի փոխազդեցության կառավարումը: Արդյունավետ պլանավորումը թույլ կտա տարբեր շահագրգիռ խմբերին առավելագույնի հասցնել զբոսաշրջության հնարավոր օգուտները՝ միևնույն ժամանակ նվազեցնելով հնարավոր բացասական ազդեցությունը:

Այս գիրքը կարող է օգտակար լինել զբոսաշրջության դաշտում գործող այլ շահառուներին՝ տեղական համայնքներին, զբոսաշրջային օպերատորներին, հյուրատների աշխատողներին և այլոց:


Առանձնահատուկ պետք է նշել այս գրքի անհրաժեշտությունը որպես ուսումնական ձեռնարկ ուսանողների և դասախոսների համար: Հայաստանի մի շարք կրթական հաստատություններ այսօր պատրաստում են զբոսաշրջության մասնագետներ: ԲՈՒՀ-երը պետք է պատրաստեն մասնագետներ զբոսաշրջության քաղաքականության ոլորտում, սակայն էկոտուրիզմին նվիրված հատուկ դասընթացները բացակայում են կրթական ծրագրերից, և ուսանողները չեն ստանում անհրաժեշտ գիտելիքներ էկոտուրիզմի հիմնախնդիրների, գաղափարախոսության և մեխանիզմների վերաբերյալ:

Որքան լայն է ընթերցողների շրջանակը, այնքան մեծ է հնարավորությունը ընդհանուր ըմբռնում մշակել էկոտուրիզմի հարցերի վերաբերյալ տարբեր շահագրգիռների կողմից, որոնք ուղղակի կամ անուղղակի ներգրավված են ԲՀՊՏ-ներում զբոսաշրջության պլանավորման և կառավարման գործում: Միայն այդպիսի փոխըմբռնման արդյունքում հնարավոր կլինի այսօր կառավարել ռեսուրսները և այցելությունները, որպեսզի ապագա այցելուները ևս հնարավորություն ունենան վայելելու հանգստի որակյալ վայրերը, ինչպես նաև խորությամբ ընկալելու այդ վայրերի բնապահպանական արժեքը:

## 2. Տուրիզմը որպես համակարգ

Տուրիզմը բաղկացած է համալիր գործողություններից և ծառայություններից, որոնք տարբեր մակարդակներով փոխկապակցված են այլ սեկտորների հետ: Համապատասխանաբար մեծ քանակությամբ գործող անձինք են ընդգրկված տուրիզմին առնչվող գործունեության մեջ: Պահպանվող տարածքներում տուրիզմի արդյունավետ զարգացման և կառավարման համար անհրաժեշտ է հիմնովին հասկանալ տուրիզմի գլոբալ համակարգի բարդությունները և առանձնահատկությունները /գծանկար 1/

Գծանկար 1. Տուրիզմը որպես համակարգ



Աղբյուր՝ Ստեկ/Ստրասդաս/Գուստեդտ, 1999

Տուրիզմի հիմքում ճանապարհորդությունն է, առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունից ձևավորված իրական զբոսաշրջային արդյունքը, որը իր վրա է կրում տուրիզմի քաղաքականության և տարբեր այլ ընդհանուր պայմանների ներգործությունը: Ճանապարհորդության կարևորագույն բնութագիրը այն է, որ զբոսաշրջիկը մեկնում է իր բնակության մշտական վայրից (երկրից) մի այլ վայր (երկիր), որտեղ նա ունի որևէ նպատակային զբաղմունք կամ ակնկալում է հետաքրքիր տպավորություններ և գրավչություններ: Զբոսաշրջության հետ կապված գործունեությունը ծավալվում է մի շարք մակարդակներում և ներառում է ինչպես զբոսաշրջիկի բնակության, այնպես էլ ժամանման վայ-

**Տուրիզմը որպես համակարգ**

րերը /Աղյուսակ 1/: Հետևաբար, միայն տեղական զբոսավարներ պատրաստելը, կացարաններով ապահովելը, գովազդային և տեղեկատվական նյութերի տպագրելը բավական չէ: Որոշակի վայրում, զբոսաշրջությունը զարգացնելու համար, պետք է գործի ճանապարհորդության սպասարկման ամբողջ շղթան, որը հաճախ հատում է երկրի սահմանները:

Աղյուսակ 1. ճանապարհորդության փուլերը և ընդգրկված շահառուները

<b>ճանապարհորդության փուլ</b>	<b>Ում կողմից է առաջարկվում ծառայությունը</b>	<b>Որտեղ է մատուցվում ծառայությունը</b>
ճանապարհորդության մասին տեղեկատվություն	ճանապարհորդական ուղեցույցների /գրքույկների/ հրատարակիչներ, ՁԼՄ-ներ, զբոսաշրջային խորհուրդներ, ցուցահանդեսների կազմակերպիչներ	Ջբոսաշրջիկի բնակության վայր
Միջնորդական ծառայություններ	ճանապարհորդական գործակալներ	Ջբոսաշրջիկի բնակության վայր
ճանապարհորդության նախապատրաստելը և կազմակերպելը	Տուրօպերատոր / արտագնա/, կամ ինքնուրույն / առանձին զբոսաշրջիկ/	Ջբոսաշրջիկի բնակության վայր
ճանապարհորդություն դեպի նպատակային / ժամանման/ վայր	Տրանսպորտային ձեռնարկություններ /սովորաբար ավիաուղիներ/	Ջբոսաշրջիկի բնակության վայր --> ժամանման վայր
ճանապարհորդության կազմակերպում ժամանման վայրում	Ներգնա զբոսաշրջային օպերատոր կամ զբոսաշրջային գործակալ	ժամանման վայր՝ սովորաբար ազգային մակարդակ
ճանապարհորդության մասին տեղեկատվություն ժամանման վայրում	Ջբոսաշրջիկական խորհուրդներ, ներգնա գործակալներ, հյուրանոցներ, տեղեկատվական կենտրոններ, այլ ճանապարհորդներ /բանավոր խոսք/	ժամանման վայր՝ ազգային միջև մարզի մակարդակ
Ներքին փոխադրումներ /ավտոբուսներ, մեքենաներ, ինքնաթիռ, գնացք և այլն/	Տրանսպորտային ձեռնարկություններ /ավիաուղիներ, ավտոբուսային պարկեր, մեքենաների վարձատուներ/	ժամանման վայր՝ ազգային միջև մարզի մակարդակ
Կացարաններ	Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ հյուրանոցներ, պանսիոնատներ, հյուրատներ, ճամբարային համալիրներ և այլն	ժամանման վայր՝ ազգային միջև տեղական մակարդակ
Սնունդ	Հյուրանոցային տնտեսություն վարողներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ	ժամանման վայր՝ ազգային միջև տեղական մակարդակ
Տեղական տրանսպորտ /մինիավտոբուսներ, մեքենաներ, նավակներ, ձիեր և այլն/	Տեղական տրանսպորտային ձեռնարկություններ, տեղի բնակչություն	ժամանման վայր՝ ազգային միջև տեղական մակարդակ
Ջբոսապտույտներ/այլ միջոցառումներ	Ջբոսավարներ, ուղեկցորդներ, հանդերձանքի վարձատուներ	ժամանման վայր՝ ազգային միջև տեղական մակարդակ
Այլ գործողություններ /գնումներ, սրճարան, բար հաճախելը/	Սրճարանների, բարերի, կրպակների, խանութների տերեր	ժամանման վայր՝ ազգային միջև տեղական մակարդակ
Վերադարձի ուղևորություն	Տրանսպորտային ձեռնարկություններ	ժամանման վայր --> բնակության վայր

Աղբյուր՝ Ստեկ/Ստրասդաս/Գուստեդտ , 1999



### 3. Կայուն տուրիզմ և էկոտուրիզմ

Էկոտուրիզմը շատ տարածված բառ է, որը զբոսաշրջությունում ներգրավված տարբեր կողմերը օգտագործում են զանազան ձևերով: Մասնավոր սեկտորը, օրինակ՝ հակված է օգտագործել տվյալ բառը գովազդային նպատակներով՝ առանձնապես չմտածելով էկոտուրիզմի ավելի խորը իմաստի և պահանջների մասին: Այս համատեքստում, ստորև ներկայացված են էկոտուրիզմի մի քանի սահմանումներ:

«**Էկոտուրիզմը**... դա պատասխանատու ճանապարհորդություն է դեպի բնության տարածքներ, որը պահպանում է շրջակա միջավայրը և ապահովում տեղի ժողովրդի բարեկեցությունը»  
*TIES (The International Ecotourism Society)*  
*էկոտուրիզմի միջազգային կազմակերպություն*

«**Էկոտուրիզմ**՝ տուրիզմ, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանն ու հասկանալուն և բերում է տեղի բնակչությանը այնքան շահույթ, որպեսզի մարդիկ գնահատեն ու պահպանեն շրջակա միջավայրը որպես եկամտի աղբյուր»:  
*Չայկական էկոտուրիզմի ասոցիացիա*

**Էկոտուրիզմը** դա հնարավորություն է ճանաչել բնությունը, հիանալ նրանով՝ առանց զրկելու հաջորդ սերունդներին նման հնարավորությունից:

Համաձայն այս սահմանումների էկոտուրիզմը ունի հստակ առանձնահատկություններ՝ այն ոչ միայն զբոսաշրջային պահանջարկի որոշակի սեգմենտ է, այլև ցանկալի արդյունքների մի համախումբ:

**էկոտուրիզմի** անկյունաքարերն են՝

- բնական ու մշակութային ժառանգության պահպանությունը
- բնապահպանական իրազեկությունը և կրթությունը
- տեղի բնակչության բարեկեցության բարձրացումը:

Առանձնահատուկ պետք է նշել, որ էկոտուրիզմը բնապահպանությունը շահավետ դարձնելով, հանդիսանում է **բնության հատուկ պահպանվող տարածքների** զարգացման և կառավարման գործուն միջոց:

Հակառակ դրան, «**բնության տուրիզմը**» կարելի է սահմանել որպես

«...ճանապարհորդություն, որի նպատակն է դիտել և ուսումնասիրել բնությունը, նրա բնակիչներին՝ վայրի կենդանիներին և բույսերին, ինչպես նաև այդ միջավայրում գտնվող պատմամշակութային հուշարձանները»:

Այսպիսով, «բնության տուրիզմ» հասկացությունը պարզապես նկարագրում է շուկայի որոշակի սեգմենտ, անկախ նրանից, արդյոք այն ունի՞ դրական ազդեցություն, թե՞ ոչ:


Ինչպես էկոտուրիզմը, այնպես էլ բնության տուրիզմը կարող են ընդգրկել մշակութային, ինչպես նաև արկածային զբոսաշրջության բաղադրիչներ:

Հաճախակի «էկոտուրիզմը» շփոթում են «կայուն տուրիզմի» հետ: Այս երկու հասկացությունները նման են նրանով, որ ենթադրում են որոշակի դրական ազդեցություն: Այս առումով «կայուն տուրիզմը» ևս առավելապես գաղափար է, քան սոսկ նկարագրություն: Այնուամենայնիվ, ի տարբերություն էկոտուրիզմին, որը վերաբերում է միայն որոշակի սեզմենտին, կայուն տուրիզմը շատ ավելի ընդգրկուն, զբոսաշրջության բոլոր ձևերը ներառող հասկացություն է: *Շրջակա միջավայր և զարգացում* հասարակական կազմակերպությունների միջազգային համաժողովի կողմից «կայուն տուրիզմին» տրվել է հետևյալ սահմանումը՝

Կայուն տուրիզմը պետք է համապատասխանի սոցիալ, մշակութային, էկոլոգիական և տնտեսական համատեղելիության չափանիշներին: Ապագա սերնդին անխաթար բնություն կտակելու նկատառումով կայուն տուրիզմը բարոյապես և սոցիալապես անաչառ է, մշակութային համատեղելի, էկոլոգիապես կենսունակ, տնտեսապես պատշաճ և արդյունավետ:

Այս առումով էկոտուրիզմը ընկալվում է որպես կայուն տուրիզմի բաղադրիչ, ըստ որում, երկուսի հիմքում էլ տուրիզմը շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման միջոց դարձնելու գաղափարն է /գծանկար 2/:

Գծանկար 2. Էկոտուրիզմը որպես կայուն զարգացման կոնցեպտ



Աղբյուր՝ Ստրասդաս, 2001

## 4. Էկոտուրիզմի համաշխարհային փաստագրություն

Աղբյուր՝ Էկոտուրիզմի համաշխարհային կազմակերպություն (2005)

The International Ecotourism Society, [www.ecotourism.org](http://www.ecotourism.org)

### Համաշխարհային զբոսաշրջության ծավալը

- Որպես համաշխարհային տնտեսության ամենամեծ հատված զբոսաշրջությունը ապահովում է 230 մլն աշխատատեղ և համաշխարհային տնտեսության ՀՆԱ-ի (Համախառն ներքին արդյունք) ավելի քան 10%:
- 2006 թ. սպասվում է, որ զբոսաշրջության ոլորտը (սպառում, ներդրում, պետական ծախսեր և արտահանում) կունենա 4,6% աճ և կհասնի 6,5 միլիարդ ԱՄՆ դոլար ցուցանիշին:
- Եթե զբոսաշրջությունը լիներ պետություն, այն կունենար աշխարհի 2-րդ տնտեսությունը՝ զիջելով միայն ԱՄՆ-ին:
- Ավելի քան 150 երկրներում (5-ից 4-ում) զբոսաշրջությունը արտահանող ոլորտների առաջին հնգյակում է: Վաթսուն երկրներում զբոսաշրջությունը առաջին արտահանող ոլորտն է:

### Ջրոսաշրջության համաշխարհային աճը

- 1950՝ 25 միլիոն զբոսաշրջային այցելություններ:
- 1990-ականներ՝ զբոսաշրջությունը աճում է տարեկան 7%:
- 2004՝ 760 մլն զբոսաշրջիկներ, ինչը համապատասխանում է 10% համաշխարհային աճին:
- 2005՝ ամբողջ աշխարհում գրանցված միջազգային զբոսաշրջային այցելությունները աճեցին 5,5%, առաջին անգամ այցելուների քանակը հասցնելով 800 մլն-ի:
- 2020՝ համաշխարհային զբոսաշրջության զարգացման կանխատեսումների համաձայն՝ այցելությունների քանակը կհասնի 1,56 մլրդ-ի:

### Ջրոսաշրջության կարևորությունը զարգացող երկրներում

- Ջրոսաշրջությունը գլխավոր արտահանող ոլորտն է (տարադրամ ներմուծող) զարգացող երկրների 83%-ում և առաջատար արտահանողներից մեկը՝ ամենաաղքատ երկրների 1/3-ում:
- Աշխարհի ամենաաղքատ երկրների 40%-ի համար զբոսաշրջությունը տարադրամի երկրորդ ամենակարևոր աղբյուրն է՝ նավթից հետո:
- Վերջին տասնամյակի ընթացքում զբոսաշրջությունը համաշխարհային առևտրի միակ սպասարկման ոլորտն է, որտեղ աղքատ երկրները ցուցադրել են բավարար աճ:
- Ջարգացող երկրներում միջազգային զբոսաշրջությունը աճում է 9,5% համեմատած 4,6% համաշխարհային աճի:
- Ջրոսաշրջությունը տնտեսության այն քիչ ոլորտներից է, որը կարող է հասցնել մի շարք զարգացող երկրները բարեկեցության առավել բարձր մակարդակի, իսկ որոշներին էլ կարող է դուրս բերել թերզարգացած երկրների ցուցակից:

### Ջրոսաշրջության բացասական ազդեցությունը

- Կան 109 երկրներ, որոնք ունեն ստորջրյա բուստախութ (coral reef, մարջան): Նրանցից 90-ում բուստախութերը վնասվում են ծովաշրջիկության (cruise), նավերի խարխիսների և կեղտաջրերի արտանետման պատճառով, զբոսաշրջիկների կողմից մարջանի մեծ կտորներ պոկելու, ինչպես նաև կոմերցիոն վաճառքի հետևանքով:

- Կարիբյան ծովում ծովաշրջիկության նավերը տարեկան կատարում են մոտ 70.000 տոննա արտանետում:
- Միջին մեծության 18 փոսերով գոլֆի դաշտը պահանջում է օրական 525.000 գալոն (1 գալոնը= 4,55լիտր ) ջուր, ինչը կբավարարեր 100 մալազիացի ֆերմերների՝ ոռոգման կարիքները հոգալու:

### **Համաշխարհային էկոտուրիզմի ծավալը**

- Սկսած 1990-ականներից, էկոտուրիզմը տարեկան աճում է 20% – 30%:
- 2004 թ. էկոտուրիզմը/բնության զբոսաշրջությունը աճել է երեք անգամ ավելի արագ, քան զբոսաշրջային ինդուստրիան ընդհանրապես:
- Միջազգային շուկայում բնության զբոսաշրջությունը աճում է տարեկան 10 – 12%:
- Ծովափնյա զբոսաշրջությունը վեր է ածվել առանձին շուկայի և, կանխատեսումների համաձայն, նրա աճը պետք է պահպանվի նույն մակարդակի վրա: Ի տարբերություն դրան «ճանաչողական» զբոսաշրջությունը, որը ներառում է բնության և մշակույթի հետ կապված, «փափուկ» արկածային ձևերը, ինչպես նաև գյուղական և համայնքային զբոսաշրջությունը, այն ոլորտներն են, որոնք, կանխատեսումների համաձայն, ամենից արագ կաճեն գալիք երկու տասնամյակների ընթացքում:
- ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիրը (UNEP) և Համաշխարհային բնապահպանական կազմակերպությունը (Coservation International) արձանագրել են, որ զբոսաշրջության առավել մեծ աճը դիտվում է աշխարհի այն մասերում, որտեղ գոյություն ունեն պահպանված բնական տարածքներ:
- Կայուն տուրիզմը վեց տարվա ընթացքում կարող է աճել համաշխարհային զբոսաշրջային շուկայի 25% չափով, ոլորտի շրջանառությունը հասցնելով մինչև 473,6 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան:
- Վերլուծաբանները կանխատեսում են էկո-հանգստավայրերի և հյուրանոցների թվաքանակի աճ, ինչպես նաև բնության հետ կապված զբոսաշրջության արագ վերելք, որն արդեն աճում է 20% տարեկան: Ժամանակին կայուն տուրիզմի փոխակերպվելու պարագայում նրանք երաշխավորում են շուկայի աճ:

### **Էկոտուրիզմը և զանգվածային տուրիզմը տնտեսական տեսանկյունից**

- Դոմինիկյան հանրապետությունում, Կարիբյան ծովի ափին հանգրվանող զբոսաշրջիկները, որոնք վարձում են փոքր, բնության գրկում գտնվող կացարաններ, ծախսում են 18 անգամ ավելի, քան ծովաշրջիկության նավերի ուղևորները, երբ վերջիններս այցելում են կղզի:
- Ինդոնեզիայում գտնվող Կոմոդո ազգային պարկում անկախ այցելուները յուրաքանչյուր այցելության ժամանակ տեղում ծախսում են մոտավորապես 100 ԱՄՆ դոլար, երբ զբոսաշրջային փաթեթներ գնողները ծախսում են այդ գումարի միայն կեսը: Ի համեմատություն՝ ծովաշրջիկության նավերի ուղևորները միջինը երեք ցենտին համարժեք ներդրում են կատարում տեղական տնտեսության մեջ:
- Ջբոսաշրջային փաթեթների (all-inclusive package tours) ծախսերի 80%-ը բաժին է հասնում ավիափոխադրողներին, հյուրանոցներին և այլ միջազգային կազմակերպություններին: Էկո-կացարանները վարձում և գնում են տեղական ապրանքներ և որոշ դեպքերում կարող են ներդնել գումարի մինչև 95% տեղական տնտեսության մեջ:
- Մշակութային զբոսաշրջիկների օրական ծախսը (90 ԱՄՆ դոլար) ավելի բարձր է, քան ուղեպտույտների (touring holiday) այցելուներինը (67 ԱՄՆ դոլար), ծավափնյա զբոսաշրջիկների (62 ԱՄՆ դոլար), քաղաքային այցելությունների (54 ԱՄՆ դոլար) կամ գյուղական զբոսաշրջային այցելուների ծախսը:

**Սպառողական պահանջ**

- Ամերիկացի և ավստրալիացի զբոսաշրջիկների 2/3-ը և բրիտանացի այցելուների 90%-ը գտնում են, որ շրջակա միջավայրի պահպանությունը և աջակցությունը տեղական համայնքին հյուրանոցների պարտականությունն է:
- Եվրոպայում
  - Ջբոսաշրջիկների 20-30%-ը տեղյակ է կայուն տուրիզմի պահանջներին և արժեքներին
  - 10 – 20%-ը փնտրում է ,կանաչե տարբերակներ
  - Ջբոսաշրջիկների 5-10%-ը պահանջում է «կանաչ» հանգիստ
- Գերմանիայում զբոսաշրջիկների 65%-ը (39 մլն) ակնկալում է էկոլոգիական համապատասխան որակ: 42%-ը (25 մլն) շատ կարևոր է համարում էկոլոգիական չափանիշներին համապատասխանող կացարանում հանգրվանելը:
- Բրիտանիայում հարցվածների կեսը ասել է, որ առավել պատրաստ են համագործակցել զբոսաշրջային այն ընկերության հետ, որը ունի գրված կանոններ լավ աշխատանքային պայմաններ ապահովելու համար, ինչպես նաև միջավայրը պահպանելու և զբոսաշրջային վայրերը բարեկարգելու նպատակով տեղական բարեգործական կազմակերպություններին նվիրատվություններ անելու պատրաստականություն: Բարոյական զբոսաշրջությունը, անկասկած, կլիմի մեծ ինդուստրիա նոր հազարամյակում:
- Ամերիկացի, բրիտանացի և ավստրալիացի զբոսաշրջիկների շրջանում անցկացրած ուսումնասիրությունը բացահայտել է, որ, նրանց 70%-ը պատրաստ է վճարել մինչև 150 ԱՄՆ դոլար ավել էկոլոգիական չափանիշներին համապատասխանող հյուրանոցում երկշաբաթյա արձակուրդի համար:
- Մեծ Բրիտանիայում անցկացրած ուսումնասիրության համաձայն զբոսաշրջիկների 87%-ը նշել է, որ իրենց հանգիստը չպետք է վնաս պատճառի բնությանը: 39%-ը նշել է, որ իրենք պատրաստ են 5% ավել վճարել բարոյական երաշխիքների համար:
- Ամերիկացի զբոսաշրջիկների 53%-ը նշել է, որ իրենց ծախսերը ավելանում են, երբ նրանք որքան կարելի է շատ են տեղեկանում տեղի ավանդույթների և մշակույթի մասին:
- Շվեյցարացի զբոսաշրջիկների 95%-ը գտնում է, որ հարգանքը տեղի մշակույթի հանդեպ շատ կարևոր է հանգիստը ընտրելու համար:
- Ամերիկացի զբոսաշրջիկների 1/3-ը (46 մլն) գնում են զբոսաշրջային արդյունք հատկապես այն ընկերություններից, որոնք իրենց շահույթի մի մասը տրամադրում են բարեգործական կազմակերպություններին: Եվրոպայում, որտեղ գոյություն ունի ուժեղ և աճող կայուն զբոսաշրջության շարժում, այս ցուցանիշները նույնիսկ ավելի բարձր են:

## 5. Բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի համաշխարհային փորձը և դասերը

---

Բնության հատուկ պահպանվող տարածքներ ստեղծելը դարեր շարունակ մարդկության կողմից եղել է մշակութային երևույթ: Այդ վայրերը ունեն տարբեր անվանումներ, բայց, որպես կանոն, դա ներառում է բնական կամ պատմամշակութային ժառանգության պահպանության համար պետության կողմից հատուկ տարածքների պաշտոնապես առանձնացումը, ինչպես նաև այդ տարածքների տնօրինման նպատակով հատուկ հաստատությունների ստեղծումը: Շատ դեպքերում մարդկանց այցելություններն են դարձել ԲՀՊՏ-ների ձևավորման և պահպանման սկզբնական դրդապատճառը: Այցելությունները այդ տարածքների գործունեության անբաժանելի մասն են կազմում տարիներ ի վեր:

*Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում, ինչպես նաև նախկին Խորհրդային միության բոլոր երկրներում, ԲՀՊՏ-ների՝ ընդհանուր «Ձապովեդնիկ» անվան տակ, ստեղծման սկզբնական դրդապատճառը եղել է էկոհամակարգերի պահպանությունը:*

Ինչքանով ԲՀՊՏ-ներն են հետաքրքրություն ներկայացնում զբոսաշրջության համար, այնքանով էլ զբոսաշրջությունը հիանալի հնարավորություններ է ընձեռում այդ տարածքների պահպանության համար: Զբոսաշրջությունը ունի բոլոր նախապայմանները ԲՀՊՏ-ների կայուն կառավարման գործում կարևոր օղակ դառնալու համար: Այնուամենայնիվ, իրականում զբոսաշրջությունը կարող է ունենալ երկու տիպի ազդեցություն: Այն իրենից իրական ներուժ է ներկայացնում կենսաբազմազանության պահպանությունից և բնական ռեսուրսների կայուն օգտագործումից էական օգուտներ ստանալու համար, բայց, միևնույն ժամանակ, արագ և որոշ դեպքերում անկառավարելի աճը կարող է լուրջ պատճառ հանդիսանալ շրջակա միջավայրի դեգրադացիայի և տեղական ինքնության ու մշակույթի ոչնչացման համար: Կենսաբանական և ֆիզիկական ռեսուրսները այն գործոններն են, որոնք գրավում են զբոսաշրջիկներին: Սակայն զբոսաշրջության ծանրաբեռնումը արագացնում է փխրուն էկոհամակարգերի անկումը: Որքան էլ տարօրինակ է՝ զբոսաշրջության հաջողությունը կարող է բերել բնական միջավայրի դեգրադացմանը: Պատճառ դառնալով բնական ռեսուրսների անկմանը, զբոսաշրջությունը նվազեցնում է տեղանքի գրավչությունը՝ իր իսկ հաջողության գլխավոր նախադրյալը և փաստորեն «հատում է այն ճյուղը, որի վրա նստած է»:

Առավելությունների շարքում կարող ենք նշել գանձված վճարներից և հարկերից ստացված եկամուտները, ինչպես նաև կենսաբանական ռեսուրսների օգտագործման դիմաց ստացված վճարները: Այս եկամուտները կարող են օգտագործվել բնական տարածքների պահպանման նպատակով և ներդրվել տնտեսության զարգացման մեջ՝ ներառյալ այլ շաղկապված ոլորտներում, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծման նպատակով: Կայուն զբոսաշրջությունը կարող է նպաստել կենսաբազմազանության պահպանմանը՝ հատկապես, երբ տեղական համայնքները զբոսաշրջային օպերատորների հետ համատեղ անմիջականորեն ներգրավված են այդ գործում: Եթե այդ համայնքները ստանան եկամուտ անմիջապես զբոսաշրջային ընկերությունից, ապա նրանց մոտ կբարձրանա շրջակա ռեսուրսների գնահատումը: Որպես հետևանք, կարող ենք ունենալ առավել լավ պահպանված ռեսուրսներ, քանի որ դրանք կընկալվեն որպես եկամուտի աղբյուր: Բացի դրանից, կայուն զբոսաշրջությունը կարող է ծառայել որպես կարևոր կրթական հնարավորություն՝ ավելացնելով գիտելիքները և բարձրացնելով բնական էկոհամակարգերի և կենսաբանական ռեսուրսների գնահատումը:

Առկա ռեսուրսների և նրանց բազմազանության կայուն օգտագործման վերաբերյալ քննարկումներում կարևոր է լիովին հաշվարկել հնարավոր բացասական բնապահպանական և սոցիալ-տնտեսա-

կան հետևանքները: Վերականգնվող և ոչ վերականգնվող բնական ռեսուրսների ուղղակի օգտագործումը ծառայություններ մատուցելիս զբոսաշրջության ուղղակի ազդեցության ամենանշանակալից հետևանքներից մեկն է տվյալ տարածքում: Հողի օգտագործումը կացարանների և ենթակառուցվածքների համար, տեղի ընտրությունը, շինարարական նյութերի օգտագործումը՝ այս ամենը շատ կարևոր գործոններ են: Անտառահատումներն ու հողի անկայուն և ինտենսիվ շահագործումը ևս առաջացնում են հողի էրոզիա և կենսաբազմազանության կորուստ: Ուղղակի ազդեցություն տեսակային կազմի և վայրի բնության վրա կարող է պայմանավորված լինել սխալ պահվածքով և չկանոնակարգված զբոսաշրջային գործունեությամբ: Օրինակ՝ ճանապարհներից և արահետներից դուրս երթևեկելը, բույսեր հավաքելը, որսորդությունը, ձկնորսությունը, շարժիչային փոխադրամիջոցների օգտագործումը և այլն: Նույնիսկ ավելին, զբոսաշրջիկները և փոխադրամիջոցները կարող են պատճառ դառնալ օտար տեսակների ի հայտ գալուն, իսկ մարդկային ներկայությունը և սխալ վարվելակերպը կարող են շեղումներ առաջացնել կենդանիների պահվածքի/վարքագծի/ մեջ: Ջրոսաշրջության հետ կապված շինարարական գործունեությունը կարող է լրջորեն խախտել ապրելավայրերը և էկոհամակարգերը:

Ջրոսաշրջությունը երկար տարիների ընթացքում կենտրոնացել է լեռնային և ափամերձ տարածքներում: Կենսառեսուրսների և նրանց բազմազանության վրա զբոսաշրջային գործունեության ճնշումը հսկայական է և ներառում է լեռներում հետիոտն արահետների, կամուրջների, խրճիթների, վրանատեղերի կառուցման հետևանքով առաջացած էրոզիան և աղտոտումը: Ջրոսաշրջային գործունեությունը մեծ ազդեցություն ունի նաև ծովային և ափամերձ տարածքների և դրանց կենսաբազմազանության վրա: Հիմնականում այդ ազդեցությունը պայմանավորված է ոչ ճիշտ պլանավորմամբ, զբոսաշրջիկների և զբոսաշրջային օպերատորների անպատասխանատու վարքագծով և/կամ բացասական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության և գիտելիքի պակասով: Ջրոսաշրջությունը նաև ջրի մեծ սպառում և արտանետումների մեծ ծավալ ունեցող բնագավառ է: Բնագավառում ծավալվող որոշ գործողությունների ընթացքում մեծ քանակությամբ գրունտային ջրերի օգտագործումը կարող է առաջացնել երաշտ, ինչը իր հերթին կրեթի կենսաբազմազանության կորստի: Նույնիսկ ավելին, մոտակա գետեր, լճեր և ծովեր չմշակված թափոնների արտանետումը կարող է հանգեցնել էֆտրոֆիկացիայի՝ աղտոտմանը ջրամուղներով, ինչպես նաև ջրի մեջ մեծ քանակությամբ պաթոգեն՝ հիվանդաբեր նյութեր ներմուծելով: Ջրոսաշրջային ինդուստրիայի կողմից թափոնների արտանետումը կարող է առաջացնել մեծ բնապահպանական խնդիրներ:

Ջրոսաշրջության սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները ներառում են մարդկանց ներհոսքը և որպես հետևանք առաջացող սոցիալական դեգրադացիա՝ ազդեցությունները տեղական համայնքի և մշակութային արժեքների վրա: Ինտենսիվ զբոսաշրջային գործունեությունը կարող է առաջացնել աշխատանք և ձեռնարկատիրական հնարավորություններ փնտրող մարդկանց ներհոսք, որոնք սակայն կարող են այդպես էլ չգտնել համապատասխան աշխատանք: Եկամուտի և աշխատանքի անսպասելի կորուստը կարող է նաև տեղի ունենալ ճգնաժամերի ժամանակ, եթե տնտեսությունը դիվերսիֆիկացված /բազմազանացված/ չէ և հիմնվում է միայն զբոսաշրջության վրա: Երբ տեղի է ունենում զբոսաշրջության զարգացում՝ տնտեսական շահույթը հիմնականում անհավասար է բաշխվում տեղի համայնքի ներկայացուցիչների միջև: Արտաքին ներդրումների պարագայում շահույթի մեծ մասը կարող է տեղափոխվել հետ՝ այն երկիր, որտեղից արվել է ներդրումը: Այսպիսով, զբոսաշրջությունը կարող է իրականում ավելացնել անհավասարությունը համայնքի ներսում և հետևաբար՝ հարաբերական աղքատությունը:

Ջրոսաշրջությունը ունի համալիր ազդեցություն մշակութային արժեքների վրա: Ջրոսաշրջային գործունեությունը կարող է հանգեցնել սերունդների հակամարտության, ինչպես նաև ազդել գեներ-

րային հարաբերությունների վրա: Ավանդական սովորությունները և միջոցառումները ևս կարող են ազդեցություն կրել զբոսաշրջիկների նախապատվություններից: Զբոսաշրջության զարգացումը կարող է բերել նրան, որ տեղական համայնքները կկորցնեն իրենց հողից և ռեսուրսներից օգտվելու և սրբավայրեր այցելելու հնարավորությունները:

Այսպիսով՝ կայուն զբոսաշրջությունը բոլորի շահերից է բխում: Եթե նկատի ունենանք, որ զբոսաշրջային այցելությունների մեծ մասը կատարվում է բնական և մշակութային առումով հիշարժան վայրեր, ինչը բերում է զգալի եկամուտ, ապա ակնհայտ է դառնում, որ կան նաև մեծ հնարավորություններ այդ ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման մեջ ներդրումներ կատարելու համար: Ի հավելումն այն ջանքերի, որոնք գործադրվում են ստանալիք օգուտը առավելագույնին հասցնելու համար, անհրաժեշտ է ջանքեր գործադրել կենսաբանական բազմազանության վրա զբոսաշրջային ոլորտի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

Օգուտ, այլ ոչ թե վնաս բերելու համար զբոսաշրջությունը պահպանվող տարածքներում պետք է մանրակրկիտ պլանավորվի և ճիշտ կառավարվի: Այս համատեքստում *Կենսաբանական բազմազանության մասին* միջազգային կոնվենցիայի *Շահագրգիռ կողմերի համաժողովը* կազմել և տարածել է «Խոցելի ցամաքային, ծովային և ափամերձ էկոհամակարգերում և մեծ կարևորության կենսաբանական բազմազանության բնական միջավայրերում և պահպանվող տարածքներում՝ ներառյալ փխրուն ափամերձ և լեռնային էկոհամակարգերում կայուն զբոսաշրջության զարգացման միջազգային ուղեցույց կանոններ» /Հավելված 1. ներկայացված է պաշտոնական օրինակները անգլերենով/



## 6. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները՝ ընդհանուր պատկերացում

### 6.1. Հայաստանի կենսաբազմազանության համառոտ նկարագրություն

Հայաստանի տարածքն ունի բարդ երկրաբանական կազմություն և կտրտված ռելիեֆ: Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է, ամենացածր կետը գտնվում է հյուսիսում՝ Դեբեդ գետի ափին, ծովի մակերևույթից 375 մ բարձրության վրա, իսկ ամենաբարձր կետը Արագածի հյուսիսային գագաթն է՝ 4095 մ: Հարաբերական բարձրությունները տատանվում են 1500-2000 մ-ից մինչև 3700 մ: Տարածքի միջին բարձրությունը կազմում է 1850 մ: Բարձրությունների մեծ տատանումը կարևոր գործոն է կլիմայի և լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականության ձևավորման գործում:

Հայաստանը հնագույն քաղաքակրթության կենտրոններից մեկն է՝ իր յուրօրինակ բնությամբ ու պատմամշակութային ժառանգությամբ: Երկրի աշխարհագրական դիրքը, երկրաբանական բարդ կառուցվածքը, բարձունքային գոտիականությունը, բուսականության աշխարհների տարբեր նահանգների սահմանագծում գտնվելը նպաստել են հարուստ կենսաբազմազանության և տարբեր տիպի բնական էկոհամակարգերի ձևավորմանը: Չնայած իր փոքր տարածքին (29,74 հազ. կմ<sup>2</sup>) Հայաստանում տարածված են յոթ տարբեր լանդշաֆտային տիպեր՝ իրենց բնորոշ համակեցությունների, բուսական ու կենդանական տեսակների ինքնատիպ բազմազանությամբ: Հանրապետության տարածքի վրա հայտնաբերված են մոտ 3500 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից 536-ը՝ ողնաշարավորներ: Ցածրակարգ բույսերի և միկրոօրգանիզմների քանակությունն անցնում է մի քանի տասնյակ հազարից: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանը աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ ավելի քան 100 տեսակ 1 կմ քառակուսու վրա:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի, կենսաբանական բազմազանությունը սահմանվում է որպես ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը:

Հայաստանի կենսաբազմազանությունը հարուստ է տնտեսապես արժեքավոր, հազվագյուտ, ռելիկտ և էնդեմիկ տեսակներով: Օգտակար բույսերից առանձնակի կարևորություն ունեն ագրոկենսաբազմազանության խմբին պատկանող վայրի բույսերը, որոնց կարևոր բաղադրիչ մասն են կազմում մշակովի բույսերի վայրի ցեղակիցները: Հայաստանը համարվում է վայրի ցորենի, աշորայի, գարու և այծակնի տեսակների համար գլոբալ կենտրոն: Հայաստանից առաջացած ցորենի շատ տեսակներ տարածվել են ամբողջ աշխարհում: Այստեղ դեռևս պահպանվել են նաև մի քանի ընտանի կենդանիների վայրի ցեղակիցները:

Հայաստանի ֆլորայի էնդեմիկ տեսակների թիվը կազմում է 106, որը Հայաստանի բուսական աշխարհի տեսակային ընդհանուր բազմազանության մոտ 3%-ն է, իսկ ցամաքային ֆաունայինը՝ 329, որոնցից 316-ը՝ անողնաշարավորներ են:

Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդարար, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Կենսաբազմազանության օգտագործումը հանրապետությունում հիմնականում ընթացել է առանց հաշվի առնելու կենսապաշարների վերարտադրության հնարավորությունները բնական պայմաններում: Օգտագործման այսպիսի մոտեցման, ինչպես նաև ապրելավայրերի յուրացման արդյունքում, աստիճանաբար տեղի է ունեցել առանձին տեսակների թվաքանակի նվազում և նույնիսկ որոշ տեսակների ոչնչացում, որն էլ բերել է կենսաբազմազանության ընդհանուր աղքատացման: Այս երևույթները ավելի ակտիվ են ընթացել վերջին հարյուրամյակում կապված շրջակա միջավայրի արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, էներգետիկ և այլ աղտոտվածությունների մեծացման, ինչպես նաև անտառների, արոտավայրերի և այլ էկոհամակարգերի ինտենսիվ շահագործման հետ: Իրավիճակն ավելի սրվեց վերջին տարիների քաղաքական և սոցիալ-տնտեսական վերակառուցումների ընթացքում՝ կենսաբանական ռեսուրսների չկարգավորված օգտագործման պատճառով: Արդյունքում՝ որոշ բնակմիջավայրեր էապես դեգրադացվել են (ներառյալ անտառները, լեռնային արոտավայրերը և գերխոնավ տարածքները), իսկ մի շարք տեսակներ կանգնած են անհետացման եզրին:

Կենսաբազմազանությանը սպառնացող հիմնական վտանգները ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են մարդածին գործոնների ազդեցության հետ: Հիմնական վտանգող պրոցեսներն են. (I) բնակմիջավայրի կորուստը և փոփոխությունը, (II) կենսառեսուրսների գերօգտագործումը, (III) աղտոտումը, ներթափանցված /ինտրոդուցված/ օտարածին տեսակների ազդեցությունը, (IV) կլիմայի փոփոխությունը և այլն:

Բնական և մարդածին ազդեցությունների պատճառով Հայաստանում առկա բուսատեսակների գրեթե կեսը առավել կամ պակաս չափով պահպանության կարիք ունի: ՀՀ բույսերի Կարմիր գրքում (1988թ.) ընդգրկված են 386 տեսակներ կամ ֆլորայի 12%-ը: Նշված տեսակներից 61-ը ընդգրկված են նախկին ԽՍՀՄ կարմիր գրքում: 35 արժեքավոր բուսատեսակներ իսպառ անհետացել են Հայաստանի տարածքից, իսկ այժմ անհետացման եզրին են գտնվում մի շարք բուսատեսակներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Ներկայումս Հայաստանում հանդիպող անողնաշար և ողնաշարավոր կենդանիներից մոտ 300 տեսակներ համարվում են անհետացող կամ հազվադեպ հանդիպող տեսակներ: Հանրապետության Կենդանիների Կարմիր գրքում գրանցված են միայն ողնաշարավոր կենդանիների 99 տեսակներ (ձկների-2, երկկենցաղների-1, սողունների-11, թռչունների-67 և կաթնասունների-18 տեսակներ), որոնցից 39-ը գրանցված է ԽՍՀՄ-ի, 6-ը՝ Միջազգային Կարմիր գրքերում: Հանրապետության անողնաշարավորների ֆաունայի 48 ներկայացուցիչներ գրանցված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում:

Կաթնասունների մեջ թվարկածներից 7 տեսակների գոյատևումը առավել վտանգված է Հայաստանում: Սրանց թվին են պատկանում առաջավորասիական ընձառյուծը /*Panthera pardus*/, հայկական մուֆլոնը /*Ovis orientalis*/, բեզոարյան այծը /*Capra aegagrus*/, անդրկովկասյան գորշ արջը /*Ursus arctos*/, հարավուսական խայտաքիսը (*Vormela peregusna*), ջրասամույրը (*Lutra Lutra*), մանուլը (*Felis manul*):

Ներկայումս ՀՀ ՉԱԱ Կենդանաբանության, Հիդրոէկոլոգիայի և Բուսաբանության ինստիտուտների կողմից իրականացվում է ՀՀ բույսերի և կենդանիների նոր Կարմիր գրքերի կազմման աշխատանքներ, որը պետք է ավարտվի 2009 թվականին: Նախնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր Կարմիր գրքում կընդգրկվեն անհամեմատ ավելի շատ բույսերի և կենդանիների տեսակներ:

## 6.2 Բնության հատուկ պահպանվող տարածքների դերը կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման գործում

ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի հիմնադրույթներում (հոդ. 9) որպես ռազմավարական առաջնահերթ ուղղություն առանձնացվել է կենսաբազմազանության պահպանությունը բնական պայմաններում (in situ), որն իր լիարժեք արտացոլումն է ստանում բնության հատուկ պահպանվող տարածքներում (այսուհետ՝ ԲՀՊՏ): ԲՀՊՏ-ները ունեն համազգային արժեք և կոչված են պահպանելու եզակի, տիպիկ բնական համալիրները, օբյեկտները և դրանց գենոֆոնդը:

Բնապահպանության հիմնական խնդիրներից մեկը հանդիսանում է կենսաբազմազանության՝ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների արեալների պահպանությունը՝ համաձայն Բեռնի կոնվենցիայի: Բույսերի և կենդանիների հազվագյուտ և անհետացող շատ տեսակներ ունեն նեղ հարմարվողականություն, որոնց պահպանման լավագույն ձևերից մեկը ամբողջությամբ բնորոշ էկոհամակարգերի պահպանումն է ԲՀՊՏ-ում:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրում /1999թ./ հատկապես կարևորվում է ԲՀՊՏ-ների օպտիմիզացիայի խնդիրը կենսաբազմազանության պահպանության ապահովման գործում: Ռազմավարության մեջ ամրագրված է, որ հազարամյակների ընթացքում կենսաբազմազանության բաղադրիչների ինտենսիվ օգտագործումը այնպիսի տարածքների համար, ինչպիսին Հայաստանն է, բնության և նրա բաղադրիչների պահպանության ֆինանսական, վարչարարական, իրավական և այլ մեխանիզմների հետ մեկտեղ կայուն երաշխիք են հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածքները, որոնց միջոցով ապահովվում է.

- կենսաբազմազանության, հատկապես հազվագյուտ և անհետացող տեսակների in-situ պահպանությունը
- էկոհամակարգերի և տեսակների մոնիթորինգը
- էկոհամակարգերի և տեսակների վերականգնման և վերարտադրության համար բարենպաստ նախադրյալները
- բնական կենսապաշարների կանոնակարգված և նորմավորված օգտագործումը:

Բացի կենսաբազմազանության պահպանության առանձնահատուկ խնդիրների լուծումից, ԲՀՊՏ-ների միջոցով իրականացվում են նաև բնապահպանական և սոցիալական այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք են.

- շրջակա միջավայրի ջրապաշտպան, կլիմայակայարգավորիչ, հակաէրոզիոն, անտառապաշտպան, հողապաշտպան և այլ գործունեություն
- ռեկրեացիոն ռեսուրսների պահպանություն և կայուն օգտագործում
- էկոկրթություն և դաստիարակություն
- պատմամշակութային ժառանգության /արժեքների/ պահպանություն և օգտագործում:

## 6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պատմական համառոտ ակնարկ

Կենսաբազմազանության in-situ պահպանությունը և կայուն օգտագործման մոտեցումները հնագույն ժամանակներից դրսևորվել են հայ ժողովրդի տնտեսավարման ավանդական ձևերում: Դրանց առանձին տարրեր արտահայտվել են պաշտամունքի առարկա դարձնելով տարբեր բուսատեսակներ՝ կենի, սոսի, կաղնի, ընկուզենի և դրանց շրջակայքում սահմանելով պահպանության և օգտա-

գործնական առանձնահատուկ պայմաններ: Դեռևս վաղ միջնադարի հայոց պատմիչների կողմից հիշատակվում է այն մասին, որ IV դարում Հայոց թագավոր Խոսրովի ժամանակ ներկայիս «Խոսրովի անտառ» պետարգելոցի տարածքում հիմնվել է արհեստական անտառ, որտեղ բնակեցվել են տարբեր տեսակի կենդանիներ և այդ անտառներն օգտագործվել են որպես թագավորական որսատեղեր և սահմանափակվել է այդ տարածքների ազատ օգտագործումը:

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների ներկա ցանցի ձևավորումը սկսվել է 1958 թվականից, երբ ստեղծվեցին «Խոսրով», «Դիլիջան» և «Շիկահող» պետական արգելոցները, իսկ Գյումրի, Գյուլագարակի, Ջերմուկի, Հերիերի անտառայտությունները, ինչպես նաև ՀՀ տարածքում կենու, արջընկուզենու, սոսու, հունական ընկուզենու, տանձենու, խնձորենու, գիհու և հոնի վայրի ծառաթփային տեսակների տարածքները հայտարարվեցին պետական արգելավայրեր: 1959թ. պետական արգելավայրեր հայտարարվեցին նաև Ծաղկաձորի բանքսի սոճու պուրակը, Գոռավանի ավազուտները, Արագածի հարավային գագաթամերձ ալպյան մարգագետինները և «Քարե լիճը», Հանքավանի մրտավարդենու աճելավայրերը և Սևանա լճի ազատված հողագրունտները: Հետագայում, կենսաբազմազանության պահպանությունը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակներով ԲՀՊՏ-ների ցանցը ընդլայնվեց՝ ստեղծվեցին նոր արգելոցներ և արգելավայրեր:

1995-ից ՀՀ պետարգելոցները և ազգային պարկերը ընդգրկված են ՀՀ բնապահպանության նախարարության կազմում: Մինչև 2001թ. վերջերը Հայաստանի ԲՀՊՏ-ների ցանկում ընդգրկված էին 5 պետական արգելոցներ («Դիլիջան», «Խոսրով», «Շիկահող», «Էրեբունի» և «Սև լիճ»), 22 պետական արգելավայրեր և մեկ ազգային պարկ («Սևան» ազգային պարկ): Հաշվի առնելով որոշ ԲՀՊՏ-ների կարգավիճակների անհամապատասխանությունը Հանրապետության առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ, ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին դրանց կարգավիճակների փոփոխման որոշումներ. «Սև լիճ» պետական արգելոցի կարգավիճակը փոփոխվեց արգելավայրի, իսկ «Դիլիջան» պետարգելոցի կարգավիճակը՝ ազգային պարկի:

Ներկայումս հանրապետությունում գործում են 3 պետական արգելոցներ («Խոսրովի անտառ», «Շիկահող», «Էրեբունի»), 25 պետական արգելավայրեր և երկու ազգային պարկ («Սևան» և «Դիլիջան»):

#### **6.4. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների ներկա համակարգը և հեռանկարային զարգացումը**

Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 308 հազ. հա, որը հանրապետության տարածքի մոտ 10%-ն է, իսկ առանց Սևանա լճի մակերեսի այն կազմում է հանրապետության տարածքի մոտ 6%-ը: Ընդ որում, այս տարածքների 54%-ը, իսկ առանց Սևանա լճի մակերեսի՝ 91%-ը զբաղեցնում են անտառային էկոհամակարգերը:

ԲՀՊՏ-ներում պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70%-ը, որոնց թվում հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, վտանգված և էնդեմ տեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի զենետիկ ռեսուրսները:

Հայաստանի Հանրապետությունում ԲՀՊՏ-ների կազմակերպման, կառավարման, պահպանության, օգտագործման և վերականգնման բնագավառներում իրավական հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով /2006թ./ և իրավական այլ ակտերով:

Համաձայն օրենքի «...բնության հատուկ պահպանվող տարածքները ցամաքի (ներառյալ՝ մա-

կերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով առանձնացված տարածքներ և առանձին բնական օբյեկտներ են, որոնք բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջային, զեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ» /հոդված 1/:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի՝ դասակարգվում են.

ա) ըստ նշանակության՝ միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների,

բ) ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

Տարբեր կատեգորիաներ ունեցող բնության հատուկ պահպանվող տարածքները կարող են միավորվել էկոլոգիական ցանցում՝ էկոլոգիական միջանցքների և պահպանական գոտիների միջոցով:

Համաձայն Բնության պահպանության միջազգային միության ( IUCN, The World Conservation Union) ուղեցույցների՝ բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են.

Ia. STRICT NATURE RESERVE - Խիստ պահպանության ռեժիմով բնական արգելոց /անխաթար էկոհամակարգեր/, օգտագործվում է գիտական նպատակներով: Այս կատեգորիային պատկանում են ՀՀ արգելոցները:

Ib. WILDERNESS AREA – Խիստ պահպանության ռեժիմով տարածք /բնության տեղամաս/ - օգտագործվում է հիմնականում վայրի բնության պահպանության նպատակով:

II. NATIONAL PARK - Ազգային պարկ - էկոհամակարգերի պահպանություն, զբոսաշրջություն: Այս կատեգորիային պատկանում են ՀՀ ազգային պարկերը:

III. NATURAL MONUMENT - Բնության հուշարձան - բնության տեսարժան օբյեկտների /համալիրների/ պահպանություն: Այս կատեգորիային պատկանում են ՀՀ տարածքի բնության հուշարձանները, որոնց հաշվառումը և ցանկի հաստատումը ընթացքի մեջ են:

IV. HABITAT/SPECIES MANAGEMENT AREA - Արգելավայր - Տեսակների և դրանց ապրելավայրերի պահպանություն ակտիվ կառավարման միջոցով: Այս կատեգորիային պատկանում են ՀՀ տարածքի արգելավայրերը:

V. PROTECTED LANDSCAPE/SEASCAPE – Ցամաքային և ծովային լանդշաֆտների պահպանություն, ռեկրեացիա:

VI. MANAGED RESOURCE PROTECTED AREA - Կառավարվող ռեսուրսներով պահպանվող տարածքներ – ռեսուրսների խնայողական օգտագործում:

**Պետական արգելոցը** գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, զեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և /կամ/ հանրապետական նշանակություն ունեցող տարածք է, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության: Արգելոցները ստեղծված են ապահովելու բնական միջավայրի և կենսաբազմազանության պահպանությունը և դրանց գիտական ուսումնասիրությունը:

Պետական արգելոցի տարածքում իրականացվում են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություններ, պահպանություն, պաշտպանություն, հաշվառում, գույքագրում, մոնիթորինգ, ինչպես նաև զբոսաշրջության նպատակներով դրանց օգտագործում:

Գործում են 3 պետական արգելոցներ Խոսրովի անտառ, Շիկահողի, Էրեբունի, որտեղ մարդկային գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական աշխատանքներով, ինչպես նաև սահմանափակ քանակությամբ գիտաճանաչողական էքսկուրսիաներով:

**Ազգային պարկը** բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք է, որը, բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ, կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային եւ տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

Ազգային պարկերը ապահովում են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրությունը, պահպանությունը, պաշտպանությունը, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը, ինչպես նաև բնական և մշակութային լանդշաֆտների բարենպաստ զուգորդման շնորհիվ դրանց օգտագործումը ռեկրեացիոն, պատմամշակութային ու գիտական նպատակներով:

Հանրապետությունն ունի երկու ազգային պարկ՝ «Սևան» և «Դիլիջան»:

**Պետական արգելավայրը** գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեքներ կայացնող տարածք է, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը: Արգելավայրի տարածքում սահմանափակվում կամ արգելվում է ցանկացած գործունեություն, որը հակասում է արգելավայրի նպատակային նշանակությանը: Արգելավայրերի առանձնացման հիմնական նպատակներն են ինչպես առանձին հազվագյուտ, անհետացող և գիտաճանաչողական բարձր արժեք ունեցող էկոհամակարգերի և առանձին տեսակների պահպանությունը, այնպես էլ ակտիվ տնտեսական օգտագործվող էկոհամակարգերի ռեսուրսային արժեքների վերականգնումը:

Հանրապետությունում կազմավորվել են 1950-80-ական թվականներին և ներկայումս կան 25 արգելավայրեր:

**Բնության հուշարձանները** գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են, որոնց ցանկը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Սակայն այսօր ՀՀ կառավարության կողմից բնության հուշարձանների հաստատված ցանկ դեռևս չկա: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ավարտվել է բնության հուշարձանների գույքագրման և անձնագրավորման աշխատանքները, որոնց ցանկի հաստատման գործընթացը գտնվում է ընթացքի մեջ:

Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային համալիրների և նրանց առանձին բաղադրամասերի ծագումնաբանական, ձևաբանական և այլ հատկանիշների մեծ տարբերությունները ստեղծել են բնության կենդանի և անկենդան հուշարձանների հարուստ բազմազանություն: Դրանցից շատերն ունեն միջազգային մեծ նշանակություն և համարվում են միջազգային չափանմուշներ (ետալոններ): Բնության կենդանի հուշարձանների շարքին կարելի է դասել դարավոր ռելիկտային ծառատեսակները, որոնցից են լայնատերև սոսիները (Ծաղկավան գյուղի, Ծավ գետի հովտի, Մեղրիի շրջակայքի), Հուդայի ծառը և այլն, իսկ անկենդան հուշարձանների շարքին՝ նորագույն հրաբխային գոյացումները, որոնք հանդիպում են Ազատ, Արփա, Հրազդան, Որոտան գետահովիտներում և իրենցից ներկայացնում են բազալտի սյունաձև և ճառագայթաձև գոյացումներ, ինչպես նաև Գեղամա և Վարդենիս լեռնազանգվածների յուրօրինակ հրաբխային կոները, Երևանի հարավ-արևելյան տարածքում չորրորդական ժամանակաշրջանի տարագույն կավերի վրա ձևավորված 8 հազար հա «պալեոհիդրոմորֆ ալկալի կապակցված», ինչպես նաև Արարատյան դաշտավայրում ձևավորված սողային հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողերը, ռելիեֆի հողմահարման եզակի գոյացումներ (Գորիսի բնական հողա-

բուրգերը և տարբեր հրաշակերտ գոյացումները), բազմաթիվ բարձրլեռնային լճակներ, հանքային և քաղցրահամ աղբյուրներ, ջրվեժներ, սահանքներ և այլն:

ԲՀՊՏ-ների /բացառությամբ բնության հուշարձանների/ կանոնադրություններով ամրագրված պահանջների կատարումը՝ համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի /2001թ./, ՀՀ կառավարության որոշմամբ ապահովվում են պետական ոչ առևտրային կազմակերպությունների /ՊՈԱԿ/ կողմից, որոնց սեփականության իրավունքով հանձնվում է պետական սեփականություն հանդիսացող գույքը և անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում են շենքերը, շինությունները, ինչպես նաև համապատասխան հողատարածքը: ԲՀՊՏ-ների կանոնադրական պահանջները կատարող ՊՈԱԿ-ը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական (էկոկրթական) կազմակերպություններ են, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ օրենքներին, իրենց կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան: ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված տրանսֆերտներից և կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների իրականացման ու տարբեր ծառայությունների մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից: Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է իր կանոնադրական նպատակներին համապատասխան:

Լանդշաֆտային և կենսաբանական հարուստ բազմազանություն և բնական էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ակտիվ ճնշում ունեցող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, պահպանվող տարածքների նշված քանակությունը խիստ անբավարար է՝ հաշվի առնելով, որ այդ ցանցի ստեղծման հիմքում չեն դրված լանդշաֆտների ձևավորման և զարգացման երկրա-աշխարհագրական մի շարք հիմնարար օրինաչափություններ, ինչպիսիք են տարածքների բարձունքագոտիական բաշխվածությունը և փոխկապակցվածությունը, տարածքների գետաավազանային ամբողջականությունը և այլն: Վերջիններիս անտեսման արդյունքում ներկա պահպանվող տարածքների գերակշիռ մասը անտառային էկոհամակարգեր են: ԲՀՊՏ-ների ցանցում չեն ներառված կամ թույլ են ներկայացված Հայաստանի համար սոցիալ-տնտեսական և բնապահպանական, այդ թվում նաև կենսաբազմազանության պահպանության առումով, տափաստանային, մարգագետնային և մարգագետնատափաստանային էկոհամակարգերը:

Ներկայումս Հայաստանում կազմավորման ընթացքում են գտնվում մի շարք նոր ԲՀՊՏ-ներ: Դրանց թվում են զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող «Արևիկ», «Ջերմուկ», «Գնիշիկ», «Արփի լիճ» ազգային պարկերը և «Ձանգեզուր» արգելավայրը: Բացի դրանից, իրականացվում են Հայաստանի բնության հուշարձանների գույքագրման, անձնագրավորման, ցանկի նախապատրաստման և հաստատման աշխատանքները:

# 7. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանվող տարրերը և զբոսաշրջության պոտենցիալը

## 7.1 Ընդհանուր նկարագրություն

Հայաստանում, որտեղ համեմատաբար ոչ մեծ տարածության վրա կան բազմաթիվ բնական և պատմամշակութային հուշարձաններ՝ հնագույն ժայռապատկերներից, հեթանոսական սրբատեղերից մինչև միջնադարյան տաճարներ, հարուստ ֆլորա և ֆաունա, անկասկած, գոյություն ունեն իրական հեռանկարներ էկոլոգիական տուրիզմի զարգացման համար: Տարվա տաք եղանակին հայկական սարերում իսկապես կարելի է հանդիպել յոթ գարուններ: Ընդամենը մի քանի ժամում ձյունածածկ գագաթներից կարելի է հասնել մերձարևադարձային հովիտներ: Լինելով լեռնային երկիր և ունենալով լանդշաֆտների ցայտուն արտահայտված բարձունքային գոտիականություն՝ Հայաստանը բնորոշվում է լանդշաֆտային և կենսաբանական մեծ բազմազանությամբ /տե՛ս 6.1. Հայաստանի կենսաբազմազանության համառոտ նկարագրություն/:

Գործող, կազմավորման ընթացքում գտնվող և հեռանկարային ԲՀՊՏ-ների ցանցը ընդգրկում է Հայաստանի բազմաբնույթ գեղատեսիլ լանդշաֆտային տիպերը: Բնության հրաշալիք Սևանա լճի բարձրլեռնային ունիկալ գեոհամակարգը, «Խոսրովի անտառ» պետարգելոցի բնական վիճակում գտնվող եզակի էկոհամակարգերը, «Դիլիջան» ազգային պարկի և «Շիկահող» պետարգելոցի յուրահատուկ լեռնաանտառային լանդշաֆտները, գահավեժ լեռնալանջեր, խոր կիրճերով կտրտված գետահովիտներ, բարձրադիր սարավանդակներ, քարքարոտ և մարգագետիններով ծածկված լեռնաշղթաներ, արագընթաց գետեր, ջրվեժներ, աղբյուրներ, քարանձավներ, գեղատեսիլ ժայռեր և քարափներ՝ ահա մեր պահպանվող տարածքների լանդշաֆտային առանձնահատկությունների ոչ լրիվ ներկայացումը :

Ապահովելով բնական միջավայրի և կարևոր տեսակների պահպանությունը, ԲՀՊՏ-ները առանձնանում են ինքնատիպ բուսական և կենդանական աշխարհով և ներկայացնում են ոչ միայն գիտական, այլև մեծ ճանաչողական հետաքրքրություն: Հողակլիմայական պայմանների խայտաբղետության և բազմազանության շնորհիվ, տեղանքի ռելիեֆից և այլ պայմաններից կախված, այս տարածքների կենսաբազմազանությունը առանձնանում է էնդեմիկ, այսինքն՝ միայն այստեղ ապրող, ռելիկտ՝ այսինքն՝ հնագույն ժամանակներից պահպանված, և հազվագյուտ տեսակների առատությամբ:

ԲՀՊՏ-ներում և նրանց հարող տարածքներում բազմաթիվ են զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող տարբեր դարաշրջանների հուշարձաններ՝ ամրոց/բնակատեղիներ, գյուղատեղիներ, վանական համալիրներ, եկեղեցիներ, դամբարանադաշտեր, գերեզմանոցներ և այլն: Բացի դրանից, բազմաթիվ են երկրաբանական հուշարձանները:

Հայաստանի ԲՀՊՏ-ների լանդշաֆտային և բնապատմական հարուստ բազմազանությունը թույլ է տալիս զարգացնել զբոսաշրջության ինչպես ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող, այնպես էլ նեղ մասնագիտացված բոլոր ձևերը /տե՛ս 8.5. Առաջարկվող զբոսաշրջության ձևեր/ և գրավել բնության այցելուների բացառապես բոլոր տեսակները /տե՛ս 8.6.1. Այցելուների նպատակային խմբերի բացահայտում/:

Պահպանվող տարածքների անմիջական մոտակայքում տեղակայված, յուրաքանչյուր գեղատեսիլ լեռնային գյուղ, իր անկրկնելի լանդշաֆտով, կենցաղածևով, լեռներում թաքնված և ճանապարհորդ-



ների համար միայն ոտքով հասանելի յուրահատուկ պատմամշակութային հուշարձաններով պոտենցիալ հետաքրքրություն է ներկայացնում զբոսաշրջության զարգացման համար, որի շրջանակներում կարելի է և հնարավոր է հաջողությամբ համատեղել ագրո-, էկո- և արկածային զբոսաշրջության էլեմենտները:

Բոլոր մարզերում կա մեծ հետաքրքրություն և ցանկություն ներգրավված լինելու էկոզբոսաշրջային գործունեության մեջ՝ գյուղական համայնքների, պաշտոնական կառույցների, պահպանվող տարածքների անձնակազմի և մասնավոր սեկտորի (փոքր հյուրանոցների, պանսիոնատների, ռեստորանների և այլ սեփականատերերի) ներկայացուցիչների կողմից: Կան բազմաթիվ հետաքրքիր մտքեր և հնարավորություններ, հայրենի բնաշխարհի և պատմությանը վերաբերող հիանալի գիտելիքներ, սեր հարազատ վայրերի հանդեպ, որը շատ կարևոր է զբոսաշրջիկներին ներկայացնելու համար: Սակայն բացակայում է զբոսաշրջային գործունեության փորձը, ժամանակակից միջազգային չափանիշների մասին պատկերացումը, ինչպես նաև տեղական զբոսաշրջային արդյունքի ձևավորման, գովազդի և առաջխաղացման համար գիտելիքները և տեխնիկական միջոցները:

## **7.2 «Սևան» ազգային պարկ**

«Սևան» ազգային պարկը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելյան հատվածում՝ Գեղարքունիքի մարզում: Շրջապատված է Գեղամա, Վարդենիսի, Սևանի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթաներով: Համաձայն «Սևան» ազգային պարկի 2007-2011թթ. կառավարման պլանի պարկի տարածքը, Սևանա լճի հայելու հետ միասին, կազմում է 1474.56 կմ<sup>2</sup> (147 456 հա), իսկ առանց լճի հայելու՝ 226.97 կմ<sup>2</sup> (22 697 հա): Պահպանման գոտու տարածքը կազմում է 3427.75 կմ<sup>2</sup> (342 775 հա):

Ազգային պարկի հիմնական տարածքը զբաղեցնում է Հայաստանի հրաշալիքներից մեկը՝ Սևանա լիճը, աշխարհի ամենաբարձր և ամենամեծ քաղցրահամ լճերից մեկը, հանրապետության և ընդհանրապես Հարավային Կովկասի խմելու ջրի եզակի պաշարատեղը: Լճի հնագույն Գեղամա կամ Գեղարքունյաց ծով անունը կապված է նույնանուն երկրի անվան հետ, որը, պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, կոչվում էր Հայկ Նահապետի ժառանգներից մեկի՝ Գեղամի անունով: Այդ երկրի տարածքը համապատասխանում էր ներկայիս Գեղարքունիք մարզի տարածքին:

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ՝ Արգիճին, Մասրիկը, Գավառագետը, Կարճաղբյուրը, Վարդենիսը, Ձկնագետը և ուրիշներ: Լճից սկիզբ է առնում միայն մեկ գետ՝ Հրազդանը:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1619 տեսակ՝ ծառեր, թփեր, խոտաբույսեր, բազմամյա, երկամյա ու միամյա բուսատեսակներ: Այստեղ հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ են: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի 3 էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանման գոտում դրանք 48-ն են): Ազգային պարկի տարածքում հանդիպող էնդեմիկ և հազվագյուտ բուսատեսակներից են՝ ոզնաթուփ գաբրիելյանի, գազ գյուկչայի, լրջուն Սևանի, արոսեցի հայաստանյան, կուժկոտրուկ վոլգյան և այլն: Ազգային պարկում և դրա պահպանման գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: Ջրից ազատված ափամերձ բուսականությունը կազմված է առավելապես սոճու, բարդու, չիչխանի, փշատենու և այլ տեսակների արհեստական անտառներից:

Սևանի ավազանի աշխարհագրական դիրքը, ինքնատիպ կլիման և բույսերի բազմազանությունը հարմարավետ միջավայր են ստեղծել կենդանական աշխարհի համար, որը բաժանվում է երկու խոշոր խմբերի՝ ջրային և ցամաքային: Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես արգելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, առափնյա ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները:

Սևանի ավազանում հանդիպում են 260 տեսակից ավելի թռչուններ՝ հայկական որոր, կարմիր բադ, խայտաբադ, կոնչան բադ, սև փարփար, կարմրակտուց սուզաբադ, սպիտակապոչ արծիվ, կիվիվ, ճահճաճուռակ և այլն: Անցյալում դրանցից 48-ը բնադրող էին: Այսօր նրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպանը, կարմրակտուց բադը, սպիտակագլուխ բադը (սավկան), մեծ սդոցակտուց բադը, մոխրագույն կռունկը և այլն, 60-ական թվականներին՝ Գիլլի լճի ցամաքելուց հետո պակասեցին: Պարկի տարածքում հանդիպող բնադրող թռչուններից են սև փարփարը, կոնչան բադը և հայկական որորը: Առափնյա ժայռերում պահպանվել են կարմիր բադերի բնադրավայրերը, հայկական որորների գաղութներ կան երկու փոքրիկ կղզիների վրա: Թռչունների ապրելավայրերը՝ Սևանա լիճը, առափնյա ճահճուտները և գետաբերանները խիստ տուժեցին լճի մակարդակի արհեստական իջեցումից: ՀՀ Կարմիր գրքում գրանցված թռչուններից ազգային պարկի տարածքում արձանագրված են հետևյալ տեսակները՝ մեծ ձկնկուլը, փոքր ձկնկուլը, մեծ սպիտակ տառետը, քաջահավը, սովորական ֆլամինգոն, կանչող կարապը, խայտաբղետ բադը, մոխրագույն բադը, ոտնացուպիկը և այլն: Դրանցից մեկը՝ Հայկական որորը էնդեմիկ տեսակ է:

Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, որոնցից են սպիտակափոր մողեսը, նաիրյան մողեսը, օձերից՝ սովորական և ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դողոշը, փոքրասիական գորտը, լճագորտը և Շելկովնիկովի ծառագորտը:

Լճի ձկների տեսակներից ամենաարժեքավորը Սևանի իշխանն է: Լճի մակարդակի իջեցման պատճառով իշխանի չորս ենթատեսակներից երկուսը իսպառ անհետացել են, մյուս երկուսը գտնվում են անհետացման եզրին: Մեծ արդյունագործական նշանակություն ունի 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգը: Լճից որսում են նաև Սևանի կողակը, կարասը, ինչպես նաև խեցգետինը: Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլունը, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ՝ միջատակերներ, կրծողներ, նապաստակներ, չղջիկներ, գիշատիչներ, սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ: Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտաքիսը, անտառային կատուն, բեզդարյան այծը):

Պարկն ունի 4 տարածքա-գործառնական գոտիներ՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն և տնտեսական, ինչպես նաև պահպանման գոտի, որն ընդգրկում է պարկի սահմանների և լճի ավազանը գոտևորող ջրբաժանների միջև ընկած տարածքները: Պարկն ունի 4 արգելոցային տարածքներ՝ Նորաշենի, Լիճք-Արգիչի, Գիլլի և Արտամիչի: Արտամիչի թերակղզին ազգային պարկի համեմատաբար լավ պահպանված տարածքն է, որը զբաղեցնում է 2142 հա մակերես: Այստեղ աճում են մոտավորապես 1000 տեսակի բարձրակարգ բուսատեսակներ, ներառյալ 94 ծառատեսակ և թփեր, ինչը ապահովում է էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների բնակատեղի:

«Սևան» ազգային պարկը ունի մեծ առողջարարական պաշարներ՝ Սևանա լճի ավազանի բարձր լեռնային կլիման, լեռնային մաքուր օդը, օպտիմալ ջերմաստիճանները, խոնավությունը, արևաշատությունը, ինտենսիվ ուլտրամանուշակագույն ճառագայթումը, հանքային բուժիչ ջրերը, գեղատեսիլ

լանդշաֆտները: Հանքային ջրերը՝ «Լիճքը» և «Սևանը» նպաստում են աղեստամոքսային տրակտի բուժմանը: Մարտունի, Ջուլաքար, Ծովինար բնակավայրերի մոտ կան տորֆի հանքավայրեր: Լիճք—Մարտունի, Գավառ-Նորադուզի և Վարդենիսի հատվածներում, հաշվի առնելով բնական բուժիչ պաշարների առկայությունը (հանքային ջուր, ցեխ և տորֆ), կարելի է զարգացնել շուրջտարյա գործունեությամբ առողջարանային համալիրներ:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տարածքներում հաշվառված է պատմության և մշակույթի 1485 անշարժ հուշարձան: Այստեղ կարելի է հանդիպել նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերի, ամրոցների, բնակավայրերի, հանքավայրերի հետքեր, սեպագիր արձանագրություններ: Լճից ազատված տարածքներից հայտնաբերվել են մինչև հինգհազարամյա հնության դամբարաններ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջնադարյան ճարտարապետական հուշարձանները՝ վանքային համալիրները, եկեղեցիները, մատուռները, խաչքարերը, ազգագրական տները, աշտարակները, կամուրջները, քարավանատները, ջրաղացները, ձիթհանները, ջրանցքները և ջրաբաշխական համակարգերը, ժայռապատկերների խմբերը, ժայռակերտ պաշտամունքային համալիրները և այլն: Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 15-րդ հազարամյակից մինչև մ.թ. XX դարը ընկած ժամանակահատվածը: Շատ ուշագրավ են նաև բնական հուշարձանները՝ խառնարանային լճերը, խարամային կոները, ընդարձակ «քարային ծովերը»: Այս ամենի առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ կազմակերպել պատմա-մշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էթնոգրաֆիկ զբոսաշրջության տարբեր ձևեր:

«Սևան» ազգային պարկը մեծ հետաքրքրություն է ներկայացնում թռչունների դիտարկման տեսանկյունից: Հիմնական գրավչությունը ճայերի կղզում գոյություն ունեցող հայկական որորի պոպուլյացիան է: Արտասահմանյան թռչնադիտողների համար հետաքրքրություն են ներկայացնում ազգային պարկի հետևյալ տարածքները՝ Լճաշեն գյուղին հարակից լճի ծովախորշը, Նորադուզի հրվանդանը, Լիճք արգելոցային գոտում գտնվող լճակը, Մասրիկի գետաբերանը, Գիլլի լճի նախկին տարածքը, Արեգունու լեռնաշղթայի լանջերը:

«Սևան» ազգային պարկում զբոսաշրջային երթուղիները կարող են ընդգրկել նաև պարկի արգելոցային գոտիները՝ ճանաչողական էքսկուրսիաների տեսքով, ինչպես նաև Սևանա լճի ավազանը գոտևորող լեռնաշղթաները, մասնավորապես Գեղամա հրաբխային բարձրավանդակը և Սելիմի լեռնանցքը:

### **7.3 «Դիլիջան» ազգային պարկ**

«Դիլիջան» ազգային պարկի տարածքը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում՝ Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Գտնվում է ծովի մակարդակից 1000-2200 մ բարձրության սահմաններում: Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2007-2011թթ. կառավարման պլանի, պարկի տարածքը կազմել է 33765 հա, իսկ պահպանման գոտու տարածքը 11063 հա:

Պարկում պահպանության են վերցված կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ ֆաունան և պատմա-ճարտարապետական ու բնության եզակի հուշարձանները: Պարկի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ և գետակներ, որոնք սնում են հիմնական ջրային զարկերակ՝ Աղստև գետը: Պարկի տա-

րածքը հարուստ է նաև գեղատեսիլ լճերով, որոնցից ամենանշանավորներն են Պարզ լիճը և Գոշա լիճը:

Պարկի տարածքը բաժանվում է երեք տարածքա-գործառնական գոտիների՝ արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական:

Դիլիջան քաղաքը լեռնակլիմայական բալնեոլոգիական հայտնի առողջարան է: Բուժվում են թոքերի ու ոսկրի տուբերկուլյոզով և ստամոքսաաղիքային համակարգի հիվանդություններով տառապողները: Ազգային պարկի տարածքում կան բազմաթիվ հանքային աղբյուրներ: Հայտնի են «Դիլիջան» և «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջրերը: Աղբյուրների ելքերը կարելի է հետազայում բարեկարգել և ընդգրկել զբոսաշրջային ուղիներում: Բուժիչ տորֆի շերտեր կան Ֆիոլետովո և Լերմոնտովո համայնքների մոտ: Սարգի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները՝ մեղմ կլիման, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդը, հանքային բուժիչ ջրերը, անտառները, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհը, չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային զբոսաշրջության զարգացման համար:

Պարկի բուսական աշխարհը կազմված է մոտ 900 բուսատեսակներից, որոնցից 35-ը գրանցված է ՀՀ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Դրանց թվում կան հազվագյուտ խոլորձներ, հիրիկներ, արքայապսակ և այլն: 21822 հա-ի վրա տարածված են հաճարենու և կաղնուտա-բոխուտային մեզոֆիլ անտառները, որոնք որոշ տեղերում խառնված են ընկուզենու, սոճու, իսկ վերին սահմաններում կեչու ծառատեսակներով: Անտառաթփուտներում հանդիպում են ցախակեռաս, հոն, ծորենի, գլեռ, մասուր և այլն: Պարկի անտառային հատվածում զգալի տարածք են զբաղեցնում վայրի պտղատուները: Հիշատակման են արժանի խնձորենին, տանձենին, բալենին, ընկուզենին, հոնին, շլորենին, սզնին, մամխին, տխլենին, հաղարջենին, կոկոշենին, մոշենին, գլեռենին, չիչխանը, փռչնին, որոնց անվանումներով էլ կոչվում են համապատասխան տարածքները՝ Շլորկուտ, Տանձուտ, Խնձորկուտ, Տխլկուտ, Ընկուզի ձոր, Ձկուտ և այլն: Պարկի ֆլորայում մեծ թիվ են կազմում օգտակար տեսակները՝ սննդում օգտագործվող կերային, դեղաբույսեր, մեղրատու, յուղատու, ներկատու բույսեր: Արգելոցի տարածքում է Հայաստանի համար ռելիկտային՝ անցյալ երկրաբանական դարաշրջաններից գրեթե անփոփոխ պահպանված տեսակ հանդիսացող Ախնաբատի կենու լավ պահպանված պուրակը:

Պարկի ֆաունան ևս ունի հարուստ տեսական կազմ: Այստեղ հանդիպում են երկկենցաղների 4, սողունների 16, թռչունների 147, կաթնասունների 43 և ձկների 5 տեսակներ:

Ձկներից կարելի է նշել կարմրախայտը, Քուռի բեղլուն, Քուռի լերկակաձուկը և այլն:

Թռչուններից՝ կովկասյան մարեհավը, կասպիական հնդկահավը, քարարժիվը, գառնանգղը, լորը, գորշ կաքավը, վայրի աղավնիները, ջրլող թռչունների, ճնճղուկազգիների, փայտփորագրիների, այծկիթանմանների, բվանմանների, կկվանմանների, ճուռականմանների ներկայացուցիչները:

Կաթնասուններից այստեղ բնակվում են կովկասյան գորշ արջը, գայլը, աղվեսը, խլուրդը, գորշուկը, կզաքիսը, աքիսը, լուսանը, անտառակատուն, ազնվացեղ եղջերուն, այծյամը, սկյուռը, քնամուկը, նապաստակը, 4 տեսակի չղջիկներ և այլն: Հաճախակի հանդիպում են վարազը և կխտարը, իսկ գետամերձ տարածքներում՝ նաև ՀՀ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում գրանցված ջրասամույրը:

Սողուններից՝ կրիան, մողեսների և օձերի տարբեր տեսակներ: Էնդեմիկ տեսակներն են՝ հայկական մողեսը, Դալի մողեսը, Ռոստոմբելի մողեսը. ՀՀ Կարմիր գրքում գրանցված է անդրկովկասյան սահնօձը: Երկկենցաղներից հանդիպում են կանաչ դողոշը, լճագորտը, Շելկովնիկովի ծառագորտը, անդրկովկասյան գորտը:

Տարածքը հարուստ է բնության ջրաբանական, երկրաբանական հուշարձաններով, եզակի բույսերի աճելավայրերով և կենդանիների բնադրավայրերով:

Պարկի տարածքը հարուստ է հնէաբանական և ճարտարապետական հուշարձաններով: Այստեղ է

գտնվում Միջնադարյան Հայաստանի հոգևոր ու մշակութային կենտրոն հանդիսացող Հաղարծնի վանքը /XIII դ./, Գոշավանքը /XII- XIII դդ./ Սաթոսավանքը / X-XIII դդ./ Ջուխտակ վանքը /XI- XIII դդ./, Ախնաբադի եկեղեցին և կամուրջը / XI դ./ և այլն: Այստեղ շատ են հին բնակատեղիները, գերեզմանոցները, մատուռները և խաչքարերը:

## **7.4 «Խոսրովի անտառ» պետարգելոց**

Հայաստանի Խոսրով Բ Կոտակ թագավորը, դեռևս IV դարում, շուրջ 1700 տարի առաջ, Գեղամա լեռների հարավային լանջերը համարեց արգելված գոտի, «անտառ տնկեց» և այն դարձրեց պալատականների որսատեղի:

Դարեր շարունակ Խոսրովի անտառը հայոց պատմության մեջ հիշատակվել է որպես ազնվականների որսավայր, ուր տարբեր վայրերից՝ հատկապես Պարսկաստանից, կենդանիներ են բերել և բազմացրել: 1958-ին ութ առանձին հողակտորներից բաղկացած Խոսրովի անտառը պաշտոնապես հայտարարվեց արգելոց, որի սահմանները մի փոքր ընդլայնվեցին միակտոր դարձնելու նպատակով /1985թ./:

«Խոսրովի անտառ» արգելոցը տեղակայված է Երևանից հարավ-արևելք, Գեղամա հրաբխային լեռների հարավ-արևմտյան լանջերին, Ազատ և Վեդի գետերի ավազաններում: Արգելոցը գտնվում է ծովի մակերևույթից 1400-2250մ բարձրության վրա և ունի 29196 հա տարածություն, որից ավելի քան 9000 հեկտարը անտառածածկ է: Այստեղ պահպանվում են կենտրոնական Հայաստանի չոր նոսրանտառային, ֆրիգանային ու կիսաանապատային լանդշաֆտները՝ նրանց բուսական ու կենդանական եզակի համակեցություններով:

Արգելոցի սահմաններում աճում են 1850 տեսակից ավելի անոթավոր բույսեր, որոնք կազմում են Հայաստանի ֆլորայի 50%-ից ավելին: Նրանցից շատերը համարվում են հազվագյուտ, վտանգված և անհետացող ու գրանցված են ՀՀ և նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում և աճում են միայն այստեղ: Բուսական այս հարստության մեջ շատ են պտղատու, եթերայուղատու, դեղատու, ներկատու և այլ հատկանիշներով օժտված բազմաթիվ բույսեր: Այստեղ պահպանվում են մշակաբույսերի վայրի ցեղակիցները, պտղատուներից՝ վայրի տանձենին, խնձորենին, սալորենին, բալենին, արոսենին, սզնին, նշենին և այլն, հացազգիներից՝ աշորա Վավիլովի: Արգելոցում պահպանվում են գիհու և կաղնու նոսրանտառները, տանձուտները, լեռնային քսերոֆիտները, լեռնատափաստանային և օշինդրային կիսաանապատային ֆորմացիաները:

Արգելոցի հարուստ լանդշաֆտները կենդանիների ապրելավայրերի մեծ բազմազանություն են ստեղծում, այստեղ հանդիպում են ողնաշարավոր կենդանիների 283 տեսակներ: Ջառիվայր, թեք լանջերը, բարձրախոտերով աճած խոնավ բացատները ապաստան են այնպիսի խոշոր կաթնասունների համար, ինչպիսիք գորշ արջն ու բեզուարյան այծն են, որոնք գրանցված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում:

Անտառի վերին սահմանում հազվադեպ հանդիպում են լուսանը և ավելի հազվադեպ՝ առաջավորասիական ընձառյուծը, որն ընդգրկված է Միջազգային Կարմիր գրքում: Հովազը բնակվում է խորը կիրճերով կտրտված լեռնալանջերին, թփուտային բուսականությամբ ծածկված մացառուտներում, ժայռային կուտակումներում, լեռնատափաստանային սարահարթերի զառիվայրերի վրա: Հովազի միգրացիոն ուղիները հիմնականում գտնվում են բարձր լեռնային գոտում և անցնում են ջրբաժաններով:

Բեզուարյան այծի հիմնական ապրելավայրերն են /բիոտոպերը/ ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը: Արգելոցի անտառային գոտու վերին սահմանում՝ մերձալպյան

գոտու մարգագետիններում հանդիպում է նաև հայկական մուֆլոնը: Այս երկու տեսակներն էլ ընդգրկված են Միջազգային Կարմիր գրքում: Կիսաանապատային գոտում հանդիպում է ԶԶ Կարմիր գրքում գրանցված լայնականջ ոզնին: Արգելոցում բնակվում են նաև վարազը, գայլը, աղվեսը, վայրի խոզը, անտառային կատուն, սրականջ գիշերային և միջերկրածովային չղջիկները, փոքր պայտաքիթը և այլն:

Արգելոցում բավական հարուստ է թռչունների ֆաունան: Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակներից են կասպիական ուլարը, գառնանգղը, սև ու սպիտակագլուխ անգղը, քարարծիվը և այլն: Թիթեռներից հայտնի են շատ տեսակներ (օրինակ՝ իլիկաթիթեռ կաղնուտային, թզուկ Կոմարովի և այլն), որոնք գրանցված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում:

Ձկներից հանդիպում են կարմրախայտը, կարմրակնը, Քուռի բեղլուն և այլն: Կան նաև մի շարք երկկենցաղներ, որոնցից սիրիական սխտորագորտը գրանցված է ԶԶ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Սողուններից այստեղ հանդիպում են շերտավոր մերկաչքը, միջին մողեսը, Դարևակու ցեղի մի քանի տեսակի մողեսներ, դեղնափորիկը, անդրկովկասյան սահնօծը, մի շարք այլ սահնօծեր, հայկական էիբենիսը, արևմտյան վիշապիկը, ջրային լորտուն, լեռնատափաստանային իժը, անդրկովկասյան գյուրզան և այլն: Միջազգային Կարմիր գրքում գրանցված տեսակներից են հայկական իժը և միջերկրածովային կրիան:

Արգելոցում կան բազմաթիվ բնական հուշարձաններ և գրավիչ վայրեր՝ հսկայական «բազալտե երգեհոն», խորհրդավոր քարանձավներ, մթին ձորեր և ալպիական մարգագետիններ, դարավոր կաղնիներ և առանձնահատուկ ծաղիկներ: Տարածքում կան մեծ քանակությամբ քաղցրահամ, հանքային աղբյուրներ և երկու ոչ մեծ բնական լճեր՝ Մանկունքի կիրճում:

Այս տարածքում պահպանված են նաև մեծ թվով պատմական հուշարձաններ՝ քարանձավային բնակավայրեր, վաղ միջնադարյան վանքեր, խաչքարեր, եկեղեցիներ ու բերդեր: Այստեղ է գտնվում նաև միջնադարյան ճարտարապետության մարգարիտը՝ Գեղարդավանքը: Նշանավոր հուշարձաններից են Գառնու տաճարը, Հավուց թառ և Աղջոց վանքերը, Կաքավաբերդը: Միջնադարյան գրավոր աղբյուրներում հիշատակվում են Մազազի Ավանասար, Ավանիկ, Արդիղ, Բերդկանց, Գառնի, Գողթ /Կողթ/, Թառնիս, Կակաղ, Կուտիս /Կուտուց վանքով/, Մանկուս, Պորտիկ /Պորտկան/, Քաղբերդ բնակավայրերը:

Արգելոցի հարակից տարածքներում առանձնանում են հատուկ զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող Խոր Վիրապ վանքը և Գեղամա հրաբխային բարձրավանդակը՝ Աժդահակ, Մեծ և փոքր Սպիտակասար, Սևկատար, Արմաղան գագաթներով: Այս տեղանքը հարուստ է հնագույն ժայռապատկերներով, հնագիտական հուշարձաններով և ունի լայն հնարավորություններ լեռնային և հետիոտն երթուղիների համար:

## **7.5 «Շիկահող» պետարգելոց**

Շիկահողի արգելոցը գտնվում է հանրապետության հարավ-արևելյան մասում, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում՝ Ծավ և Շիկահող գետերի ավազաններում: Ներկայումս զբաղեցնում է 12137 հա տարածություն 700-2400 մ բարձրությունների սահմաններում: Այստեղ յուրաքանչյուր կիրճ ունի իր յուրահատուկ կլիման, որը հիմնականում տաք և խոնավ է:

Շիկահողի արգելոցը ՀՀ տարածքի այն եզակի անկյուններից է, որտեղ պահպանվել են կուսական գեղատեսիլ անտառները: Դեռևս արձակ ժամրի մեծ գրող Ակսել Բակունցը «Սթնածոր» ժողովածուում նկարագրել է Շիկահողի հիասքանչ բնաշխարհը, որը շատ արվեստագետների համար եղել է ներշնչ-

ման, արարման մի չքնաղ ու գողտրիկ անկյուն: Այն տիպիկ լեռնաանտառային տարածք է՝ լայնատերև խիտ անտառներով, տեղ-տեղ կտրատված ռելիեֆով, նեղ և խոր հովիտներով, սարավանդներով, կիրճերով, բարձր, քարքարոտ և մարգագետիններով ծածկված լեռնաշղթաներով, արագընթաց գետերով, ջրվեժներով, աղբյուրներով, քարանձավներով, գեղատեսիլ ժայռերով և քարափներով:

Արգելոցի ֆլորան ներկայացված է անոթավոր բույսերի 1074 տեսակներով: ՀՀ Կարմիր գրքում ներառված են շուրջ 70 բուսատեսակներ: Անտառը հիմնականում կազմված է կաղնու, բոխենու տեսակներից. Դրանց ուղեկցում են հացենին, թխկին, ծփին, լորենին. Ոչ մեծ ծառախմբերով աճում են արևելյան սոսին և հատապտղային կենին: Շատ են վայրի պտղատուները՝ տանձենին, խնձորենին, սալորենին, ընկուզենին, անտառային թփերից՝ իլենին, ցախակեռասը, գերիմաստին, տխլենին, սզնին, մոշենին և այլն: Անտառի վերին սահմաններում (2400-2600մ բարձրության վրա) աճում են սուբալպյան կաղնու, կեչու և խառը անտառներ: Արգելոցում աճում են հազվագյուտ ռելիկտային պտերներ՝ սովորական իժալեզուն և դրիմյան արծվապտերը, ինչպես նաև շողավարդ կաշվե, ձմձաղիկ անդրկովկասյան, խոլորձի, հիրիկի, կակաչի, շնդեղի, խլոպուզի տարբեր տեսակներ: Աճում են էնդեմիկ շատ տեսակներ՝ տանձ Ջանգեզուրի, մորենի Թախտաջյանի, վարդակակաչ խառը, սրոհունդ էլեոնորայի և այլն:

Շնորհիվ համեմատաբար մեղմ կլիմայի և փակ կիրճերի մեծ քանակությամբ՝ այստեղ պահպանվել են ոչ միայն անցյալ երկրաբանական ժամանակաշրջանի առանձին ներկայացուցիչները, այլև երրորդական ֆլորայի ամբողջական կղզյակներ: Դրանց թվում է կենու պուրակը, որտեղ հայտնաբերվել է միջերկրածովային ֆլորայի հնագույն տեսակ բոշխ խոնարհվողը: Արգելոցի սահմաններից ոչ հեռու, հարավ-արևմտյան մասում, գտնվում է «Սոսու պուրակ» պետական արգելավայրը, որը ստեղծվել է Կովկասում ամենախոշոր բնական արևելյան սոսու պուրակի պահպանության նպատակով:

Չնայած արգելոցում հիմնականում գերակշռում են մեզոֆիլ անտառային լանդշաֆտները, այստեղ ոչ մեծ հատվածներով ներկայացված են նաև լեռնատափաստանային, սուբալպիական, ալպիական մարգագետինները և այլ տիպի լանդշաֆտներ, որոնք կենդանիների ապրելավայրերի մեծ բազմազանություն են ստեղծում: Այստեղ հանդիպում են ողնաշարավոր կենդանիների 208 տեսակներ: Կաթնասունների ֆաունան ներկայացված է 36 տեսակներով:

Լայնատերև խիտ անտառները, առանձին ժայռային ցցվածքները, արագընթաց գետակներով նեղ, խորը կիրճերը, խոնավ բացատները, քարքարոտ, զառիվայր լանջերը լավ ապաստարան են հանդիսանում այնպիսի խոշոր կաթնասունների համար, ինչպիսիք են գորշ արջը, լուսանը, անտառային կատուն, այծյամը, վայրի խոզը, գայլը, աղվեսը, գորշուկը, եվրոպական մապաստակը: Բավական հաճախ են հանդիպում սովորական ոզնին և հնդկական մացառախոզը:

Անտառի վերին սահմանում՝ լեռնատափաստանային սարահարթերի զառիվայրերի վրա հազվադեպ հանդիպում է առաջավորասիական ընձառյուծը, որը ընդգրկված է Միջազգային Կարմիր գրքում: Հովազի միգրացիոն ուղիներն անցնում են Մեղրու լեռնաշղթայի ջրբաժանով: Բնորոշ ապրելավայրերը՝ խորը կիրճերով լեռնալանջերը, նոսր անտառային և թփուտային բուսականությամբ ծածկված ժայռային կուտակումներով մացառուտները գտնվում են ինչպես Շիկահողի արգելոցի, այնպես էլ Մեղրու անտառտնտեսության վերին սահմանում:

Արգելոցում հանդիպում է նաև բեզուրյան այծը, որի հիմնական բիոտոպները՝ ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող լեռնալանջերը, առանձին կղզյակների ձևով ներկայացված են ինչպես անտառի ներսում, այնպես էլ արգելոցի անտառային գոտու վերին սահմաններում: Այս տեսակը նույնպես ընդգրկված է Միջազգային Կարմիր գրքում:

Ձեռնաթևավորներից արգելոցում բնակվում են սրականջ գիշերային չղջիկը, փոքր պայտաքիթը, գաճաճ չղջիկը, միջերկրածովային չղջիկը:

Արգելոցի թռչունների ֆաունայուն հայտնի են 141 տեսակներ և հիմնականում ներկայացված են անտառային տեսակները: Կարմիր գրքում ընդգրկված տեսակներից առաջին հերթին պետք է նշել կասպիական ուլարը, կովկասյան մարեհավը, գառնանգղը: Արգելոցի վերին անտառային գոտում հանդիպում է սպիտակագլուխ անգղը: Սահմանափակ տարածքներ են զբաղեցնում կովկասյան փասիանը, թուրաջը, շիկապոչ քարաթռչնակը և այլն, թվով ավելի քան 50 թռչնատեսակներ:

Սողունների ֆաունան ներկայացված է 26 տեսակներով (11 տեսակի մողեսներ, 13 տեսակի օձեր և 2 տեսակի կրիաներ): Հազվագյուտ տեսակներից հանդիպում են շերտավոր մերկաչքը, երկարատու սցինկը, առաջավորասիական մաբույան, կովկասյան կատվածը, քառաշերտ սահնօձը, անդրկովկասյան սահնօձը : Լայն տարածված է գյուրզան: Հանդիպում են նաև Միջագոգային Կարմիր գրքում գրանցված հայկական իժը և միջերկրածովային կրիան:

Միջատների ֆաունան արգելանոցում ներկայացված է մոտ 1000 ուսումնասիրված տեսակներով, որոնք պատկանում են 7 կարգերին, 106 ընտանիքներին և 566 սեռերին: Բացահայտված են 87 տեսակի միջատներ, որոնք հանդիպում են միայն արգելոցում:

Արգելոցի գետերում հանդիպում է կարմրախայտը, Քուռի բեղլուն, Քուռի կողակը և այլ ձկնատեսակներ:

Արգելոցում շատ են փոքրիկ լեռնային առվակները և գետակները, որոնք լցվում են այդ շրջանի գլխավոր ջրային զարկերակը՝ Ծավ գետը, որի գլխավոր վտակները Շիկահողը և Մազրան են: Ծավի և նրա վտակների ողողադաշտը արտահայտված չէ, գետերը հոսում են նեղ զառիվայր կիրճերով: Բուլոր գետերը լեռնային են՝ արագ և բուռն հոսանքներով: Շատ են աղբյուրները, որոնց շրջակայքում հանդիպում են ոչ մեծ ճահճացած տեղամասեր:

Արգելոցի տարածքին սահմանակից են Շիկահող, Սրաշեն, Ծավ, Շիշկերտ, Ներքին Հանդ գյուղերը, ուր պահպանվել են նահապետական հայ գյուղին բնորոշ ավանդույթներ և սովորույթներ: Տարածքը հարուստ է հնէաբանական և պատմամշակութային հուշարձաններով՝ գյուղատեղերով, բերդերով, եկեղեցիներով, քարանձավներով, ժայռափոր և այլ կառույցներով: Նշանավոր հուշարձաններից են Մազրայի գյուղատեղին, Վերին Հանդ լքված գյուղը, մի քանի այլ բնակատեղեր:

«Շիկահողի» պետարգելոցի, «Սոսու պուրակ» պետական արգելավայրի և նրանց շրջակայքի հարուստ բնապատմական ժառանգությունը հնարավորություն է տալիս կազմակերպել զբոսաշրջության ամենաբազմապիսի ձևեր, համակցված զբոսապտույտներ և արշավներ: Տարածքում բարձրությունների կտրուկ տատանումները, խիտ բուսական ծածկույթը, փոքրաքանակ և դժվարանց արահետները պահանջում են ֆիզիկական լավ պատրաստվածություն, հնարավոր են անհատական և փոքր խմբերով տուրեր: Լավագույն ժամանակահատվածը հունիս – հոկտեմբեր ամիսներն են: Երթուղիների հիմնական մասը հնարավոր է անցնել հետիոտն, իսկ ավտոմեքենաներով հնարավոր է երթևեկել միայն սահմանափակ տարածությամբ լեռնաանտառային գոտով անցնող հողածածկ, դժվարանց ճանապարհներով:

## 7.6 «Էրեբունի» պետարգելոց

«Էրեբունի» արգելոցը, գտնվում է Մերձարաքսյան ծալքավոր լեռնաշղթաների քայքայված լանջերին, Կոտայքի և Արարատի մարզերի սահմաններում, Երևանի շրջակայքում, Մուշաղբյուր և Գեղաղիր գյուղերի միջև: Ջրաղեցնում է 89 հա տարածք: Այստեղ պահպանվում են լեռնային քսերոֆիտ էնդեմիկ և եզակի բնական համալիրներ: Վայրի հացազգիների գենոֆոնդի պահպանության օջախն է: Գտնվում է չոր լեռնատափաստանի և օշինդրային կիսաանապատի սահմանագծին:



Չնայած փոքր տարածքին՝ արգելոցն ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն՝ կազմված 293 տեսակներից: Բուսական համակեցությունները հիմնականում կազմված են միամյա հացազգիներից՝ այծակն գլանածն, բթաթեփուկ անքիստ, աշորա վավիլովի, ցորեն արարատյան, ցորեն վայրի միահատիկ, ցորեն ուրարտուի և այլն: Այստեղ կան ցորենի հարյուրից ավելի տարատեսակներ: Հանդիպում են նաև այլ հազվագյուտ անհետացող տեսակներ, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Դրանցից են հիրիկ ցանցավորը, արմատազլխիկ արևելյանը, հոհենակերիա անցողունը, կանկար տուրնեֆորին և այլն:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից այստեղ հանդիպում են 17 տեսակի սողուններ, որոնցից են գյուրզան, մողեսածը, սահնօծի տարբեր տեսակներ, առաջավորասիական մաբույան, երկարատ սցինկը և այլն: Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը, կանաչ դողոշը, փոքրասիական ծառագորտը, թռչուններից (մոտ 50 տեսակ) ուշագրավ են լորը, մոխրագույն կաքավը, սովորական տատրակը, սովորական բազեն, մկնաճուռակը, տնային բվիկը, ներկարարը և այլն: Կաթնասուններից տարածված են աղվեսը, աքիսը, հազվադեպ նաև կզաքիսը, գայլը և գորշուկը:

Չնայած իր փոքր տարածքին «Էրեբունի» արգելոցը ունի մեծ նշանակություն, քանզի կոչված է պահպանելու հացազգիների, այդ թվում նաև վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդը:

## **7.7 Արգելավայրեր**

**1. Ախնաբատի կենու պուրակ** (գտնվում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1959թ., 25 հա տարածության վրա: Գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելքում, Միափորի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին, Պոլագ գետի ավազանում, Աղավնավանք գյուղի մոտ, ծովի մակարդակից 1400-1700 մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտն է ռելիկտային կենու եզակի պուրակը: Հազվագյուտ կենի հատապտղային տեսակը բարձրարժեք բույս է՝ շնորհիվ չփտող բնափայտի և եթերայուղերով հարուստ գեղեցիկ, մուգ կանաչ գույնի նուրբ տերևիկների: Այս պուրակում՝ նեղ, մութ կիրճերի զառիթափ լանջերին, աճում են 20-30մ. բարձրության, 280-450 տարեկան կենու գեղեցիկ, ուղղաձիգ բնով առանձնյակներ:

**2. Բանքսի սոճու** (Հրազդանի անտառտնտեսություն) Կազմավորվել է 1959թ., 400 հա տարածության վրա: Գտնվում է Մարմարիկ գետի ավազանում, Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսասիայաց լանջերին՝ 1800-2000մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտն է սոճի բանկսի տեսակի տնկարանային պուրակը: Համատարած հատումների հետևանքով տուժել են նաև անտառատնկարկները:

**3. Գոռավանի ավազուտներ** (2007 թվականից գտնվում «Խոսրովի անտառ» պետարգելոց» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1958թ., 200 հա տարածության վրա: Գտնվում է Արարատյան գոգավորությունում, Վեդի գետի ձախ ափին, Ուրծի լեռնաշղթայի նախալեռներում, Խոսրովի արգելոցի հատվածներից մեկի անմիջական հարակցությամբ՝ 1100-1200մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ավազային անապատին յուրահատուկ կենդանական աշխարհը և տիպիկ պսամոֆիլ բուսականությունը:

Հազվագյուտ, անհետացող բույսերի և կենդանիների թվով «Գոռավանի ավազուտները» ՀՀ ամենահարուստ արգելավայրն է: Այստեղ աճում են անոթավոր բույսերի ավելի քան 160 տեսակներ, իսկ ողնաշարավոր կենդանիների թիվը հասնում է մոտ 33-ի: 15 անոթավոր բույսեր և 7 ողնաշարավոր կենդանիներ գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Այդ բույսերից են գեղածաղիկ մատիտեղանման, ոգնաթուփ Արաքսի, գազ տարօրինակ, գազ Մասալսկու, մեխակ Լիբանանի, կնճիթաթերթիկ սապատավոր, սապնարմատ մտրականման, Օշան Թամամշյանի, թեզիում Շովիցի, խռնդատ մերկացո-

ղուն, սոխ ակակա և այլն: Արգելավայրում աճում են ոչ միայն տիպիկ պսամոֆիլ բույսեր, այլև օձինդրային ֆորմացիաներին և ֆրիգանային բնորոշ բույսեր: Դա բացատրվում է նրանով, որ փոքրիկ ավազուտային անապատը շրջապատված է օձինդրային ֆորմացիաներով և ֆրիգանայով:

Կարմիր գրքում գրանցված կենդանիներից այստեղ հանդիպում են նախասիական անապատային խածկտիկը, միջերկրածովային կրեան, երկարատ սցինկը, առաջավորասիական մաբույան և այլն:

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի նմանատիպ ավազային անապատին բնորոշ է կոհամակարգեր առանձին կղզյակների ձևով դեռևս պահպանվել են «խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանման գոտու տարածքում: Այս էկոհամակարգերին բնորոշ են գրեթե նույն ֆաունայի և ֆլորայի ներկայացուցիչները, որոնք հանդիպում են Գոռավանի ավազուտներում: Այս բնական լանդշաֆտները կենսաբազմազանության պահպանության և գիտության տեսակետից մեծ արժեք են ներկայացնում, դրանք նպատակահարմար է առանձնացնել և ընդգրկել արգելոցի մեջ:

Շինարարական նպատակներով ավազի հանքի շահագործումը արգելավայրի դրությունը դարձնում է աղետալի: Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մետր լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանման գոտի:

**4. Սևանի (Արեգունու) գիհու նոսրանտառային** (գտնվում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1958թ., 3310 հա տարածության վրա: Տեղադրված է Արեգունու և Սևանի լեռնաշղթաների հարավային լանջերին՝ 2000-2300մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են ռելիկտային գիհու նոսրանտառները՝ կազմված գիհու տարբեր տեսակներից, որոնք են՝ գիհի բազմապտուղը, գիհի գարշահոտը, ցրդենին, և գիհի երկարատերևը: Արգելավայրի պահպանությունը չափազանց անբավարար է, նոսրանտառների ներկայիս վիճակը աղետալի է: Չնայած առատ պտղաբերությանը, սերմնային վերարտադրությունը բացակայում է՝ վնասատու միջատների կողմից սերմերի զանգվածային ոչնչացման պատճառով: Բացի դրանից, հատված են ծառերի մեծ մասի գազաթները և, բնականաբար, նրանց աճը դադարել է:

**5. Արջատխլենու** (Իջևանի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1958թ., 4000 հա տարածության վրա: Տեղադրված է հյուսիսային Հայաստանում, Տավուշի մարզի Խաչաղբյուր գետի ավազանում, Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, 1500-1800մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են արջատխլենու և կենու պուրակները: Պահպանվող տխլենի ծառանման, կենի հատապտղային, հաճարենի արևելյան տեսակների հետ մեկտեղ ենթանտառում աճում են հազվագյուտ պտերներ և այլ ռելիկտային տեսակներ: Այս կարևոր օբյեկտի պահպանությունը չափազանց անբավարար է:

**6. Հերիերի նոսրանտառային** (Եղեգիսի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1958թ., 6140 հա տարածության վրա: Գտնվում է Արփա գետի վտակ Հերիեր գետի ավազանում՝ 1600-1800մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտն է քսերոֆիտ լեռնատափաստանային բուսականությունը՝ ներկայացված գիհու նոսր անտառների, սպնդուկի և տրագականտային գազերի զանգվածներով: Վիճակը անբավարար է:

**7. Ջերմուկ** (Ջերմուկի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1958թ., 3865 հա տարածության վրա: Գտնվում է Վայքում՝ Արփա գետի վերին հոսանքում, 2000-2500մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են կաղնու անտառները՝ կազմված կաղնու խոշորառէջ տեսակից ու մի շարք էնդեմիկ ծառատեսակներից, իսկ կենդանական աշխարհից՝ հայկական մուֆլոնը, բեզուարյան այծը, վարազը և արջը:

**8. Գյուլագարակի սոճու** (Ստեփանավանի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1958թ., 2590հա տարածության վրա: Գտնվում է Բազումի լեռնաշղթայի Քարհանք-ջուր գետակի հովտում,

հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան լանջերին՝ 1300-1850մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտն են ռելիկտային սոճու անտառները: Այս պուրակում սոճին ներկայացված է 130-150 տարեկան ծառերի տեսքով: Սոճու հետ խառը հանդիպում են բոխին, թխկին, արևելյան կաղնին և տեղ-տեղ՝ հաճարենին: Խոտածածկի տարրերից են այնպիսի հազվագյուտ տեսակներ, ինչպիսիք են սպնդուկը, խոլորձի տարբեր տեսակներ, նրանց թվում՝ թիթեռնախոլորձը և այլն: Համատարած հատումների պատճառով սոճուտների վիճակը շատ տագնապալի է:

**9. Սոսու պուրակ** ( գտնվում է «Շիկահող» պետարգելոց» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1958թ., 64,2 հա տարածության վրա: Տեղադրված է Հայաստանի հարավում, Ծավ և Շիկահող գետերի ափին, 700-800մ. բարձրության վրա: Հյուսիս-արևմուտքից հուսալիորեն պաշտպանված է Խուստուփ լեռան զանգվածով, իսկ հարավից՝ Մեղրու լեռնաշղթայով: Պուրակը շարունակվում է Ադրբեջանի տարածքում (4000 հա) և կոչվում է Բասուտչայի արգելոց: Պահպանության օբյեկտն է Կովկասում միակ բնական սոսու պուրակը, որը պահպանվում է հնագույն ժամանակներից: Հազվագյուտ սոսի արևելյան տեսակի հետ միասին այստեղ աճում են ուրիշ ռելիկտային տեսակներ՝ ընկուզենի, շրջահյուս հունական, բաղեղ և այլն: Վերջին 15 տարիներին անտառի վիճակը կտրուկ վատացել է: Սերմային վերարտադրության դադարեցման պատճառով՝ պուրակը խիստ նոսրացել է, չորացել, հատվել են շատ ծառեր: Այժմ իրականացվում են վերականգնման աշխատանքներ

**10. Մրտավարդենու** (Գուգարքի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1959թ., 1000 հա տարածության վրա: Գտնվում է հյուսիսային Հայաստանում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսիայաց լանջերին, Կոտայքի, Գուգարքի մարզերում՝ 1900-2200մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են ռելիկտային մրտավարդ կովկասյան տեսակը և ուղեկցող այլ հազվագյուտ տեսակներ: Ոչ կանոնավոր արածեցման, անտառի վերին մասերի հատման և ընդհանուր անտրոպոգեն գործոնների պատճառով, մրտավարդի երբեմնի խիտ մացառուտները այժմ գտնվում են ծայրահեղ ճնշված և կտրատված վիճակում:

**11. Արագածի Քարե լիճ — ալպյան** (գտնվում է Ֆիզիկայի ինստիտուտի ենթակայության տակ): Կազմավորվել է 1959թ., 300 հա տարածության վրա: Գտնվում է Արագած լեռան զանգվածի ամենավերին մասում՝ 3200-3500մ. բարձրության վրա: Գտնվում է Ֆիզիկայի ինստիտուտի տնօրինության տակ: Պահպանության օբյեկտներն են սառցադաշտային Քարե լիճը, հարակից ալպյան մարգագետինները: Այստեղ աճում են շատ հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ, ինչպիսիք են՝ գորտնուկ արագածի, մակարդախոտ Սոսնովսկու, ոջլախոտ գարշահոտը և այլն: Գերարածեցման և անտրոպոգեն գործոնի արդյունքում լճի շրջակայքի ալպյան գորգերը գտնվում են ծայրահեղ անբավարար վիճակում:

**12. Մարգահովտի** (Գուգարքի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1971թ., 3368 հա տարածության վրա: Գտնվում է հյուսիսային Հայաստանում, Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, Փամբակ գետի ավազանում, 1900-2200մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են խիստ դեգրադացված մեզոֆիլ անտառները և դրանց յուրահատուկ ֆաունան՝ այծյամը, գորշ արջը, կովկասյան մարեհավը և այլն:

**13. Արգաքանի և Մեղրածորի** (Հրազդանի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1971թ., 13532 հա տարածության վրա: Գտնվում է Կոտայքի մարզում, Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազանում՝ 1600-2100մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են այծյամը, ուսուրական բժավոր եղջերուն, գորշ արջը, մարեհավը և այլ անտառային կենդանիներ: Արգաքանի արգելավայրի անտառներում (Աղվերանի կիրճ) հանդիպում են չափազանց հազվագյուտ ռելիկտային տեսակներ, որոնք գրանցված են նախկին ԽՍՀՄ և Հայաստանի Կարմիր գրքերում: Դրանցից են իժալեզու սովորակաճը, նեկտարասկորդում երեքֆուտայինը և այլն:

**14. Իջևանի** (Իջևանի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1971թ., 6813 հա տարածության վրա: Գտնվում է հյուսիսային Հայաստանում Աղստև գետի ավազանում, Իջևանի լեռնաշղթայի լանջերին՝ 900-2100 մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են անտառային բույսերը և հազվագյուտ ու արժեքավոր կենդանատեսակները՝ արջը, այծյամը, մարեհավը և այլ անտառային տեսակները: Վերջին տարիների չկարգավորված հատումների հետևանքով արգելավայրի անտառային էկոհամակարգերը կրել են զգալի վնասներ:

**15. Գանձաքարի-Վերին Աղդանի** (Իջևանի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1971թ., 6813 հա տարածության վրա: Գտնվում է հյուսիսային Հայաստանում՝ Պայտաջուր գետի ավազանում, Աղստև գետի աջափնյա վտակում: Պահպանության օբյեկտներն են հազվագյուտ և արժեքավոր կենդանատեսակները՝ արջը, այծյամը, մարեհավը և այլ անտառային տեսակներ, ինչպես նաև լեռնային անտառները: Աօրինի հատումների և Տավուշի մարզում ճանապարհաշինարարական աշխատանքների կատարման պատճառով նոսրացել է Գանձաքարի անտառը: Հատկապես համատարած հատված են անտառի հարավ և հարավ-արևմտյան լանջերը, որտեղ անտառի վերականգնումը շատ դժվարությունների հետ է կապված:

**16. Գետիկի** (Ճամբարակի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1971թ., 5728 հա տարածության վրա: Գտնվում է հյուսիս-արևելյան Հայաստանում, Գետիկ գետի ավազանում՝ 1500-2700մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են հազվագյուտ և արժեքավոր անտառային կենդանատեսակներ՝ այծյամը, գորշ արջը, վայրի խոզը, մարեհավը, ինչպես նաև լեռնային անտառները:

**17. Եղեգնաձորի - Եղեգիսի** (Եղեգնաձորի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1971թ., 4200 հա տարածության վրա: Գտնվում է Վայքում, Արփա գետի աջ վտակ Եղեգիս գետի ավազանում՝ 1200-2800մ. բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են հազվագյուտ և արժեքավոր կենդանատեսակները՝ բեզոարյան այծ, հայկական մուֆլոն, առաջավորասիական ընձառյուծ, վայրի ցորենի մեծ բազմազանություն: Չնայած արգելավայրը կազմակերպվել է կենդանական աշխարհի պահպանության համար, բայց Եղեգիս գետի կիրճը բացառիկ հետաքրքրություն է նարկայացնում նաև բուսաբանական տեսակետից: Այս կիրճում աճում են մի շարք էնդեմիկ կամ հազվագյուտ տեսակներ՝ գրանցված նախկին ԽՍՀՄ և Հայաստանի կարմիր գրքերում: Դրանցից են՝ սմիրնիոպսիս հայկական, տերեփուկի տարբեր տեսակներ, որձաքիստ կոչի և այլն:

**18. Գորիսի** (Գորիսի անտառտնտեսություն): Զբաղեցնում է 1850 հա: Գտնվում է հարավային Հայաստանում՝ Զանգեզուրում, Որոտան գետի և նրա վտակ Վարարակնի ավազանում՝ 1400-2800մ. բարձրության վրա: Ստեղծվել է այս շրջանի կենդանական աշխարհի (այծյամ, ուսուրական բծավոր եղջերու, գորշ արջ, վարազ, մարեհավի տեսակներ) պահպանության համար: Այս կիրճում հանդիպում է շատ հազվագյուտ փասիան կովկասյան թռչնատեսակը: Այս վայրերը հետաքրքիր են նաև ֆլորիստիկ տեսակետից: Որոտանի կիրճի հարավային լանջերին առատորեն տարածված են վայրի նուռը, վայրի թուզը: Չոր լանջերին հանդիպում են գեղազարդ հիրիկ տարօրինակ և գիտության համար վերջերս հայտնաբերված նոր ենթատեսակ՝ հիրիկ գրոսսգեյմի, հազվագյուտ տերեփուկ լեզվանման, սոխի մի շարք հազվագյուտ տեսակներ և այլն: Բոլոր վերը նշված տեսակները գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

**19. Հանքավանի ջրաբանական** (գտնվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1981թ., 9350 հա տարածության վրա: Գտնվում է Մարմարիկ գետի վերին հոսանքում, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին: Պահպանության օբյեկտներն են հանքային աղբյուրների սնման ավազանները:

**20. Ջերմուկի ջրաբանական** (գտնվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1981թ., 18000 հա տարածության վրա:

Գտնվում է Արփա գետի վերին հոսանքում: Պահպանության օբյեկտն են հանքային ջրերի տաք աղբյուրների սնման ավազանները:

**21. Արարատի որդան կարմիր** (գտնվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Կազմավորվել է 1987թ., 200 հա տարածության վրա: Գտնվում է Արարատի գոգահովտում, Արգավանդ, Արագափ և Սովետական գյուղերի միջև:

Պահպանության օբյեկտն է հալոֆիտ անապատը, այստեղ աճող որդանխոտ ափամերձ տեսակի հացազգիով, որի վրա ապրում է հայկական որդան կարմիրը: Արարատյան որդան կարմիրը էնդեմիկ միջատ է, որը գրեթե 3 հազարամյակ Հայկական լեռնաշխարհի տարածքում օգտագործվել է կարմիր ներկանյութ կարմին ստանալու համար: Այս ներկը ունի բարձր կայունություն (չի գունաթափվում մի քանի հազարամյակ), անվտանգ է և կարող է կիրառվել սննդի, թեթև արդյունաբերության, պարֆյուներիայի և այլ ոլորտներում: Որդանից անջատված ճարպը օգտագործվում է բժշկության մեջ որպես հակաբորբոքային միջոց: Արարատյան դաշտի աղուտների յուրացման հետևանքով միջատի զբաղեցրած երբեմնի 11000 հա տարածքից այժմ պահպանվել է ընդամենը 217 հա: Որդան կարմիրը մտցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Միջատի քանակը տարեցտարի նվազում է:

Արարատյան հարթավայրի այս տարածքում, որպես բնության չափանմուշ, պահպանվել է հալոֆիտ բուսականության մի փոքր հողակտոր, մի քանի հազվագյուտ տեսակներով, ինչպիսիք են բորակաբուփը, կալախոտ կասպիականը, աղահասկիկ մերձկասպյանը, կարմրանը և այլն: Արածեցումից խուսափելու նպատակով՝ նախկինում հողակտորը ցանկապատով պարսպապատված էր: Այժմ ցանկապատը քանդված է և կատարվում է արածեցում: Արգելավայրը գտնվում է խիստ աղետալի վիճակում:

**Պատմական տեղեկանք.** Դեռևս վաղուց Հայաստանը հայտնի էր որպես արարատյան որդան կարմրից ստացվող վառ կարմիր, լուսադիմացկուն բնական ներկի՝ կարմինի մատակարարող: Այդ ներկը կարևոր դեր է խաղացել երկրի արդյունաբերական և տնտեսական կյանքում ընդհուպ մինչև տասնիններորդ դարը: Բնական կարմին ստանալու համար դեռ անհիշելի ժամանակներից հավաքել են արարատյան որդան կարմիր: Տասնիններորդ դարի վերջին Հայաստանի տարածքում արարատյան որդան կարմրի հավաքը և նրանից ներկի ստացումը դադարեց: Դրա պատճառը այն էր, որ համաշխարհային շուկայում հայտնվեց մեքսիկական որդանից ստացվող ավելի էժանագին կարմինը, իսկ հետագայում էլ ավելի էժանագին սինթետիկ անիլինային ներկերը: Սակայն սինթետիկ ներկերը զիջում էին բնական կարմինին իրենց լուսադիմացկունությամբ և անվնաս չէին մարդու առողջության համար: Այդ բացասական հատկանիշների բացահայտումը զգալի չափով նեղացրեց նրանց գործածության ոլորտը: Այժմ բնական ներկանյութերի պահանջը կրկին կտրուկ աճել է, որի պատճառով աճել է նաև հետաքրքրությունը այս տեսակի նկատմամբ:

**22. Բողաքարի** (Մեղրիի անտառտնտեսություն): Կազմավորվել է 1989թ., 2728 հա տարածության վրա: Գտնվում է Սյունիքի մարզի ծայր հարավում՝ Ջանգեզուրի լեռնաշղթայի հարավային լանջերին, 1400-2100մ. բարձրության վրա: Այստեղ արձանագրված են այնպիսի էնդեմիկ, հազվագյուտ տեսակներ, ինչպիսին են վարդակակաչ սոսնովակուն, արքայապսակ քրդականը և ուրիշներ: Կաղնու նուրանտառներում հանդիպում է կաղնի Արաքսի տեսակը և մի շարք հազվագյուտ խոլորձներ: Առավել մեզոֆիլ անտառներում աճում են խազեզ յուրահատուկի և սագասոխուկի հազվագյուտ տեսակները:

Այստեղից է նկարագրված խլածաղիկ Թախտաջանի լոկալ էնդեմիկը :

**23. Սև լիճ** (գտնվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Ստեղծվել է 1987 թվականին, գտնվում է Հայաստանի հարավում, Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասարի արևելյան լեռնաստորոտի կեղծ խառնարանային մասում, Հայաստանի և Ադրբեջանի սահմանային հատվածում՝ 2658 մ բարձրության վրա և զբաղեցնում է 240 հա տարածք: Պահպանվող օբյեկտներն են բարձրալեռնային հրաբխային ծագում

ունեցող ջրավազանը և նրան հարակից բնատարածքի բուսական և կենդանական համակեցությունները:

Արգելոցի ֆլորան իր մեջ ներառում է 102 բուսատեսակներ: Ֆլորայի աղքատությունը բացատրվում է նրանով, որ արգելոցն ընդգրկում է լճի հայելին և շատ հազվագյուտ, էնդեմիկ տեսակներ աճում են նրա սահմաններից դուրս, բայց շատ մոտ: Լճին ավաներձ բուսականությունը ներկայացված է հիմնականում մարգագետնային համակեցություններով: Լճում վերաբնակեցված է Սևանի իշխան ձկնատեսակը:

**24. Խոր Վիրապ** (գտնվում է «Խոսրովի անտառ» պետարգելոց» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Ստեղծվել է 2007 թ. և գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Արտաշատ հնագույն մայրաքաղաքի աջակողմյան հատվածում գտնվող 50,28 հեկտար խոնավ տարածքի վրա:

Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի, բուսական և կենդանական աշխարհի՝ հատկապես ջրլող թռչունների ու դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների և դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է:

Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտներ են հանդիսանում մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհը և ջրաճահճային բուսականությունը:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մ լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանման գոտի:

**25. Գիլան** (գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ): Ստեղծվել է 2007 թ. և զբաղեցնում է 118 հեկտար տարածք: Արգելավայրը գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի (Գառնու տեղամասի) «Բայբուրդ» կոչված տեղամասի Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան մասի նախալեռնային գոտում, ծովի մակերևույթից 920-980 մետր բարձրության վրա: Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը կիսաանապատային, նախալեռնային էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ամբողջականության պահպանության, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է:

Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտներ են հանդիսանում կիսաանապատային և նախալեռնային էկոհամակարգերի յուրահատուկ կենդանական և բուսական աշխարհը:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով, 100 մետր լայնությամբ շրջագծով, տարածքը սահմանվել է որպես պահպանման գոտի:

## 7.8. Նոր ստեղծվող ԲՀՊՏ-ներ

### **«Արևիկ» ազգային պարկ**

Նախատեսվող «Արևիկ» ազգային պարկի տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանում՝ Մեղրի, Շվանիձոր և Նյուվաղի գետերի ջրհավաք ավազաններում:

Նախատեսվող ազգային պարկի տարածքը, որն իր մեջ ընդգրկում է նաև «Բողաքարի» պետական արգելավայրը, առանձնանում է հարուստ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությամբ: Պարկի տարածքն ընդգրկում է Հայաստանում հանդիպող բնական համալիրների ողջ բազմազանությամբ:

յունը՝ անապատային, կիսաանապատային, լեռնային տափաստաններ, գիհու նոսրանտառներ, անտառներ՝ կաղնու գերակշռությամբ, ալպյան և մերձալպյան մարգագետիններ:

Այդպիսի բազմազանության շնորհիվ տարածքը բնակատեղի է այնպիսի հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների, ինչպիսին են առաջավորասիական ընձառյուծը, բեզուարյան այծը, հայկական մուֆլոնը, միջերկրածովային կրիան, հայկական իժը, կովկասյան ջրասամույրը, կասպիական հնդկահավը, կովկասյան մարեհավը և ուրիշներ:

### **«Ձանգեզուր» արգելավայր**

Նախատեսվող արգելավայրի տարածքը Սյունիքի մարզի բնաշխարհի եզակի անկյուններից է: «Ձանգեզուր» արգելավայրի ստեղծման նպատակը Կապանի տարածաշրջանի հազվագյուտ և անհետացող բույսերի և կենդանիների տեսակների պահպանության և վերարտադրության ապահովումն է:

Այստեղ պահպանվում են հարավային Հայաստանի չոր նոսր լեռնաանտառային, բարձր լեռնային սուբալպիական և ալպիական, ֆրիգանային ու կիսաանապատային լանդշաֆտները՝ դրանց բուսական ու կենդանական եզակի համակեցություններով: Այստեղ պահպանվում են բույսերի 1800-ից և ողնաշարավոր կենդանիների 390-ից ավելի տեսակներ:

ՀՀ և միջազգային կարմիր գրքերում գրանցված կենդանիներից այստեղ հանդիպում են առաջավորասիական ընձառյուծը, բեզուարյան այծը, հայկական մուֆլոնը, անդրկովկասյան գորշ արջը, բլրային արծիվը, կասպիական հնդկահավը, կովկասյան մարեհավը, հայկական իժը, անդրկովկասյան սահնօձը և ուրիշներ:

### **«Արփի լիճ» ազգային պարկ**

Ազգային պարկ ստեղծելու հիմնական նպատակը Հայաստանի և Վրաստանի սահմանի վրա գտնվող Ջավախք-Շիրակ բարձրավանդակի ուրույն կենսաբազմազանությունը պահպանելն է: Ջավախք-Շիրակ հայաստանյան հատվածը գտնվում է հրաբխային ծագում ունեցող մեծ բարձրավանդակի վրա և իր լեռնային տափաստաններով, ինչպես նաև լճերով ու խոնավ տարածքներով բացառիկ է կովկասյան տարածաշրջանում:

Այս էկոհամակարգը հայտնի է որպես համընդհանուր կարևոր բնակատեղի բազմաթիվ թռչունների, սողունների և բույսերի համար, որոնց մի մասը համարվում են վտանգված և գրանցված են Հայաստանի ու միջազգային Կարմիր գրքերում:

Արփի լճի ջրհավաքը հանդիսանում է չվող թռչունների, հատկապես ցերեկային գիշատիչների, կարևորագույն հանգստավայր: Այստեղ է գտնվում հայկական որորի ամենամեծ գաղութը աշխարհում և գանգրափետուր հավալուսնի միակ բնադրավայրը Հայաստանում: Մեծ ձկնկուլը, քաջահավը, սև արագիլը, մոխրագույն կռունկը այստեղ հանդիպում են ավելի հաճախ, քան Հայաստանի այլ վայրերում: Այստեղ մեծ քանակով հանդիպում են փոքր ենթաարծիվը, գերեզմանաարծիվը, քարարծիվը, տափաստանային արծիվը, գառնանգղը:

Լճի և նրա ջրհավաքի իխտիոֆաունան ներկայացնում են կարմրախայտը, կովկասյան թեփուղը, հաշամը, ենթաբերանը, ծածանը:

Բաց տափաստանային տարածքների հիմնական կանթասուններն են՝ նապաստակը, աղվեսը, գայլը, փորսուղը:

Սողուններից պետք է նշել վերջերս հայտնաբերված և IUCN (The World Conservation Union) Կարմիր ցանկում ընդգրկված դարևակու իժը, որի աշխարհում հայտնի միակ պոպուլյացիան գտնվում է Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան լանջերի քարքարոտ զառիվայրերի՝ ծովի մակերևույթից 2200 - 2500 մ բարձրության վրա:

**«Գնիշիկ» և «Ջերմուկ» ազգային պարկեր**

Նախատեսվող ազգային պարկերի տարածքները ընդգրկում է Վայոց Ձորի լանդշաֆտների բարձունքային գոտիականության գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Արփա գետի վերին հոսանքների մերձալպյան տիպի լանդշաֆտը: Վայոց Ձորն առանձնանում է կենսաբանական հարուստ բազմազանությամբ, որն առաջացել է շնորհիվ նրա աշխարհագրական դիրքի, ռելիեֆի խիստ կտրատվածության, լեռնալանջերի տարբեր դիրքադրության, ռելիեֆի բարձունքային մեծ տատանումների՝ (900 մ-ից մինչև 3300-3500 մ ծովի մակերևույթից) և հանդիսանում է Կովկասի բուսականության տեսակառաջացման կարևորագույն օջախներից մեկը:

**«Գնիշիկ» ազգային պարկն** ընդգրկում է Գնիշիկ և Արփա գետերի հովիտները:

Տարածքն առանձնանում է հազվագյուտ և էնդեմ բուսատեսակներով, որոնցից շատերը գրանցված են ՀՀ կարմիր գրքում: Պարկի տարածքը հանդիսանում է բնակմիջավայր այնպիսի հազվագյուտ տեսակների համար, ինչպիսիք են առաջավորասիական ընձառյուծը, բեզդարյան այծը, հայկական մուֆլոնը, գորշ արջը, հնդկական մացառախոզը, հայկական իժը, անդրկովկասյան սահնօձը, երկարատ սցինկը, ոսկեգույն մաբույան, սևազլուխ ռինխոկալամուսը և այլն:

Այս տարածքն առանձնանում է նաև ջրաբանական և երկրաբանական եզակի օբյեկտներով. հնագույն մերկացումներ, հրաշակերտ գոյացումներ, քարանձավներ, ջրվեժներ, աղբյուրներ և այլն, որոնցից շատերը բնության հուշարձանի կարգավիճակի ենթակա տարածքներ են: Այստեղ են գտնվում «Մոզրովի», «Մագիլի» ու «Արջերի» կարստային քարանձավները:

Նախատեսվող պարկի տարածքը հարուստ է նաև հայ ժողովրդի պատմա-մշակութային տարբեր հուշարձաններով՝ Նորավանքը, Արենիի եկեղեցին, «Ջրովանք» քարանձավային մատուռը, Գնիշիկի հովտի XII-XIII դարերի խաղողի, ընկույզի, ծիրանի, թթենու այգիները և այլն:

**«Ջերմուկ» ազգային պարկի տարածքն** ընդգրկելու է Արփա գետի վերին հոսանքի և նրա աջակողմյան վտակ Յերիերի ջրհավաք ավազանները: Լեռնագրական տեսակետից տարածքը զբաղեցնում է Վարդենիսի լեռնավահանի և Սյունիքի հրաբխային բարձրավանդակի հանգուցահատվածի հարավային լանջերը՝ ներգրավելով «Ջերմուկ», «Յերիերի նոսրանտառներ» և «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրերը:

Նախատեսվող տարածքը հանդիսանում է բնակմիջավայր այնպիսի հազվագյուտ տեսակների համար, ինչպիսիք են առաջավորասիական ընձառյուծը, բեզդարյան այծը, հայկական մուֆլոնը, գորշ արջը, հնդկական մացառախոզը, հայկական իժը, անդրկովկասյան սահնօձը, երկարատ սցինկը, ոսկեգույն մաբույան, սևազլուխ ռինխոկալամուսը և այլն:

Արփայի գետահովիտը Ջերմուկի մերձակայքում բնական հուշարձանների թանգարան է բաց երկնքի տակ: Այս գեղատեսիլ հովտում ուշագրավ են Գնդեվազի լավային հոսքի սյունաձև մերկացումները, դայկաները, երիտասարդ հրաբխային կոները, լավային տարբեր հոսքերի ակնաբուխ քարերը, քարաթափվածքները, էրոզիոն հսկա ժայռակամարը, փրփրաբաշ ջրվեժը, հանքային և քաղցրահամ աղբյուրները, ժայռաբուխ հորդառատ աղբյուրները, հանքային տաք ջրերը, բազմազան գեղատեսիլ ժայռերը, որոնցից առանձնապես հետաքրքրական է «Վարդան Մամիկոնյան» բնական արձանը Արփա գետի կիրճում:

Շնորհիվ «Ջերմուկ», «Սայաթ-Նովա», «Շիրակ», «Կեչուտ» աղբյուրների ու ռոդոնային ջրերի բուժիչ և կազդուրիչ հանքային ջրերի, առողջարար կլիմայական պայմանների և գեղատեսիլ բնապատկերների, այս տարածաշրջանը համարվում է մեր հանրապետության կարևորագույն և գործող հանգստավայրերից մեկը:



## 8. ԲՅՊՏ-ներում էկոտուրիզմի կառավարման ուղիներ

Եթե բնության հատուկ պահպանվող տարածքները ինչպես հարկն է պլանավորվում են և կառավարվում, զբոսաշրջությունը կարող է լիովին համատեղելի լինել այդ տարածքների նպատակներին

### 8.1 Չբոսաշրջության նպատակները և խնդիրները պահպանվող տարածքներում

Պահպանվող տարածքներում զբոսաշրջության զարգացման գործընթացները պետք է հետապնդեն երկու գլխավոր նպատակ՝

- գտնել ուղիներ ինտեգրվելու զբոսաշրջային տնտեսության մեջ՝ զբոսաշրջիկների ծախսած գումարից մասնաբաժին ստանալու համար
- արդյունավետ կառավարել զբոսաշրջության ոլորտը՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու նպատակով:

Բնության և բնական պարկերի եվրոպական ֆեդերացիան /FNNPE, European Federation for Nature and Natural Parks/ նախանշել է պահպանվող տարածքներում զբոսաշրջության համապատասխան խնդիրները տարբեր ոլորտներում:

#### Բնապահպանական խնդիրներ

- էկոլոգիական պահպանություն՝ կենսաբազմազանության հողերի, օդի որակի պահպանություն, ինչպես նաև ջրհավաք ավազանների կառավարում:

#### Մշակութային խնդիրներ

- տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկության բարձրացում
- տեղական բնական և մշակութային ժառանգության գնահատում
- կայուն զբոսաշրջությունը տեղական և ազգային մշակույթի մաս դարձնելը:

#### Սոցիալական խնդիրներ

- այցելուների գոհունակություն և լավ ժամանց
- տեղական բնակչության կենսամակարդակի բարելավում և մասնագիտական որակավորման բարձրացում
- կայուն զբոսաշրջության գովազդում որպես այլընտրանք զանգվածային զբոսաշրջության
- պահպանվող տարածքների այցելության մատչելիության հասարակության բոլոր շերտերի համար:

#### Տնտեսական խնդիրներ

- տեղական և ազգային տնտեսության զարգացում
- տեղական ձեռնարկությունների և աշխատատեղերի ստեղծման խթանում
- տարածքների պահպանության համար աճող եկամուտների ապահովում:

## 8.2. Իրավական կանոնակարգում

Հայաստանի ԲՀՊՏ-ներում զբոսաշրջության զարգացման առկա իրավական հիմքերն են.

- ա/ ԲՀՊՏ-ների հիմքի վրա գործող ՊՈԱԿ-ների կանոնադրության մեջ թուլատրելի ձեռնարկատիրական գործունեության տեսակների շարքում ամրագրված զբոսաշրջության և գիտաճանաչողական զբոսաշրջության դրույթը,
- բ/ ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքը,
- գ/ ՀՀ օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»՝

*Հոդված 5. Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակները, գերակա ուղղությունները և միջոցները.*

- զբոսաշրջային այնպիսի համակարգի ստեղծումը, որը նպաստում է զբոսաշրջային զրավչություն ունեցող ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանմանը, պատմամշակութային ժառանգության և բնության ռացիոնալ օգտագործմանը
- Հայաստանում առաջնային զարգացման ենթակա բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսներով հարուստ զբոսաշրջային տարածաշրջանների և (կամ) կենտրոնների զարգացման ապահովումը:

Վերոհիշյալ իրավական հիմքերը բավարար չեն էկոտուրիզմի կազմակերպման, զարգացման և կառավարման համար, անհրաժեշտություն կա ստեղծել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր և Ազգային Ռազմավարություն, որը բխում է ՀՀ կառավարության Կենսաբազմազանության մասին Կոնվենցիայի շրջանակներում ստանձնած պարտավորություններից:

## 8.3. Մարդկային ռեսուրսների և մասնագիտացված կադրերի զարգացում

Հայաստանի ԲՀՊՏ-ներում զբոսաշրջությունը գործնական հիմքերի վրա դնելու նպատակով սկզբնական փուլում անհրաժեշտ է ձևավորել զբոսաշրջությամբ զբաղվող առնվազն 2-3 հաստիքներով համալրված բաժիններ, որոնց անձնակազմը պետք է տիրապետի անգլերենին և համակարգչային տեխնիկային:

Հայաստանի մարզերում առկա խորհրդային ժամանակների զբոսաշրջության մասնագետները իրենց կազմակերպչական ունակություններով և տեղանքի իմացությամբ, անշուշտ, մեծ ներդրում կարող են ունենալ ԲՀՊՏ-ներում: Սակայն հարկ է նշել, որ այսօրվա զբոսաշրջության պլանավորումը և կառավարումը խիստ տարբերվում է նախկին պետական մենաշնորհային զբոսաշրջությունից, և այս տիպի մասնագետները հաջողություն ունենալու համար պետք է ձգտեն վերանայել մոտեցումները և ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ:

Զբոսաշրջությամբ զբաղվող անձնակազմը ունի գործողությունների լայն շրջանակ և պետք է ունենա հետևյալ կարողությունները՝

1. Հասկանա այցելուների կարիքները և ցանկությունները:
2. Մատուցի բարձրակարգ ծառայություններ:
3. Վարի գնային ճկուն քաղաքականություն:
4. Վարի շուկայավարման և գովազդային գործունեություն:
5. Զբոսաշրջության և ռեսուրսների էկոնոմիկայի և ֆինանսների կառավարում:
6. Զբոսաշրջության կառավարում:
7. Բացատրելու, մեկնաբանելու և ինտերպրետացիայի:

Շատ կարևոր է, որ ԲՀՊՏ-ն աշխատանքի վերցնի այս հմտությունները ունեցող մարդկանց, կամ էլ քաջալերի ներկա աշխատակազմին՝ ուսանելու և ձեռք բերելու դրանք: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ պահպանվող տարածքի ողջ անձնակազմը մասնակցի արտակարգ իրավիճակներին արձագանքելու և փրկարարական աշխատանքների կազմակերպման դասընթացներին:

Հնարավոր են ուսուցման տարբեր ձևեր.

- տեղում իրականացվող ուսուցում՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ
- հանրապետությունում կազմակերպվող դասընթացներ
- ուսումնական այցելություններ /study tours/ զբոսաշրջության զարգացման փորձ ունեցող երկրների պահպանվող տարածքներ:

Վերջինը լայնորեն կիրառվող ձև է զբոսաշրջության ուսուցման մեջ:

Համեմատաբար փոքր ֆինանսական ռեսուրսներ պահանջող ուսումնական այցելություն ներկա պայմաններում կարելի է կազմակերպել Վրաստանի «Բորժոմ-Խալազաուրի» ազգային պարկ, որը միակն է Հարավային Կովկասում, որտեղ լուրջ ներդրումներ են կատարվել գերմանական զարգացման բանկի /KfW/ կողմից և վերջին տարիներին արդյունավետ աշխատանքներ են տարվել զբոսաշրջության զարգացման ուղղությամբ:

Բացատրելու, մեկնաբանելու և ներկայացնելու ունակությունները առանձնահատուկ տեղ են գրավում զբոսաշրջության ոլորտում: Դրա համար անհրաժեշտ է կազմակերպել հատուկ դասընթացներ մասնագիտացված, բարձր որակավորում ունեցող ուղեկցորդներ պատրաստելու նպատակով:

Դասընթացներում պետք է՝

- ապահովել հիմնական օտար լեզուների ուսուցում
- ներգրավել ԲՀՊՏ-ների մերձակա համայնքների ներկայացուցիչներին
- ինտեգրել զբոսաշրջության զարգացման և բնապահպանական խնդիրները
- առաջնահերթել իրազեկության և շրջակա միջավայրի պահպանության հարցերը
- դասավանդելու նպատակով ներգրավել մասնագիտացված տեղական կամ միջազգային ուղեկցորդներին
- ապահովել բավարար ժամանակային տևողություն:

## **8.4 Պահպանվող տարածքների նախապատրաստում զբոսաշրջային գործունեության համար**

### **8.4.1.Ենթակառուցվածք**

ԲՀՊՏ-ների բոլոր տիպի ինֆրակառուցվածքները պարտադիր պետք է նախագծվեն, կառուցվեն և սպասարկվեն բնական ու մշակութային շրջակա միջավայրին համահունչ լինելու սկզբունքներով:

ԲՀՊՏ-ներում կարող է լինել զբոսաշրջության հետևյալ ենթակառուցվածք՝

- այցելուների կենտրոններ
- կացարաններ
- սննդի և վաճառքի կետեր
- դիտելուն, ուսումնասիրելուն նպաստող ենթակառուցվածք
- ճանապարհներ, արահետներ, ջրային ուղիներ
- տեղեկացնող ենթակառուցվածք

- բացատրական ենթակառուցվածք
- այցելուների ֆիզիկական կարիքների համար ենթակառուցվածք
- կենցաղային պայմանների ապահովման և աղբահանման ենթակառուցվածք
- մուտքեր և ընդունարաններ
- անձնակազմի տնակներ:

Կախված պահպանության ռեժիմից, թույլատրելի ենթակառուցվածքի տիպերը պետք է ամրագրված լինեն տվյալ ԲՀՊՏ-ի կառավարման պլանում, մասնավորապես արգելոցներում ենթակառուցվածքը պետք է լինի խիստ սահմանափակ, փոքրածավալ և գլխավորապես պետք է տեղադրվի նրա սահմաններից դուրս:

### **Այցելուների կենտրոն**

Այցելուների կենտրոնները նպատակահարմար է ստեղծել ԲՀՊՏ-ի վարչական շենքին կից, ինչպես նաև նրա տեղամասերի ուղեփակոցների մոտ: Հարակից բոլոր մեծ համայնքներում նպատակահարմար է ստեղծել Այցելուների կենտրոնի ներկայացուցչություններ:

Այցելուների կենտրոնը կարող է համատեղել տեղեկատվական և բացատրական գործառնություններ: Դրա համար կենտրոնը պետք է համալրվի համապատասխան նյութատեխնիկական բազայով՝ ներառյալ տեղեկատվական և բացատրական նյութեր: Մասնավորապես պետք է ստեղծել և սպասարկել կացարանների և այլ ծառայությունների տվյալների բազա, ռեզերվացիայի հնարավորություն տարբեր եղանակներով՝ հեռախոսով, այցելությամբ, ինտերնետով: Կարելի է ընդգրկել նաև առևտրային գործունեություն, օրինակ՝ ի թիվս այլ նյութերի, այցելուներին տրամադրել տեղեկություններ զբոսաշրջային կացարանների ազատ տեղերի մասին, կիրառելով այս ծառայության դիմաց կացարաններից գումարը գանձելու տարբեր մեխանիզմներ:

Վիճակագրություն վարելը ոչ դյուրին, բայց շատ անհրաժեշտ գործ է: Անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի վարձակալներից, ինչպես նաև մոտակայքում գործող մյուս իրավական կարգավիճակ ունեցող զբոսաշրջային ծառայություններ մատուցողներից, պայմանագրով ամրագրված կարգով ստանալ վիճակագրական տվյալներ տարբեր ժամանակային կտրվածքներով: Հետագայում վիճակագրություն վարելու նպատակով կարելի է ստեղծել և կիրառել կուպոնային համակարգ: Այցելուների կենտրոնում կարելի է վաճառել կուպոններ, որոնք թույլ կտան օգտվել անվճար որոշ ծառայություններից, միաժամանակ լրացնել վիճակագրական քարտեր:

### **Կացարաններ**

ԲՀՊՏ-ի սահմաններում և հարակից տարածքներում տեղակայված կացարաններին պետք է ներկայացվի երկու տեսակի պահանջ՝

ա/ որակյալ մատուցվող ծառայություններ և սպասարկում,

բ/ էկոլոգիական չափանիշներ:

#### **ա/ Մատուցվող ծառայությունների և սպասարկման որակ**

Ջրոսաշրջային ծառայությունների և սպասարկման որակի գնահատումը և կառավարումը որքան կարևոր է ԲՀՊՏ-ների համար, այնքան էլ նեղ մասնագիտական և պարկի աշխատակազմի համար ոչ դյուրին գործ է: Ներկա պայմաններում և մոտ ապագայում այդ գործը վեր է Հայաստանի ԲՀՊՏ-ների անձնակազմի ուժերից և մասնագիտական հնարավորություններից: Այդ պատճառով առաջարկվում է միակ ռացիոնալ և արդյունավետ միջոցը՝ ԲՀՊՏ-ի սահմաններում և հարակից տարածքներում տեղակայված բոլոր կացարանները անցնեն Հայաստանի Հանրապետությունում կիրառվող **հյուրանո-**

**ցային տնտեսության օբյեկտների որակավորման** ընթացակարգը և ստանան որակավորման կարգեր:

**Բացատրություն**

Համաձայն «Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների, 2004 թվականից կառավարության կողմից սահմանված է Հայաստանի Հանրապետությունում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգ: Համաձայն այդ օրենքի «Հյուրանոցային տնտեսության օբյեկտներն են հյուրանոցները, մոթելները, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները, հանգստյան և մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնատները, զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիները (համալիրները), զբոսաշրջային տները»:

Որակավորման կարգ ստանալու համար պետք է դիմել ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից ստեղծված համապատասխան հանձնաժողովին:

**բ/ էկոլոգիական չափանիշներ**

Կացարանները պետք է համապատասխանեն հետևյալ էկոլոգիական չափանիշներին՝

- նախագծվեն, կառուցվեն և գործեն բնական և մշակութային միջավայրին ներդաշնակ
- անցնեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ փորձաքննություն
- նվազեցնեն աղբի քանակը, կատարելագործեն աղբի կուտակման և տեղափոխման ձևերը
- կատարելագործեն կեղտաջրերի մաքրման և հեռացման եղանակները, մասնավորապես զուգարանների հետ կապված
- ապահովեն էկոլոգիապես մաքուր ջրի և սննդամթերքի օգտագործում
- որդեգրեն ջրի խնայողության քաղաքականություն
- նվազեցնեն չվերարտադրվող աղբյուրներից ստացված էներգիայի օգտագործումը, որդեգրեն էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի կիրառման քաղաքականություն
- նախաձեռնեն շրջակա միջավայրի հետազոտման և պահպանության ծրագրեր կամ մասնակցեն գործող ծրագրերին
- կապեր հաստատեն և համագործակցեն տեղական համայնքների հետ, աշխատատեղեր առաջարկեն տեղի բնակչությանը
- ձեռք բերեն և տարածեն շրջակա միջավայրի առանձնահատկություններին և պահպանությանը վերաբերող տեղեկատվական և բացատրական /ինտերպրետիվ/ նյութեր (զբոսաշրջիկներին և աշխատակազմը կրթելու համար)
- առաջարկեն այցելուներին կրթական և մասնակցային բնապահպանական տուրեր:

էկոլոգիական չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացների վերաբերյալ մանրամասնությունները ներկայացված են 8.9.4. «Ջրոսաշրջության բացասական ազդեցության կառավարման միջոցներ» բաժնում:

ԲՀՊՏ-ներում կացարանները կարող են լինել ինչպես վրանային ճամբարների, այնպես էլ լեռնային խրճիթների տեսքով: Վրանային ճամբարները, վրանատեղերը և լեռնային խրճիթները պետք է լինեն ծավալով փոքր, հասարակ և համապատասխանեն վերը թվարկված էկոլոգիական չափանիշներին:

**Սննդի և վաճառքի կետեր**

Սննդի և վաճառքի կետերը նպատակահարմար է շահագործել գլխավորապես վարձակալներ-

րի միջոցով: Ըստ Հանրապետությունում ընդունված կարգի, սննդի կետերը չեն դասվում զբոսաշրջային օբյեկտների կարգին և կանոնակարգվում են քաղաքաշինական, սանիտարական և այլ իրավական նորմերով: Սակայն, գործելով ԲՀՊՏ-ի տարածքում, դրանք ևս պետք է համապատասխանեն զբոսաշրջային կացարանների ներկայացվող էկոլոգիական բոլոր չափանիշներին:

Հուշանվերների կրպակ պետք է գործի Այցելուների կենտրոնին կից:

### **Դիտելուն, ուսումնասիրելուն նպաստող ենթակառուցվածք**

Սրանց թվին են դասվում դիտակետերը և թաքստոցները: ԲՀՊՏ-ների լանդշաֆտային կառուցվածքից ելնելով, նպատակահարմար է դիտակետեր տեղադրել երթուղիների երկայնքով՝ լավագույն տեսադաշտ ունեցող բարձրադիր տեղանքներում: Բնական միջավայրը չխախտելու նպատակով դրանք պետք է լինեն տաղավարների կամ նստարանների տեսքով՝ անբարենպաստ եղանակից պաշտպանվելու, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու հնարավորությամբ:

Թռչնադիտողների համար հատուկ ստեղծված թաքստոցները կիրառվում են շատ երկրներում /տեղեկություններ և հետաքրքիր օրինակներ կարելի է գտնել [www.wildlifewatchingsupplies.co.uk](http://www.wildlifewatchingsupplies.co.uk); [www.bird-hiders.co.uk](http://www.bird-hiders.co.uk) կայքերում/: Դրանք տեղադրվում են թռչունների մշտական կուտակման վայրերում:

### **Ճանապարհներ, արահետներ, ջրային ուղիներ**

Արահետների տեղակայությունը պետք է համապատասխանի առաջարկվող զբոսաշրջային երթուղիներին: Դրանք կարող են լինել տարբեր երկարության և առաջարկեն տարբեր տիպի գրավչություններ, հնարավորության դեպքում ցանկալի է հասանելի լինեն մեկ մեկնարկային կետից: Գլխավորապես լեռնային ռելիեֆ ունեցող Հայաստանի ԲՀՊՏ-ներում անհրաժեշտ են արահետների մասնագիտորեն անցկացված նախագծման և բավականին ծավալուն կառուցապատման և բարեկարգման աշխատանքներ: Կատարող կազմակերպությունների ընտրությունը և աշխատանքների մոնիթորինգը բավականին դժվար և պատասխանատու գործ է: Կառուցապատման և բարեկարգման աշխատանքներում պետք է հնարավորինս օգտագործվեն գոյություն ունեցող արահետները և նվազագույնի հասցվի կամ բացառվի բացասական ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա:

Ճիշտ նախագծված և պատրաստված արահետները պետք է ունենան հետևյալ առանձնահատկությունները՝

- լինեն հեշտ գտնվող
- այցելուներին հասցնեն դեպի գրավիչ վայրեր
- պարունակեն տարբեր մակարդակի հետիոտն արշավելու հնարավորություններ /կարճ, երկար, դժվար, հեշտ/
- համեմատած շրջակա տարածքի հետ՝ լինեն ավելի հեշտ անցանելի
- լեռնային ռելիեֆ ունեցող տարածքներում ապահովեն վերելք, բայց ոչ կտրուկ
- ընձեռեն միակողմանի երթևեկության հնարավորություն /ցանկալի է լինեն օղակաձև/
- հատման կետերում կամ կողմնորոշվելու տեսակետից բարդ տեղերում ունենան ուղղություն ցույց տվող նշաններ
- շրջանցեն ռելիեֆի կամ կենսաբազմազանության տեսանկյունից շատ զգայուն և խոցելի վայրերը:

Շատ դեպքերում պետք է հնարավորություն տալ այցելուներին երթևեկել ինքնուրույն: Այդ նպատակով պետք է ապահովել նրանց պարզ քարտեզներ պարունակող արահետների ուղեցույ-

ցով: ԲՅՊՏ-ի անձնակազմի կամ մասնավոր զբոսաշրջային ձեռնարկությունների ուղեկցորդների ներկայությունը կարող է ավելի ցանկալի լինել մեծ խմբերի դեպքում, կամ խոցելի վայրերում: Սակայն անձնակազմի ներկայությունը պետք է տեղեկատվություն և բացատրություն տալու անհրաժեշտության դեպքերում, կարգավորում պահանջող դեպքերում, ինչպես նաև մոնիթորինգի համար:

Ինչ վերաբերում է հատուկ թռչնադիտական արահետների ցանցին, ապա դրանք, ըստ միջազգայնորեն ընդունված փորձի, ավելի շատ նախատեսվում են ոչ թե մասնագիտացված խմբերի /keen bird-watchers/ համար, այլ ունեն ավելի ընդհանուր իրազեկության և կրթական նպատակներ: Այդպիսի արահետներով այցելուները կարող են անցնել ինքնուրույն՝ նախօրոք ստանալով տեղեկատվություն Այցելուների կենտրոնից:

**Տեղեկացնող և բացատրող ենթակառուցվածք**

Բացի Այցելուների կենտրոններից, տեղեկացնող և բացատրող ենթակառուցվածքը պետք է տեղակայված լինի նաև ԲՅՊՏ-ի այլ՝ հաճախակի այցելվող վայրերում՝

- արահետների երկայնքով
- պատմամշակութային և բնության հուշարձանների մոտակայքում և դեպի դրանց տանող ճանապարհներին
- ճանապարհներին, բոլոր բնակավայրերի մուտքերի և ելքերի մոտ:

Դրանք պետք է լինեն ուղղություն տվող նշաններ, կանոնակարգող ցուցանակներ, ցուցասրահներ, ցուցավահանակներ և այլն: Ցուցանակները, նշանները, վահանակները պետք է լինեն հիմնովին պատրաստված, լավ նախագծված, հասկանալի ձևակերպված և տեղակայված բոլոր ռազմավարորեն անհրաժեշտ տեղերում, բայց ոչ ձանձրացնող: Նպատակների և անհրաժեշտ բովանդակության մասին տեղեկությունները ներկայացված են 8.4.2. Տեղեկատվություն և բացատրություն բաժնում:

**Այցելուների ֆիզիկական կարիքների համար ենթակառուցվածք: Կենցաղային ապահովման և աղբահանման ենթակառուցվածք**

Սրանց թվին են պատկանում հանգստի և սնվելու վայրերը, զուգարանները, աղբյուրները, պատսպարանները, ինչպես նաև ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարման սարքերը և աղբի տեղադրման հարմարությունները:

Այս տիպի ենթակառուցվածք անհրաժեշտ է ստեղծել ԲՅՊՏ-ի առավել այցելվող տարածքներում՝

- այցելուների կենտրոններին կից
- պատմամշակութային և բնության հուշարձանների շրջակայքում
- երթուղիների երկայնքով՝ վրանատեղերի և խրճիթների համալիրների կազմում:

**Մուտքեր և ընդունարաններ**

Այստեղ պետք է լինեն մեքենայի կանգառներ, տոմսերի, տեղեկատվանյութերի և հուշանվերների կրպակներ: Մեքենաների կանգառ պետք է ստեղծել նաև Այցելուների կենտրոնի մոտակայքում:

**Անձնակազմի տնակներ**

Անձնակազմի տնակները միայն անուղղակի կապ կարող են ունենալ զբոսաշրջության հետ, օրինակ այստեղ ևս կարելի է տեղադրել տեղեկատվական և բացատրական նյութեր, առաջին օգնության պարագաներ և այլն: Սակայն դրանք էլ այլ ենթակառուցվածքի նման պետք է նախագծվեն, կառուց-

վեն և սպասարկվեն բնական և մշակութային շրջակա միջավայրին համահունչ լինելու սկզբունքներով:

#### **8.4.2. Տեղեկատվություն և բացատրություն /ինտերպրետացիա/**

Զբոսաշրջիկներին՝ ժամանման և ողջ այցելության ընթացքում, ինչպես նաև տեղի բնակչությանը, պետք է մատչելի և որակյալ տեղեկատվություն մատուցվի, ինչը կարող է մեծագույնս նպաստել զբոսաշրջության կայուն զարգացմանը: Տեղեկատվություն մատուցելը կարող է նաև զուգակցվի ինտերպրետիվ /բացատրական/ էլեմենտների հետ, օգնելով բարձրացնել այցելուների իրազեկությունը շրջակա միջավայրի պահպանության հարցերի և տեղական համայնքների կարիքների վերաբերյալ:

**Տեղեկատվությունը** պետք է լինի հետևյալ բովանդակության՝

- *Նախօրոք, ժամանումից առաջ՝* եղանակը, փոխադրամիջոցներ, կացարաններ և այլ ծառայություններ, ճանապարհորդության տևողությունը և այլն
- *Ժամանումից հետո, ԲՀՊՏ-ի ներսում՝ կողմնորոշում, վարքի կանոններ, երթուղու տևողությունը, դժվարությունը և այլն:*

Կիրառվում են **տեղեկացման** հետևյալ միջոցները՝

- *անմիջական՝* այցելուների կենտրոններ, տեղեկատվական կրպակներ, փոստ, հեռախոս, էլեկտրոնային փոստ
- *ոչ անմիջական՝* ճանապարհորդական գրքույկներ, ուղեցույցներ, քարտեզներ:

**Ինտերպրետացիան** կազմակերպվում է հետևյալ միջոցներով՝

- *անմիջական՝* ուղեկցորդի բացատրություն, գործնական ցուցադրումներ
- *ոչ անմիջական՝* ցուցապաստառներ, էկրաններ, ուղեցույցներ, բրոշյուրներ, կինոնկարներ, ցուցահանդեսներ

Տեղեկացնող և ինտերպրետիվ ենթակառույցները /օրինակ՝ Այցելուների կենտրոնները, կանոնակարգող ցուցանակները, ցուցասրահները, ցուցավահանակները/ և տպագիր նյութերը /օրինակ՝ բրոշյուրները, տպագրված կանոնակարգերը/ պետք է կառուցվեն այնպես, որ ուղղված լինեն հետևյալ չորս նպատակներից առնվազն մեկի կատարմանը՝

1. *Բարձրացնեն այցելուների իրազեկությունը շրջակա բնական և մշակութային միջավայրի վերաբերյալ:* Դրա համար դրանք պետք է պարունակեն տեղեկություններ պատմության, մշակույթի, կենսաբազմազանության, բնական հուշարձանների վերաբերյալ և այլն:
2. *Հանգեցնեն այցելուների և տեղացիների վարքագծի փոփոխությանը:* Այցելուներին պետք է տրամադրվեն կանոններ և կանոնակարգեր, որևէ գործողություն ուղղակի արգելելու փոխարեն տրամադրվող նյութերը պետք է նպաստեն վարքագծի փոփոխությանը: Օրինակ՝ եթե ցուցանակին գրված է՝ «Արահետով անցնելն արգելվում է», մարդկանց, բնականաբար, ավելի է հետաքրքրում, թե ինչ կա այդ արահետի երկայնքով: Ավելի արդյունավետ տարբերակն է «Այս արահետի գերծանրաբեռնվածությունը բերել է հողի ծածկույթի էրոզիայի: Ընտրելով ուրիշ արահետ, դուք կօգնեք բնության վերականգնմանը»:
3. *Բացատրեն ԲՀՊՏ-ի նպատակները և խնդիրները:* Սա ոչ միայն կբարձրացնի իրազեկությունը, այլև կնպաստի այցելուների կողմից աջակցություն ստանալուն:
4. *Կողմնորոշեն այցելուներին տարածքի վերաբերյալ:* Տրամադրելով գրավիչ վայրերի և միջոցառումների ցուցակը, ինչպես նաև դրանց հասնելու ուղիները / օրինակ՝ քարտեզը/ կարելի է օգ-



նել այցելուներին որոշել իրենց հետաքրքրող վայրերը և հեշտացնել ռացիոնալ ճանապարհի ընտրությունը: ԲՀՊՏ-ի համար պետք է մշակվի մանրամասն հատակագիծ, որը մատչելի լինի յուրաքանչյուր այցելուի համար: Բացի դրանից, այցելուներին պետք է տրամադրվեն կանոնները, կանոնակարգերը և տեղեկությունները, որպեսզի նրանք կարողանան լիարժեք կերպով օգտվել տեսարժան վայրի այցելությունից և դրանով ավելի խթանվի նրանց ողջ այցելության նպատակը:

### **8.4.3. Սարքավորումներ և հանդերձանք**

Այցելուներին վարձով տալու նպատակով ԲՀՊՏ-ն պետք է ունենա զբոսաշրջային սարքավորումներ և հանդերձանք, այդ թվում՝

- վրաններ, քնապարկեր, արշավային խոհանոցային պարագաներ,
- հեռադիտակներ
- ձիեր և թամբեր
- լեռնային հեծանիվներ
- դահուկային հանդերձանք:

Բացի դրանից, ԲՀՊՏ-ն պետք է ապահովված լինի նաև որոնման, առաջին օգնության և փրկարարական աշխատանքներ կազմակերպելու անհրաժեշտ սարքավորումներով՝

- ռադիոկապի միջոցներ
- առաջին օգնության սարքավորումներ և դեղատուփեր
- պարաններ և այլ փրկարարական սարքավորումներ:

## **8.5. Առաջարկվող զբոսաշրջության ձևեր**

ԲՀՊՏ-ներում և հարակից տարածքներում առաջարկվող զբոսաշրջության ձևերը հիմնվում են *8.6.1. Այցելուների նպատակային խմբերի բացահայտում* բաժնում նկարագրված բնության այցելուների հիմնական տեսակների վրա: Պայմանականորեն ԲՀՊՏ-ներում զբոսաշրջության ձևերը կարելի է բաժանել 2 գլխավոր տիպերի՝ նեղ մասնագիտացված և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող:

Նեղ մասնագիտացված ձևերը կարող են լինել ինչպես դասական տուրերի, այնպես էլ հետազոտական արշավախմբերի տեսքով: Դրանց շարքին են դասվում՝

- վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկման/wildlife watching/, օրինակ՝ թռչնադիտական (birdwatching), բուսաբանական
- գեոէկոլոգիական, հնեաբանական, ճարտարապետական, ազգագրական և այլ տուրերը:

Առաջարկվող ընդհանուր հետաքրքրության երթուղիները բնության, մշակութային, արկածային/սպորտային և այլ գրավչություններ համատեղող ուղևորություններ են: Դրանք կարող են անցկացվել մեքենայով, հետիոտն/հեծյալ, դահուկներով, ինչպես նաև կոմբինացված արշավների ձևով:

Ձմեռային հանգստաձևերի հնարավորությունները օգտագործելու նպատակով կարելի է կազմակերպել ձյան վրա կենդանիների թողած հետքերի դիտարկումներ, դահուկային արշավներ և այլն: Դահուկային արշավները կարող են համատեղել լեռնա-հարթավայրային երթուղիներ՝ հատուկ

կտրված տեղանքների համար նախատեսված դահուկներով (cross-country and downhill ski combination):

ԲՀՊՏ-ներում և հարակից տարածքներում առանձին տեղ է զբաղեցնում առողջարանային զբոսաշրջությունը, որը հիմնված է առողջարարական և կլիմայական ռեսուրսների վրա:

ԲՀՊՏ-ների հարակից համայնքներում առկա է գյուղական զբոսաշրջության /ազրոզբոսաշրջության, էթնոզբոսաշրջության/ զարգացման մեծ ներուժ: Սա զուգակցվում է այլ զբոսաշրջային ձևերի հետ՝ զբոսանքներ ոտքով, դահուկներով, ձիերով, ավանակներով, մեքենայով, պատմամշակութային այցելություններ, սիրողական ձկնորսություն և այլն:

**Վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկման (wildlife watching)** տուրերից Հայաստանի պայմաններում մեծ հետաքրքրություն են ներկայացնում **թռչնադիտական (birdwatching) և բուսաբանական** տուրերը: Բացի թռչնադիտական տուրերից, կենդանական աշխարհի հետ կապված որոշ հետաքրքրություն Հայաստանի պայմաններում կարող է ներկայացնել միայն թիթեռների և համեմատաբար մեծ միջատների դիտումը: Այդպիսի հետաքրքրություն ունեցող վճարունակ այցելուների քանակը աշխարհում շատ չէ: Նրանք հազվադեպ են կազմում առանձին խմբեր, և հաճախ ընդգրկված են լինում թռչնադիտական խմբերի կազմում: Ըստ որում, միջատները գլխավորապես հետաքրքրություն են ներկայացնում մասնագետների համար:

Առանձին պետք է նշել հատուկ տիպի այցելուների մասին, որոնց կարելի է միավորել մի անվանման տակ՝ **հավաքածուներ կազմողներ**: Նպատակները կարող են լինել գիտական, սիրողական կամ վաճառքի համար: Այդ տիպի այցելությունները չեն դասվում էկոտուրիզմի շարքին: Դրանք պետք է խիստ սահմանափակվեն հատուկ գիտական նպատակ հետապնդող արշավախմբերով կամ լրիվ արգելվեն:

Ինչ վերաբերում է որոշ երկրների կենդանական ռեսուրսների վրա հիմնված և մեծ համբավ ստացած միջին և մեծ կաթնասունների դիտարկմանը, ապա դա հնարավոր է միայն հատուկ պայմաններում: Հայաստանի պայմաններում այցելուներին կարելի է ցույց տալ այդ տեսակների տիպիկ ապրելավայրերը, իսկ կենդանիներին տեսնելը միշտ չէ հնարավոր: Նույնը վերաբերում է և սողուններին:

**Թռչնադիտական (birdwatching)** տուրերը շատ տարածված ձև են և առանձնահատուկ տեղ են գրավում բնության հետ կապված զբոսաշրջության մեջ:

Հայաստանի բնակչության կողմից հետաքրքրությունը թռչնադիտարկման նկատմամբ դեռևս գտնվում է սկզբնական փուլում: Գլխավորապես այդ այցելությունները կազմակերպվում են մի քանի մասնագիտացված հասարակական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում: Դրանք հետապնդում են կրթական նպատակներ և ներգրավում են առավելապես դպրոցականներին: ԲՀՊՏ-ների շատ տարածքներ հետաքրքրություն են ներկայացնում այս տիպի այցելուների համար: Այստեղ պետք է հնարավորինս զարգացվի, կազմակերպվի և խրախուսվի տեղական բնակչության այցելությունները, ներգրավելով ոչ միայն դպրոցականներին, այլև մեծահասակներին:

Ինչ վերաբերում է արտերկրի վճարունակ մասնագիտացված խմբերին, ապա դրանց համար ևս Հայաստանի ողջ տարածքի և մասնավորապես ԲՀՊՏ-ների թռչնաշխարհը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, սակայն այդ զբոսաշրջիկները գերադասում են տեղ հասնել մեքենայով և միայն բարձրադիր՝ անանցանելի տարածքները անցնել հետիոտն՝ առավելագույնը 2-3 ժամվա տևողությամբ: Անհրաժեշտ է նշել, որ շատ դեպքերում արտերկրի մասնագիտացված խմբերի համար կարող է բոլորովին հետաքրքրություն չներկայացնել Հայաստանի համար հազվագյուտ թռչնատեսակը այն պարզ պատճառով, որ այցելելով աշխարհի բոլոր ծայրերը, նրանք այդ թռչնատեսակը տեսել են մի ուրիշ տեղ, այն էլ մեծ քանակությամբ: Այդ խմբերի մասնակիցները, չլինելով մասնագետ թռչնաբաններ, այնուամենայնիվ, շատ բանիմաց են թռչնաշխարհի վերաբերյալ և բավականին պահանջկոտ ուղեկցոր-

դի մասնագիտական որակավորման հանդեպ: Այդ պատճառով տուրի առանցքային դերակատարը մասնագետ ուղեկցորդն է ( birdwatching guide), ում իրավասության շրջանակներում է տվյալ տարվա և սեզոնի կտրվածքով հստակեցնելու թռչունների գտնվելու վայրերը և ուղեկցել այցելուներին: Ինչ վերաբերում է թռչունների գտնվելու ճշգրիտ վայրերին, ապա միանգամայն հասկանալի պատճառներով /և շատ անգամ թռչունների պահպանության նպատակներից ելնելով/, այդպիսի տեղեկություն հնարավոր և ընդունված չէ մատուցել զբոսաշրջային բուկլետների և ուղևորության հաշվետվությունների /trip reports/ էջերին:

**Բուսաբանական** տուրերը, ինչպես և թռչնադիտականները, մեծ դեր կարող են խաղալ տեղական բնակչության ճանաչողական և բնապահպանական կրթության համար և պետք է հնարավորինս զարգացվեն, կազմակերպվեն և խրախուսվեն, ներգրավելով ոչ միայն դպրոցականներին, այլև մեծահասակներին:

Ինչ վերաբերում է արտերկրի վճարունակ մասնագիտացված խմբերին, ապա դրանց մասնակիցների գերակշռող մասը մասնագետ-բուսաբաններ են: Միայն մի քանի մեծ միջազգային զբոսաշրջային օպերատորներ /օրինակ՝ որոշ ճապոնական, կամ գերմանական «Դոկտոր Կոխ»-ը/ կազմակերպում են հատուկ բուսաբանական տուրեր ոչ մասնագետների համար: Բուսաբանական տուրերում, ինչպես և թռչնադիտարկման դեպքում, երթուղու կոնկրետ ընտրության գործում տարվա և սեզոնի կտրվածքով, առանցքային դեր ունի մասնագետ ուղեկցորդը:

## **8.6. Էկոտուրիզմի շուկայավարում և գովազդ**

Շուկայավարման /մարքեթինգի/ միջոցով ստեղծվում է կապը **առաջարկի** և **պահանջարկի** միջև: Համեմատած ուրիշ տնտեսական ճյուղերի հետ զբոսաշրջության ոլորտում առաջարկի և պահանջարկի միջև փոխհարաբերությունը ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցից գլխավորն այն է, որ զբոսաշրջային արդյունքը\* /զբոսաշրջային պրոդուկտը/ անշարժ է: Ուստի պահանջարկը պետք է գնա դեպի առաջարկ և ոչ հակառակը:

Առաջին հայացքից այս առանձնահատկությունը կարող է թվալ առավելություն հարուստ մշակութային և բնական ժառանգություն ունեցող Հայաստանի համար ընդհանրապես և ԲՅՊՏ-ների համար՝ մասնավորապես: Սակայն տվյալ դեպքում սպառողը նախօրոք չի կարող տեսնել ապրանքը և որոշել գնե՞լ այն, թե՞ ոչ: Բացի դրանից, համաշխարհային շուկան առաջարկում է բնության վրա հիմնված զբոսաշրջության չափազանց հարուստ և լայն բազմազանություն, ներառյալ բազմաթիվ Ազգային պարկեր: Այդ իսկ պատճառով պահանջվում են շատ լուրջ ջանքեր՝ համոզելու համար պոտենցիալ այցելուին որոշել ի օգուտ տվյալ երկրի և տվյալ ԲՅՊՏ-ի: Դրա համար մարքեթինգը գրավում է առանձնահատուկ տեղ ցանկացած զբոսաշրջային ծառայություններ առաջարկողի, այդ թվում և ԲՅՊՏ-ի ռազմավարության մեջ: Այն պետք է մեծ տեղ գրավի պահպանվող տարածքների կառավարման գործողությունների մեջ:

Գովազդային և շուկայավարման գործունեությունը ծանոթ և բնորոշ է մասնավոր ձեռնարկատիրությանը: Քանի որ պահպանվող տարածքները առավել կենտրոնացված են բնապահպանական խնդիրների վրա, ավելի շահավետ է գովազդի և շուկայավարման բնագավառում սերտ համագործակցել մասնավոր զբոսաշրջային սեկտորի հետ /8.7. Համագործակցություն զբոսաշրջային մասնա-

\* Ձբոսաշրջային արդյունք՝ զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր, ըստ *Ձբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին* Հայաստանի Հանրապետության օրենքի

վոր սեկտորի հետ բաժին/: ԲՀՊՏ-ն պետք է շահագրգռի մասնավոր զբոսաշրջային սեկտորին համատեղելու իր ջանքերը պահպանվող տարածքի անձնակազմի հետ՝ տարածքի և հարակից վայրերի իրական իմիջը ստեղծելու նպատակով: Երբ զբոսաշրջիկը հարկ եղած ձևով տեղեկացված է այն մասին, թե ինչ է սպասվում ճանապարհորդության ընթացքում, ապա նա՝ տեսնելով սպասվածի չափով, բավարարված կլինի այցելությունից:

ԲՀՊՏ -ի շուկայավարման ռազմավարությունը պետք է ընդգրկի հետևյալ բաղադրիչները՝

- այցելուների նպատակային խմբերի բացահայտում
- գովազդային նյութերի ստեղծում, այդ թվում՝ վեբկայքի ստեղծում և սպասարկում
- գովազդային նյութերի տարածում
- ճանաչողական և գովազդային շրջագայությունների անցկացում
- մասնակցություն զբոսաշրջային միջոցառումներին
- հարցումների և դիմումների սպասարկում:

### **8.6.1. Այցելուների նպատակային խմբերի բացահայտում**

ԲՀՊՏ-ների համար այցելուների նպատակային խմբերի բացահայտումը ենթադրում է երկու տիպի հետազոտում՝

1. Ներկայիս այցելուների խմբերի ուսումնասիրում, նրանց կարիքների և սպասելիքների վերլուծություն:
2. Այն թիրախային խմբերի բացահայտում, որոնք չեն այցելում ԲՀՊՏ, սակայն կարող են լինել պոտենցիալ այցելուներ: Սպասված և իրական վիճակի տարբերության պատճառների վերհանում:

Այցելուների խմբերի արդյունավետ և շարունակական ուսումնասիրության համար անհրաժեշտ է ոչ միայն նպատակային հետազոտություններ կատարել նրանց շրջանում, այլև սերտ համագործակցել բոլոր ծառայություն մատուցողների հետ, ինչը պետք է լինի ԲՀՊՏ-ի կողմից զբոսաշրջության կառավարման եղանակներից մեկը: Ծառայություն մատուցողները ամենօրյա անմիջական շփման մեջ են այցելուների հետ, լավագույնս կարող են տեղեկություն տալ նրանց կարիքների և սպասելիքների վերաբերյալ: Մասնավորապես անհրաժեշտ է ԲՀՊՏ-ի տարածքների վարձակալների, ինչպես նաև մոտակայքում մյուս իրավական կարգավիճակ ունեցող զբոսաշրջային ծառայություններ մատուցողներից պայմանագրային կարգով հետագա վերլուծության համար ստանալ ամենամյա տեղեկություններ այցելուների հոսքի, տեսակի, կարիքների և այլ հարցերի վերաբերյալ:

Պահպանվող տարածքներ պոտենցիալ զբոսաշրջիկներին գրավելու համար շուկայավարման գլխավոր նախադրյալներն են՝


- տեղանքի գրավչությունը /հարուստ կենսաբազմազանություն, գեղատեսիլ լանդշաֆտներ, բնության և մշակույթի ինքնատիպ հուշարձաններ/
- զբոսաշրջային ենթակառուցվածքը / համապատասխան գիշերանցի և սնվելու հարմարություն, տրանսպորտ, ուղեկցողներ և այլն/:


Պոտենցիալ այցելուների բացահայտման համար թարգմանաբար ներկայացվում է միջազգային մասնագիտական գրականությունից վերցված հետևյալ աղյուսակը՝

Աղյուսակ 2. Բնության այցելուները և նրանց բնութագիրը


Տեսակը	Հիմնական հետաքրքրությունը	Զխաթարված բնության կարևորությունը	Ուղեկցորդի որակավորման պահանջ	Հարմարավետության պահանջներ	Պահանջարկի քանակական պոտենցիալը
1. Բնությանը նվիրված այցելու	Բնության հետազոտություն, հատուկ հետաքրքրություններ	շատ կարևոր է	Բնության հատուկ իմացություն	ցածր	ցածր
2. Բնությունով հետաքրքրված այցելու	Բնության հետազոտություն, էկոլոգիական փոխհարաբերություններ	կարևոր է	Բնության լավ իմացություն	ցածրից մինչև բարձր	միջին
3. Բնության պատահական այցելու	Հեշտ հասանելիություն/ բնության «բացահայտ» գրավիչ վայր	Պակաս կարևոր է	Բնության ընդհանուր իմացություն	միջինից մինչև բարձր	բարձր
4. Սպորտային/ արկածային այցելու	Կիզակետում է կոնկրետ զբաղմունքը	Բնությունը միայն ֆոն է	Տեղանքի իմացություն, տեխնիկական հմտություններ	ցածր	միջինից մինչև բարձր
5. Որսի/ձկնորսության նպատակով այցելու	Կիզակետում է կոնկրետ զբաղմունքը	Բնությունը միայն ֆոն է	Տեղանքի իմացություն, տեխնիկական հմտություններ	ցածր	ցածր
6. Մշակութային հետաքրքրություն ունեցող բնության այցելու	Տպավորություններ բնությունից և մշակույթից	Կարևոր է	Լավ բնության և շատ լավ մշակութային գիտելիքներ	ցածր	միջին

## Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքները





«Մևան» Ազգային պարկի տարացքա-գործառնական գոտիները



«Դիլիջան» Ազգային պարկի տարացքա-գործառնական գոտիները



Նկարը Շաննա Գալյանի

«Գնիշիկ» նոր ստեղծվող ազգային պարկ




Նկարը Վասիլ Անանյանի

Արագածի Քարե լիճ արգելավայր



Նկարը Վասիլ Անանյանի

«Շիկահող» պետական արգելոց



Նկարը Շաննա Գալյանի

Արարատ լեռը «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքից





Սկարր Շաննա Գալյանի

**Հաղարծնի վանք՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածք**



Սկարր Ալեքսանդր Մալխասյանի

**Գոգի լիճ՝ նոր ստեղծվող «Զանգեզուր» արգելավայր**



**Բողաքարի արգելավայր՝ նոր ստեղծվող «Արևիկ» ազգային պարկի տարածք**



**«Խոսրովի անտառ» պետական արգելոց**



Նկարը՝ Ալեքսանդր Մալխասյանի

**Քնախոտ ալբանական**



Նկարը՝ Վասիլ Անանյանի

**Գանգրափետուր հավալուսն**




Նկարը՝ Վասիլ Անանյանի

**Արփի լիճ՝ նոր ստեղծվող «Արփի լիճ» ազգային պարկ**



**Կովկասյան ազամա**



**Ռունացուպիկ**



**Հայրավանք՝ «Մեան» ազգային պարկի տարածք**



Նկարը՝ Ալեքսանդր Մալխասյանի  
Իգոր Խորոզյանի, Սիրտիչ Բոյաջյանի

**Առաջավորասիական ընձառյուծ**



Նկարը՝ Վասիլ Անանյանի

**Մապսան**



Նկարը՝ Ալեքսանդր Մալխասյանի

**Հայկական իժ**



Նկարը Ալեքսանդր Մալխասյանի

Անդրկովկասյան գորշ արջ



Նկարը Գանիլ Անանյանի

Կապտալիզող սախակ



Նկարը Ալեքսանդր Մալխասյանի

Հայկական մուֆլոն



Մախտակափող տխասկ



Կղմինդրաձև հիրիկ



Բեզոարյան այծ

1. *Բնությանը նվիրված այցելուներ*, սրանց թվին են դասվում՝
  - գիտնականներ և ուսանողներ, տարբեր գիտական արշավախմբերի մասնակիցներ՝ բուսաբաններ, կենդանաբաններ, հնագետներ, աշխարհագրագետներ, ճարտարապետներ, ազգագրագետներ և այլն
  - մասնագիտացված տուրերի մասնակիցներ՝ թռչնադիտական, բուսաբանական, գեոէկոլոգիական և այլն: Հաճախ ունենալով բոլորովին այլ հիմնական մասնագիտություն, այս տիպի զբոսաշրջիկները իրենց բոլոր արձակուրդները տրամադրում են ընտրած նախասիրությանը: Բոլորից հայտնին և տարածվածը թռչնադիտական տուրերն են:
2. *Բնությունով հետաքրքրված այցելու*: Սրանք տարբերվում են նախորդներից նրանով, որ ունեն ավելի բազմակողմանի հետաքրքրություններ, բայց չունեն նախորդներին բնորոշ խորացված գիտելիքներ:
3. *Բնության պատահական այցելու*: Սրանք չունեն որոշակի գիտելիքներ, ինչպես նաև որոշակի հետաքրքրություն բնության նկատմամբ: Նկատում և հրապուրվում են միայն աչքի ընկնող բնության տեսարաններով և հուշարձաններով:
4. *Սպորտային/արկածային այցելու*: Սրանց թվին են դասվում ջրային սպորտային ձևերի, հետիոտն արշավների և լեռնագնացության դահուկային արշավների, հեծյալ և հետիոտն/հեծյալ արշավների մասնակիցներ:
5. *Որսի/ձկնորսության նպատակով այցելու*: Ի հակասումն մերթ ընդ մերթ հնչող կարծիքների, պետք է արձանագրել և անվերապահորեն ընդունել այն իրականությունը, որ որսորդական տուրերի մասին կարելի է խոսել միայն որսորդական տնտեսությունների առկայության դեպքում, որոնք նպաստում են կենդանիների վերարտադրությանը, ինչը դեռևս իսպառ բացակայում է մեր պահպանվող տարածքներում:  
Ինչ վերաբերում է սիրողական ձկնորսությանը, ապա այն պետք է կանոնակարգված լինի այն առումով, որ որսի առարկա չդառնան անհետացման վտանգի տակ գտնվող և խոցելի տեսակները:
6. *Մշակութային հետաքրքրություն ունեցող բնության այցելու*: Այս տիպին է պատկանում Հայաստան այցելող զբոսաշրջիկների մեծամասնությունը:

Հայաստանի ԲՀՊՏ-ների այցելուների նպատակային խմբերը արդյունավետ բացահայտելու և գրավելու համար հարկ է ի նկատի ունենալ, որ աշխարհում բնության այցելուների մեծ շուկա ունեցող գլխավոր երկրներն են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Բրիտանիան, Հունդիան, Սկանդինավյան երկրները, Իսպանիան, Իտալիան և Ճապոնիան: Հայաստանի համար կրկին մեծ տեղ է սկսում գրավել Ռուսաստանի զբոսաշրջային շուկան:

Առանձնահատուկ պետք է նշել, որ մեր ԲՀՊՏ-ների բոլորից կարևոր այցելուն Հայաստանի բնակչությունն է:

Ելնելով դրանից, շուկայավարման զարգացման ուղղությամբ պետք է կարևորել ջանքերը Հայաստանի ներսում, իսկ արտասահմանյան շուկայում՝ առաջին հերթին հատկապես Եվրոպայում և Ռուսաստանում, իսկ երկրորդ հերթին Հյուսիսային Ամերիկայում: Շուկայավարման համար անհրաժեշտ



ռեսուրսների սահմանափակ ծավալների պայմաններում, առաջարկվում է արտասահմանյան շուկայում առաջին հերթին շուկայավարման ջանքեր / հաջորդ 2-3 տարիներին/ կենտրոնացնել Եվրոպայի միջին կարգից մինչև բարձրակարգ շուկայի սեգմենտներին: Հյուսիսային Ամերիկայի համեմատությամբ Եվրոպայի ավիաթիչքների ցածր գների պայմաններում հնարավոր է գրավել Եվրոպայից ժամանող զբոսաշրջային խմբերին: Բացի այդ, Ամերիկյան զբոսաշրջային շուկան դեռևս ամենազգայուն խավն է արտասահմանում տեղի ունեցող քաղաքական և այլ տիպի անհանգստությունների նկատմամբ ու առավել մեծ մարքեթինգային ջանքեր կպահանջվեն Հյուսիսային Ամերիկայում շուկան մեծացնելու նպատակին հասնելու համար:

### **8.6.2. Գովազդային նյութերի ստեղծում**

ԲՀՊՏ-ների համար անհրաժեշտ է հետևյալ տիպերի գովազդային նյութերի ստեղծումը՝

- տպագիր նյութեր՝ բրոշյուրներ, պլակատներ, քարտեզներ (հետիոտն, հեծյալ և մեքենայով երթուղիների համար), փոստային բացիկներ, ճանապարհորդական ուղեցույցներ, տեսարժան վայրերի համառոտ նկարագրություններ և այլն
- տեսանյութեր՝ ֆիլմեր, գովազդային տեսահոլովակներ և այլն
- էլեկտրոնային նյութեր՝ ինտերնետային վեբկայք:

Գրավիչ իմիջի ստեղծման համար առաջնահերթ անհրաժեշտություն է գրաֆիկական խորհրդանշան, ինչպես նաև տեքստային խորհրդանիշ ունենալը: Խորհրդանշանը հետագայում պետք է ներառված լինի բոլոր տեսակի գովազդային, տեղեկատվական, բացատրական և այլ նյութերում:

Արդյունավետ շուկայավարման ռազմավարության ձևերից է հղումները հարակից տարածքների զբոսաշրջային գրավչություններին, ինչպես նաև համատեղ գովազդային ջանքերը: Հեռանկարում անհրաժեշտ է համատեղ գովազդել Հայաստանի պահպանվող տարածքների ողջ ցանցը:

Հարկ է առանձնահատուկ նշել, որ գովազդային նյութեր պատրաստելը ցանկացած բնագավառում, այդ թվում և զբոսաշրջության ոլորտում, խիստ մասնագիտական գործ է: Սիրողական մակարդակով պատրաստված նյութերը ընդամենը միջոցների վատնում են և չեն հասնում իրենց նպատակին:

Սակայն պահպանվող տարածքների զբոսաշրջությունը ունի իր առանձնահատկությունները, իսկ Հայաստանում դեռ չկա դրանք գովազդելու փորձ: Այդ պատճառով ԲՀՊՏ-ների աշխատակիցների խնդիրն է ուղղորդել այդ գովազդային նյութերի պատրաստումը:

Պահպանվող տարածքների շուկայավարման ջանքերը պետք է ուղղված լինեն ոչ թե այդ տարածքները զբոսաշրջիկների լայն խավերի ցանկություններին հարմարեցնելուն, այլ համապատասխան խմբերի հայտնաբերմանը: Համապատասխանող զբոսաշրջիկը գնահատում և ձգտում է այն ամենին, ինչ կարող է առաջարկել պահպանվող տարածքը, այն է՝ չխաթարված բնություն, հարուստ կենսաբազմազանություն, տեղեկատվություն ստանալու և կրթվելու հնարավորություն, հանգիստ և խաղաղ մթնոլորտ:

Անհրաժեշտ է, որ ինչպես պահպանվող տարածքը, այնպես էլ զբոսաշրջային կազմակերպությունները ներկայացնեն տարածքի ոչ միայն **գրավիչ**, այլ նաև **ճշգրիտ** նկարագիրը: Օրինակ՝ եթե գովազդային նյութերում առաջարկվում են միաժամանակ անխաթար բնություն՝ հարուստ կենդանական և բուսական աշխարհով, իսկ մյուս կողմից՝ հեշտ հասանելիություն և բարձրակարգ հյուրանոցա-

յին պայմաններ ու զվարճություններ, դա իրավացիորեն կթվա անհավատալի և չի բերի ցանկալի արդյունքի:

Քանի որ պահպանվող տարածքներ այցելելը բնապահպանական կրթության գործուն միջոց է, գովազդային նյութերը պետք է արտացոլեն ԲՀՊՏ-ների բնապահպանական գաղափարախոսությունը: Նկարագրությամբ ստեղծված իմիջը պետք է արտացոլի տեղանքի իրական արժեքը, պարունակի իր մեջ ինքնատիպ ուղերձ՝ այցելել և տեսնել բնությունը անխաթար վիճակում, և ոչ թե առաջնակարգ հարմարություններ ստեղծելու համար լայնածավալ խախտել այն:

Բարձրակարգ զբոսաշրջային ինֆրակառուցվածք և ծառայություններ կարելի է ստեղծել ու գովազդել ԲՀՊՏ-ներից ոչ հեռու, սակայն այս դեպքում էլ դրանք պետք է իրենց արտաքին տեսքով և գործառույթներով լինեն շրջակա միջավայրին ներդաշնակ:

ԲՀՊՏ-ների գովազդային բոլոր նյութերը և միջոցառումները պետք է օգտագործել զբոսաշրջային սեզոնը երկարաձգելու համար: Դրան կարելի է հասնել՝ ձևակերպելով և ապա լայնորեն գովազդելով ողջ տարվա զբոսաշրջային հնարավորությունները, ներառյալ ձմեռային հանգստաձևերը:

### *Ինտերնետային կայք*

Ինտերնետը տրամադրում է պահպանվող տարածքների զբոսաշրջության շուկայավարման համեմատաբար նոր և ոչ թանկ միջոց: Ինտերնետի գրաֆիկական և ինտերակտիվ միջոցները թույլ են տալիս էֆեկտիվորեն գովազդել տարածքների զբոսաշրջային արդյունքը, ինչպես նաև կապեր հաստատել և հաղորդակցվել: Ինտերնետը հարմար միջոց է համարվում նախքան ճանապարհորդությունը տեղանքի և հաճախորդների ծառայությունների մասին տեղեկություններ տալու համար՝ ապահովելով հաճախորդների և ծառայություններ մատուցողների միջև ուղղակի հաղորդակցում արդյունավետ եղանակներով: Կայքի մեջ պարունակվող ինֆորմացիայի տեսակետից պետք է օգտվել ինտերնետի այն հնարավորությունից, որ համեմատած տպագիր նյութերի հետ կայքում կարելի է տեղադրել ավելի ծավալուն և մանրամասն տեղեկություններ բնական և մշակութային ժառանգության առանձնահատկությունների մասին:

ԲՀՊՏ-ի կայքը ստեղծելիս հարկավոր է առավելագույնս օգտագործել ինտերնետի ընձեռած ճկունության հնարավորությունները: Եթե տպագիր նյութերում առանձնակի հոգ պետք է տարվի տեղեկատվությունը սեղմ ներկայացնելու համար, ապա կայքում հնարավոր է և անհրաժեշտ է կիրառել կառուցվածքային աստիճանական սկզբունքը: Տրամաբանորեն ճիշտ ընտրված կառուցվածքը թույլ կտա տեղեկություն հասցնել կայքի տարբեր տիպի այցելուներին: Ցանկացած այցելուի պետք է հնարավորություն տալ ընդհանուր և սեղմ տեղեկատվություն պարունակող էջերից կապերի /լինկերի/ միջոցով արագ գտնել իրեն հետաքրքրող մանրամասն նյութը: Այդպիսով, կայք այցելած ցանկացած տիպի պոտենցիալ զբոսաշրջիկ արագ կգտնի այն տեղեկությունը, որը հենց իրեն է հետաքրքրում:

Կայքը պետք է ոչ միայն ունենա ճկուն փոխկապակցված կառուցվածք իր իսկ ներսում, այլև հղումների միջոցով կապված լինի բնութեով մոտիկ ուրիշ կայքերի հետ: Իր հերթին կարելի է դիմել նյուև կայքերին և ստանալ փոխադարձ հղումներ: Այս հանգամանքը խիստ անհրաժեշտ է ԲՀՊՏ-ին, քանի որ այդպիսով թույլ է տալիս մասն կազմել իր ոճի «ինտերնետային համայնքի»:

Կայքը պետք է, այսպես ասած «առաջ տարվի» ինտերնետում, ինչը ենթադրում է մասնագիտական գործողությունների շարք, որոնց արդյունքում կայքը կունենա հնարավորինս շատ այցելուներ: Բացի ստանդարտ ձևերից, որոնց տիրապետում են քիչ թե շատ այս գործում հմտացած մասնագետները, հարկ է օգտվել հատուկ կայքերի ծառայություններից, որոնք հանդես են գալիս որ-

պես «էլեկտրոնային զբոսաշրջային օպերատորներ» արկածային և բնության զբոսաշրջության համար: Այստեղ կարելի է գրանցել ԲՀՊՏ-ի առաջարկած զբոսաշրջային փաթեթը ամբողջությամբ, կամ առանձին ծառայությունները գների հետ միասին: «էլեկտրոնային զբոսաշրջային օպերատորը» ավելացնում է զինը իր մատուցած միջնորդական ծառայության չափով և կազմակերպում տուրի վաճառքը ինտերնետում:

Կայքը պետք է ոչ միայն հաջողությամբ ստեղծվի և տեղադրվի ինտերնետում, այլև մշտականորեն արդյունավետ սպասարկվի և պարբերաբար թարմացվի տարածքի վերաբերյալ նորություններով: Արդյունավետ է ստեղծել և ընդգրկել որևէ տիպի պարբերական, օրինակ՝ ԲՀՊՏ-ի նորություններին վերաբերող: Կայքի բոլոր էջերը պետք է պարունակեն ակտիվ հղում կապող աշխատակցի էլեկտրոնային հասցեին, որը պետք է արագ արձագանքի բոլոր հարցումներին:

Օգտվելով ինտերնետի և էլեկտրոնային կապի ընձեռած հնարավորություններից, ԲՀՊՏ-ն կարող է անդամակցել մասնագիտացված միջազգային կազմակերպություններին և միություններին, ստանալ մշտական տեղեկություններ, ընդգրկվելով էլեկտրոնային մասնագիտացված ցուցակներին (mailing lists), ակտիվ մասնակիցը լինելով էլեկտրոնային համաժողովների /կոնֆերանսների/ և անդամակցելով մասնագիտացված միջազգային կառույցներին /[www.europarks.org](http://www.europarks.org); [www.ecotourism.org](http://www.ecotourism.org); [www.panparks.org](http://www.panparks.org)/ .

### **8.6.3. Գովազդային նյութերի տարածում**

ԲՀՊՏ-ն կարող է տարածել գովազդային նյութերը երկու տիպի միջոցներով՝

- *տարածում լրատվական միջոցներով՝* գովազդներ և հոդվածներ, մասնագիտացված ճանապարհորդական ամսագրեր, ճանապարհորդական ուղեցույցներ, հեռուստատեսություն
- *տարածում միջնորդների միջոցով՝* մասնագիտացված զբոսաշրջային օպերատորներ, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ, տեղական զբոսաշրջային կացարաններ և հյուրանոցներ, օդանավակայաններ:

Զբոսաշրջային օպերատորն է այն գլխավոր օղակը, որի հետ համագործակցելով ԲՀՊՏ-ն կարող է ունենալ այցելուներ. Այս հարցը ավելի հանգամանորեն պարզաբանվում է 8.7. *Համագործակցություն զբոսաշրջության մասնավոր սեկտորի հետ* բաժնում:

ԲՀՊՏ-ների զբոսաշրջային գործունեության մեջ մեծ նշանակություն կարող է ունենալ համագործակցությունը զբոսաշրջության Ջարգացման Հայկական Գործակալության (ՁՀՀԳ) հետ, որը իր առաքելությունը իրականացնում է ինչպես Հայաստանում, անպես էլ արտերկրում: Գործակալության աշխատանքների թվին են պատկանում Հայաստանի ներկայացումը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին և համաժողովներին, հատուկ տոնակատարությունների և միջոցառումների ֆինանսավորումը, արտասահմանյան զբոսաշրջային օպերատորների, գործակալների, լրագրողների և զբոսաշրջային գրողների համար ճանաչողական ու գովազդային շրջագայությունների անցկացումը և այլն:

2001 թվականից Երևանի կենտրոնում գործում է զբոսաշրջության Ջարգացման Հայկական Գործակալության **Այցելուների տեղեկատվական կենտրոն** /URL[www.armeniainfo.am/](http://www.armeniainfo.am/): կոչվող կառույցը: Այս կենտրոնը կարող է նաև զբոսաշրջային շուկա հանել Հայաստանի պահպանվող տարածքները:

#### **8.6.4. Ճանաչողական և գովազդային շրջագայությունների անցկացում**

Գովազդի արդյունավետ ձևերից է ճանապարհորդական գործակալությունների, արտասահմանցի մանրածախ գործակալների, լրատվության միջոցների, զբոսաշրջային գրողների համար ծանոթացման շրջագայությունների կազմակերպումը: Քանի որ սա բավականին ծախսատար միջոցառում է, ԲՀՊՏ-ն կարող է դա կազմակերպել՝ համագործակցելով տեղական զբոսաշրջության մյուս մատակարարների՝ ռեստորանների, զբոսաշրջային կացարանների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև Ջբոսաշրջության Ջարգացման Հայկական Գործակալության հետ, որը պարբերաբար կազմակերպում է ճանաչողական այցեր արտերկրի առաջատար թերթերի ու ամսագրերի լրագրողների համար: Ջբոսաշրջության Ջարգացման Հայկական Գործակալությունը մշտապես պատրաստակամ է փոխշահավետ ծրագրերին մասնակցելու հնարավորություն ընձեռել զբոսաշրջային ինդուստրիայով հետաքրքրված կառույցների համար: Այդ դերում կարող են հանդես գալ նաև պահպանվող տարածքները:

#### **8.6.5. Մասնակցություն զբոսաշրջային միջոցառումներին**

Մասնակցությունը ավանդական միջազգային ամենամյա ճանապարհորդական ցուցահրումներին չափազանց կարևոր է բոլոր զբոսաշրջային ծառայություններ մատուցողների, այդ թվում և պահպանվող տարածքների համար: Այս հավաքները համարվում են կարևորագույն կենտրոններ մատակարարների համար, որի ընթացքում նրանք կարող են հանդիպել արտասահմանյան մանրածախ գործակալներին: ԲՀՊՏ-ները պետք է համագործակցեն Ջբոսաշրջության Ջարգացման Հայկական Գործակալության հետ, որը մինչ այսօր ներկայացնելով Հայաստանը Լոնդոնի, Բեռլինի, Տոկիոյի, Միլանի, Թբիլիսիի, Բեյրութի, Դուբայի, Ուտրեխտի, Մադրիդի, Ստամբուլի, Պեկինի և այլ միջազգային ճանապարհորդական ցուցահանդեսներում, կարող է աջակցել նաև պահպանվող տարածքների զբոսաշրջային արդյունքը միջազգային շուկա դուրս բերելու գործում:

#### **8.6.6. Հարցումների և դիմումների սպասարկում**

ԲՀՊՏ-ների զբոսաշրջության սպասարկման անձնակազմից պահանջվելու է ամենօրյա հետևողական աշխատանք հարցումների և դիմումների սպասարկման գործում: Սա վերաբերում է ինչպես Այցելուների կենտրոն հաճախողներին, այնպես էլ էլեկտրոնային փոստով դիմողներին: ԲՀՊՏ-ի աշխատակիցը պետք է արագ արձագանքի էլեկտրոնային հասցեին ստացած բոլոր հարցումներին: Ուշացած պատասխան նամակը հավասարազոր է կորցրած հաճախորդի:

### **8.7. Համագործակցություն զբոսաշրջության մասնավոր սեկտորի հետ**

Ջբոսաշրջության սեկտորի գլխավոր դերակատարներն են՝ մի կողմից զբոսաշրջիկները /պահանջարկ/, մյուս կողմից՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցողները /առաջարկ/:

Ջրոսաշրջային ծառայություններ առաջարկելը գլխավորապես մասնավոր ձեռնարկությունների բնագավառն է: Ջրոսաշրջության մասնավոր ձեռնարկություններն այն գլխավոր օղակն են, որը ապահովելու է այցելուների հոսքը պահպանվող տարածքներ: Հաստատելով սերտ կապեր զբոսաշրջության մասնավոր սեկտորի հետ, պահպանվող տարածքի անձնակազմը կարող է հասկանալ զբոսաշրջիկների իրական պահանջները և ավելի արդյունավետ կերպով ապահովել զբոսաշրջային գործակալությունների կողմից առաջարկված պայմանները: Բացի այդ, համագործակցության արդյունքում հնարավոր է հասնել զբոսաշրջային գործակալությունների կողմից բնապահպանական առաջնահերթությունների ավելի լավ ըմբռնմանը:

### **8.7.1. Ջրոսաշրջության մասնավոր ձեռնարկությունների տիպերը**

Ջրոսաշրջության մասնավոր ձեռնարկությունների հետ պահպանվող տարածքների համագործակցության մեխանիզմները հետագայում պարզաբանելու համար ստորև ներկայացված են զբոսաշրջային ինդուստրիայի գլխավոր բաղադրիչները և նրանց շատ սեղմ նկարագրությունը՝

#### **1. Արտագնա զբոսաշրջային օպերատորներ**

Կազմակերպում և վաճառում են լրիվ ծառայություններով ճանապարհորդական փաթեթներ: Արտագնա զբոսաշրջային օպերատորների գլխամասային գրասենյակները գտնվում են այն երկրներում, որտեղից գլխավորապես գալիս են նրանց հաճախորդները: Արտագնա զբոսաշրջային օպերատորները զբոսաշրջային խմբեր են ուղարկում տարբեր երկրներ և վայրեր, զբոսաշրջիկներին ընդունող երկրներում ունենում են իրենց ներկայացուցչությունները/գործակալները, կամ գործում են տվյալ երկրի ներգնա զբոսաշրջային օպերատորների միջոցով:

#### **2. Ներգնա զբոսաշրջային օպերատորներ**

Տեղավորված են տվյալ երկրում, կամ վայրում: Իրականացնում են զբոսաշրջային արդյունքի ձևավորման, խթանման և իրացման գործունեություն, ինչի արդյունքում տրամադրվում է զբոսաշրջային փաթեթ: Ներգնա զբոսաշրջային օպերատորները անցկացնում են ամբողջ տուրը տվյալ երկրի սահմաններում: Կարող են գործել անկախ կամ համագործակցելով արտագնա զբոսաշրջային օպերատորների հետ: Ներգնա զբոսաշրջային օպերատորները կազմակերպում են ուղևորություններ ոչ միայն դրսի, այլև երկրի ներսում բնակվող քաղաքացիների համար: Պահպանվող տարածքներին առավել նպատակահարմար է համագործակցել ներգնա զբոսաշրջային օպերատորների, քան արտերկրում գտնվող արտագնա զբոսաշրջային օպերատորների հետ:

#### **3. Տրանսպորտային միջոցներ տրամադրողներ**

Սրանց թվին են դասվում ինչպես միջազգային՝ ավիաուղիներ, երկաթգիծ, ջրային և ճանապարհային տրանսպորտ, այնպես էլ տեղական տրանսպորտի միջոցներ տրամադրողները՝ զբոսաշրջային օպերատորների կողմից օգտագործվող տրանսպորտի միջոցներ, ջրային լողամիջոցներ, հանրային տրանսպորտ, ինչպիսին են տաքսիները, ավտոբուսները և այլն:

#### **4. Կացարաններ տրամադրողներ**

Դրանք են՝ հյուրանոցները, մոթելները, հյուրատները, առողջարանները, հանգստյան տները, ճամբարային բնակատեղիները և այլն՝ ինչպես պահպանվող տարածքների մոտակայքում, այնպես էլ այլ վայրերում գտնվող կացարանները:

#### **5. Սնունդ տրամադրողներ**

Սրանք են ռեստորանները, բարերը, սրճարանները, ինչպես նաև սննդամթերք արտադրողները և մատակարարողները:

## 6. Այցելուին հետաքրքրող միջոցառումներ և վայրեր

Սրանց թվին են պատկանում մեծաթիվ միջոցառումներ և վայրեր, որոնք գրավում են զբոսաշրջիկների՝ թանգարաններ, ցուցահանդեսներ, առևտրի կենտրոններ, սպորտային, մշակութային և թեմատիկ միջոցառումներ և այլն:

Պահպանվող տարածքների և զբոսաշրջային ձեռնարկությունների համագործակցությունը կարող է օգտակար լինել՝ բերելով այցելուներ, ինչպես նաև ապահովել տուրերի այնպիսի կառավարումը, որը նվազագույնս կվնասի բնությանը: Բացի դրանից՝ ներդնելով իրենց գիտելիքները և փորձը, նրանք կարող են օգտակար լինել պահպանվող տարածքներին շուկայում մրցունակ զբոսաշրջային արդյունք ձևավորելու համար:

Պահպանվող տարածքները պետք է հնարավորինս լայնորեն օգտագործեն մասնավոր զբոսաշրջային ինդուստրիայի ներդրումը, որը գլխավորապես կարող է դասվել հետևյալ կատեգորիաների՝

1. Կատարելագործել և անցկացնել պահպանվող տարածքների հետ կապված տուրեր:
2. Բարձրացնել զբոսաշրջիկների իրազեկությունը տարածքը պահպանելու հարցերում:
3. Համագործակցել մուտքի վճարներ հավաքելու գործում:
4. Նպաստել նվիրատվություններին:
5. Վաճառել պահպանվող տարածքներին վերաբերող ապրանքներ՝ հուշանվերներ, պահպանվող տարածքի խորհրդանիշը կրող հագուստ, գրքեր:
6. Ծավալել զբոսաշրջային գործունեություն վարձակալված տարածքներում:

## 8.7.2. Համագործակցության հիմնական գործողությունները

Գործնական քայլերը, որոնք պահպանվող տարածքը պետք է կատարի զբոսաշրջային ձեռնարկությունների հետ կապեր հաստատելու/ուժեղացնելու համար՝

1. Համագործակցության նախապատրաստումը:
2. Կապերի հաստատումը:
3. Կապերի խորացումը:

**Համագործակցության նախապատրաստումը** կոչված է ավելացնելու արդյունավետ համագործակցության հավանականությունը և ընդգրկում է՝

ա/ զբոսաշրջության զարգացման ցանկալի ծավալի և ձևերի հստակեցումը,

բ/ առաջարկի՝ զբոսաշրջային արդյունքի ձևավորումը,

գ/ զբոսաշրջության և բնապահպանության նպատակների ներդաշնակեցումը:

**Կապերի հաստատումը** ընդգրկում է շահագրգիռ կազմակերպությունների ճիշտ ընտրությունը, ինչպես նաև նրանց հետ կապվելու պրակտիկ քայլերը:

Հարաբերությունները ճիշտ կարգավորելու համար շատ մեծ դեր ունի այն տեղեկությունը, որը կփոխանցվի կապերի հաստատման սկզբնական փուլում՝ առաջին հանդիպումների ժամանակ: Պահպանվող տարածքը պետք է նախապատրաստի մանրամասնություններ պարունակող տեղեկատվական փաթեթ առաջարկվող ծառայությունների, ինչպես նաև բնապահպանական սկզբունքների և նախաձեռնությունների վերաբերյալ: Ցանկալի է, որ այն ներառի հետագա համագործակցության առաջարկներ՝ առկա երթուղիների համատեղ գովազդ, նոր երթուղիների և էքսկուրսիաների մշակում, պահպանվող տարածքում գործող ծրագրերի աջակցության առաջարկություններ և այլն:

Բնապահպանական ծրագրերին աջակցություն ստանալու համար անհրաժեշտ է, որ ծրագրերը լինեն լավ մշակված՝ պարզորոշ բացատրված լինի առաջարկվող գործողությունները և դրանց բնապահպան ուղղվածությունը, հաշվապահության և հաշվետվության ընթացակարգերը և այլն: Այն պետք է ներառի պոտենցիալ նվիրատվությունը գովազդող հնարավորությունների նկարագրությունը /պահպանվող տարածքի խորհրդանշանը գովազդային նյութերում օգտագործելու թույլտվություն և այլն/:

Սակայն պետք է հիշել, որ մասնավոր ձեռնարկությունները գործում են խիստ մրցակցային դաշտում և բնապահպանական ծրագրերին աջակցելու համար հաճախ սահմանափակ հնարավորություններ ունեն: Այս առումով պահպանվող տարածքի բնապահպանական ծրագիրը զբոսաշրջային ձեռնարկության համար պետք է շատ իրատեսական լինի՝ սպասված աջակցության ձևերի և ծավալների առումով:

Պահպանվող տարածքի ներսում կամ մոտակայքում գործող զբոսաշրջային ձեռնարկությունների հետ կապեր հաստատելու և համագործակցելու անհրաժեշտությունը առավել ակնհայտ է: Նրանք մի կողմից պահպանվող տարածքի կողմից առաջարկվող ծառայությունները սպառողներն են, մյուս կողմից իրենք իսկ առաջարկում են այն ամենը, ինչը բացակայում է պահպանվող տարածքում զբոսաշրջությունը արդյունավետ կազմակերպելու համար:

Ազգային ներգնա զբոսաշրջային օպերատորները, ինչպես նաև օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների հայաստանյան ներկայացուցչությունները կազմում են այն մասնագիտացված օղակը, որը գովազդում և իրականացնում է երկրում տուրերի ամբողջական փաթեթը: Օտարերկրյա և մասամբ տեղական զբոսաշրջիկները կայցելեն պահպանվող տարածքներ հենց այս օղակի միջոցով: Բացի դրանից, գործնական հարցերում սա բոլորից լավատեղյակ օղակն է, որը իր փորձառության և հարուստ գիտելիքների շնորհիվ կարող է առավելագույնս աջակցել զբոսաշրջության զարգացմանը պահպանվող տարածքներում: Մեծ օգուտ կարող է բերել համագործակցությունը «Հայաստանի ներգնա զբոսաշրջային օպերատորների միություն» մասնագիտացված հասարակական կազմակերպության հետ, որի գլխավոր նպատակը Հայաստանում զբոսաշրջության գործընկերներ գտնելուն աջակցելն է:

Հայաստանով հետաքրքրվող միջազգային արտագնա զբոսաշրջային օպերատորների հետ կապեր հաստատելը ոչ դյուրին, մասնագիտական, բավականին աշխատատար և ֆինանսատար գործ է: Այդ իսկ պատճառով աշխարհի պահպանվող տարածքները մեծամասամբ անմիջականորեն համագործակցում են երկրում նրանց ներկայացուցիչների և ազգային ներգնա զբոսաշրջային օպերատորների հետ: Սակայն պահպանվող տարածքներին օգտակար է տեղեկացված լինել միջազգային զբոսաշրջային օպերատորների շրջանակներում առկա այն տեղեկանքների վերաբերյալ, որոնք անմիջականորեն կապված են բնության պահպանության և պահպանվող տարածքների հետ: Այդ տիպի գործունեության վառ օրինակն է «Հանուն զբոսաշրջության կայուն զարգացման տուրօպերատորների նախաձեռնությունը» /*Tour Operators' Initiative for Sustainable Tourism Development, www.toinitiative.org/*:

Տուրօպերատորների մի խումբ աշխարհի տարբեր երկրներից միացել է, ստեղծելով այս նախաձեռնությունը, որի միջոցով ջանում է որպես գործունեության առանցք որդեգրել կայուն զարգացման հիմունքները և արդյունքում՝ նվազեցնել զբոսաշրջության բացասական ազդեցությունն ու առավելագույնս օգտակար լինել շրջակա բնական և մշակութային միջավայրի և տեղի բնակչության համար:

Այս նախաձեռնությունը ստեղծվել է զբոսաշրջային օպերատորների կողմից և վերջիններիս համար մի շարք միջազգային կազմակերպությունների աջակցությամբ՝ UNEP, UNESCO, WTO: Կազ-

մակերպությունը կամավորական է, շահույթ չհետապնդող և բաց է բոլոր զբոսաշրջային օպերատորների համար, անկախ նրանց կարողություններից և տեղակայությունից: Կազմակերպությունը կատարում է պիլոտային ծրագրեր տարբեր վայրերում, այդ թվում՝ Քրոաթիայում, Թուրքիայում և Դոմինիկյան հանրապետությունում:

**Կապերի ամրացնելը** ենթադրում է շարունակական աշխատանք հետագա հարաբերությունները ամրապնդելու ուղղությամբ: Այն դեպքում, երբ մասնավոր ձեռնարկությունը որոշել է ընդգրկել պահպանվող տարածքը իր տուրերի ցանկում, անհրաժեշտ է նրան մշտապես տեղյակ պահել տարածքում զբոսաշրջության հետ կապված բոլոր փոփոխություններին: Անգամ եթե զբոսաշրջային օպերատորը արդեն տպագրել է իր գովազդային բրոշյուրը, նա կարող է փոփոխությունների մասին տեղեկությունները ընդգրկել զբոսաշրջիկների ժամանմանը նախորդող նյութերի կամ այն տեղեկության մեջ, որը տրվում է ժամանման պահին: Ջբոսաշրջիկների այցելության ընթացքում և հետո զբոսաշրջային օպերատորին պետք է տեղեկացված պահել տուրի բոլոր մանրամասնությունների վերաբերյալ:

Եթե զբոսաշրջային ձեռնարկությունը իր միջոցներից կամ այցելուների միջոցով ֆինանսապես աջակցել է պահպանվող տարածքի որևէ ծրագրին, ապա նրան անհրաժեշտ է մշտական տեղեկացված պահել ծրագրի ընթացքի մասին: Դա կնպաստի առողջ և երկարատև համագործակցությանը զբոսաշրջային ձեռնարկության և պահպանվող տարածքի միջև:

Ջբոսաշրջային ինդուստրիայի ներկայացուցիչների հետ համագործակցման բոլոր փուլերում շատ կարևոր է ընդգծել պահպանվող տարածքի բնապահպանական նպատակը, որպեսզի պարզ լինի, որ զբոսաշրջության զարգացումը տվյալ տարածքում հետապնդում է ոչ թե պարզապես շահույթ ստանալու նպատակ, այլ կոչված է աջակցելու բնապահպանական խնդիրների լուծմանը:

## **8.8. Տեղական բնակչության մասնակցություն**

Պահպանվող տարածքներում զբոսաշրջության զարգացման գլխավոր նպատակը բնության պահպանությունն է, որը կարող է արդյունավետ լինել զբոսաշրջությունից տեղական բնակչությանը կայուն և շոշափելի օգուտներ ապահովելով: Ապահովելով եկամուտների այլընտրանքային հնարավորություն պահպանվող տարածքների շրջակա բնակչության համար, զբոսաշրջությունը կվերհանի պահպանված բնական ռեսուրսների տնտեսական արժեքը: Կարևոր է գտնել զբոսաշրջությունից տեղի բնակչության օգտվելու ճանապարհները: Դա կնվազեցնի բնության շահագործումը և կնպաստի բնապահպանական իրազեկության բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ նպատակահարմար է կիրառել բնակչության կողմից աջակցություն ստանալու երկու ուղի՝

- ներգրավել նրանց պահպանվող տարածքների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացներում
- առավելագույնս ապահովել շրջակա բնակչության համար զբոսաշրջությունից օգուտ ստանալու հնարավորությունները:



### 8.8.1. Մասնակցային պլանավորում և կառավարում

Որպես առաջին քայլ այս ուղղությամբ պետք է քննարկել զբոսաշրջության զարգացման հարցերը շրջակա համայնքներում: Որպես մասնակցային որոշումներ ընդունելու կարևոր օղակ առաջարկվում է ստեղծել **մշտական գործող Խորհուրդ**, որը բաղկացած կլինի 3 գլխավոր շահառու կողմերի ներկայացուցիչներից՝ պահպանվող տարածքի անձնակազմ, համայնքներ, զբոսաշրջության սեկտոր: Դա կարող է նաև մաս կազմել ազգային պարկի ընդհանուր Խորհրդի: Այդպիսով հնարավոր է կիրառել զբոսաշրջության առավել էֆեկտիվ «ներքևից դեպի վերև» ռազմավարությունը:

Մասնակցային պլանավորումը և կառավարումը կարող է վերաբերել ինչպես բուն պահպանվող տարածքում, այնպես էլ շրջակա համայնքներում իրագործվող զբոսաշրջության ծրագրերին, որոնք անմիջականորեն փոխկապակցված են:

Ինչպես մնացած ոլորտներում, այնպես էլ զբոսաշրջության ոլորտում, պահպանվող տարածքը չի կարող հաջողության հասնել մեկուսացված պայմաններում: Համակապակցված գործելու համար անհրաժեշտ է սերտ կապեր հաստատել տարածքում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, ինչը թույլ կտա մշտականորեն տեղյակ լինել շրջակա համայնքներում գործող կամ նախատեսվող զբոսաշրջությանը վերաբերող բոլոր ծրագրերից:

### 8.8.2. Տեղական բնակչության տնտեսական մասնակցություն

Ջբոսաշրջության ոլորտում տեղական համայնքների մասնակցությունը կարող է հիմնված լինել ինչպես պահպանվող տարածքների ռեսուրսների, այնպես էլ այլ մշակութային և բնական առանձնահատկությունների վրա:

**Աղյուսակ 3-ում** ներկայացված են տեղական բնակչության հնարավոր տնտեսական մասնակցության տարբեր մակարդակները՝ սկսած պասսիվ շահույթ ստանալուց /զբոսաշրջության ոլորտում անմիջական մասնակցություն չունենալով/ մինչև անկախ համայնքային ձեռնարկություն հիմնելուն: Դրանցից յուրաքանչյուրը ունի իր առավելությունները և թերությունները: Մասնակցության նախընտրելի ձևը կապված է առկա իրավիճակներից, մասնավորապես՝ համայնքների հնարավորություններից: Հաճախ բոլորից գերադասելին տարբեր ձևերի համակցությունն է:

Աղյուսակ 3. Տեղական բնակչության տնտեսական մասնակցության ձևերը

Մասնակցության ձևը	Պահանջվող հմտությունների աստիճանը	Շահույթ ստացողները	Տեղական տնտեսական զարգացմանը նպաստելու մակարդակը
Ներդրողներին հողատարածքներ վաճառելը	Ոչ մի, բացառությամբ սակարկելու ունակությունից	Առանձին անձինք կամ ամբողջ համայնքը՝ կախված հողի սեփականության ձևից	ցածր
Հողատարածքները վարձակալման հանձնելը կամ օգտագործման իրավունքների փոխանցելը	Ոչ մի, բացառությամբ սակարկելու ունակությունից	Առանձին անձինք կամ ամբողջ համայնքը՝ կախված հողի սեփականության և օգտագործման իրավունքի ձևից	ցածր
Դրսի ներդրողներին համար վարձով աշխատելը	Ցածրից մինչև միջին: Բարձր՝ որակյալ աշխատանքի համար	Առանձին անձինք, ներառյալ աղքատ խավը	միջին
Ապրանքներ մատակարարելը և ծառայություններ մատուցելը	Ցածրից մինչև միջին: Բարձր՝ որակավոր ուղեկցորդների համար	Առանձին անձինք, բարենպաստ է համայնքի ավելի գործունյա անդամների համար	միջին
Համայնք-մասնավոր ձեռնարկատեր համատեղ ձեռնարկություն	միջին	Գործունյա անձինք կամ ամբողջ համայնքը՝ կախված ներդրողի հետ պայմանավորվածությունից	բարձր
Անկախ համայնքային ձեռնարկություն	բարձր	Գործունյա անձինք, կամ ամբողջ համայնքը՝ կախված նախաձեռնող խմբի և համայնքի միջև պայմանավորվածությունից	բարձր
Մասնավոր տեղական ձեռնարկություն	բարձր	Գործունյա անձինք	բարձր

**Աղյուսակ 4-ում** ներկայացված են տեղի բնակչության կողմից զբոսաշրջության բիզնեսին մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների օրինակները:

**Աղյուսակ 4. Տեղի բնակչության կողմից զբոսաշրջության բիզնեսին մատակարարվող ապրանքները և մատուցվող ծառայությունները**

<b>Զբոսաշրջային ծառայությունների դաշտը</b>	<b>Պահանջվող ապրանքները ծառայությունները</b>	<b>Տեղական մատակարարողները</b>
<b>Հյուրանոցային ծառայություններ</b>	ապրանքներ և աշխատուժ	շինարարական կազմակերպություններ, արհեստավորներ
	ներքին հարդարանք	կահույքի խանութներ, արհեստավորներ
	պահպանություն և վերանորոգում	արհեստավորներ
	հավաքարարություն և լվացք	որակավորում չունեցող տեղական աշխատուժ
	պահակություն, այգեպանություն	որակավորում չունեցող տեղական աշխատուժ
<b>Սննդի ծառայություններ</b>	թարմ ուտելիք կամ նպարեղեն (բանջարեղեն, մսեղեն, ձկնեղեն և այլն)	ֆերմերներ, անասնապահներ, ձկնորսներ
	մշակված ուտելիք	հացթուխներ, մսագործներ, տեղական խանութներ, շուկաներ
	ուտելիքի պատրաստում և մատուցում	որակավորում չունեցող /բացառությամբ խոհարարների/ տեղական աշխատուժ՝ ուսուցում անցնելու պայմանով
<b>Փոխադրամիջոցներ</b>	փոխադրամիջոցներ	վարորդներ, լողալու միջոցներ ունեցողներ
	վառելիք	լցակայաններ
	բեռնափոխադրողներ	որակավորում չունեցող տեղական աշխատուժ
	հեծկան կենդանիներ	ֆերմերներ և անասնապահներ
<b>Տուրերի անցկացում և տարբեր միջոցառումների կազմակերպում</b>	ուղեկցվող տուրեր	որակավորում ունեցող ուղեկցողներ
	մշակութային միջոցառումներ	տեղական մշակութային խմբեր
	ուսուցողական կուրսեր, սեմինարներ	որակավորում ունեցող ուսուցողներ

**Բնակչության մասնակցությանը խոչընդոտող պատճառներից են՝**

- դրսից ներդնողները որոշ դեպքերում դուրս են մղում տեղացիներին զբոսաշրջության դաշտից
- տեղացիները հաճախ ունենում են ժամանակավոր կամ ցածր վարձատրվող աշխատանք: Նախապատվությունը տրվում է դրսի որակյալ մասնագետներին
- այն դեպքերում, երբ տեղի բնակչությունը ստանում է եկամուտ, առկա է այդ եկամուտների ոչ հավասարաչափ բաշխումը՝ ունևոր խավը ստանում է ավելի օգուտներ, քան շատ կարիքավորները,
- համայնքները միատարր չեն՝ սոցիալապես և քաղաքականորեն բաժանված լինելով հաճախ ի վիճակի չեն գործել միասնաբար ընդհանուր բարգավաճման համար
- լավագույն մղումներից սկիզբ առած համայնքային զբոսաշրջության գործող ծրագրերը չունեն բավականաչափ մասնագիտորեն կառավարում /տուրիստական արդյունքի ցածր որակ, շուկայավարման և բիզնես կառավարման ունակությունների պակաս/, այդ իսկ պատճառով բավականաչափ եկամտաբեր չեն:

**Տեղական բնակչության մասնակցության եկամտաբերության բարձրացման միջոցներ՝**

- աղյուսակ 4-ում նկարագրված են տեղի բնակչության կողմից զբոսաշրջության բիզնեսին հնարավոր մատակարարվող ապրանքները և մատուցվող ծառայությունները: Պահպանվող տարածքները պետք է աշխատեն հնարավորինս իրենց զբոսաշրջային գործունեության մեջ, լինեն այդ ապրանքների և ծառայությունների սպառողները, այդպիսով խրախուսելով դրանց զարգացումը:
- կապերը տեղական մատակարարողների և զբոսաշրջության բիզնեսի միջև հաճախ կատարվում են տարերայնորեն: Նպատակահարմար է այս կապերը կազմակերպել միջնորդ կազմակերպության միջոցով: Բացի մասնավոր և հասարակական կազմակերպություններից, այդպիսի միջնորդի դեր կարող են կատարել նաև պահպանվող տարածքները:
- պահպանվող տարածքների ներսում գտնվող ենթակառուցվածքը պետք է նախատեսվի այնպես, որ իրենից ներկայացնի ոչ թե մրցակցող , այլ հավելյալ օղակ:
- տեղական բնակչությանը պետք է առաջնահերթության իրավունք տրվի տարածքների և գոյություն ունեցող ենթակառուցվածքի վարձակալության գործընթացներում:
- համայնքային զբոսաշրջության անկախ ծրագրերի հաջողությունը կարող է պայմանավորված լինել զբոսաշրջության ոլորտում փորձառու համայնքի անդամների առկայությամբ կամ նախաձեռնողների երկարաժամկետ աջակցության պայմաններում / ֆինանսավորում, ուսուցում/
- համայնք/մասնավոր ձեռնարկատեր համատեղ ձեռնարկությունները կարող են ի հայտ բերել տեղական մասնակցության առավել խոստումնալից մեխանիզմներ: Այս դեպքում համայնքը պետք է առաջարկելու համար ունենա զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող արդյունք՝ առանձնահատուկ տեղակայում, պատմա- մշակութային վայրեր, մոտիկ գտնվող հետիոտն արահետներ:
- պահպանվող տարածքների կողմից նպատակահարմար է խրախուսել, աջակցել և միջնորդել համայնք /մասնավոր ձեռնարկատեր համատեղ ձեռնարկությունների ստեղծումը:

Տեղի բնակչության մասնակցությունը զբոսաշրջության ոլորտում կարող են խրախուսել և աջակցել պահպանվող տարածքները: Այս գործում մեծ դեր ունեն այդ ուղղությամբ վարվող պետական քաղաքականության տարբեր ասպեկտները՝ պետական մակարդակով գյուղական և համայնքային զբոսաշրջության պլանավորումը, շուկայավարումը, կարգավորումը և ստանդարտները, ուսուցումը և լիցենզավորումը, տնտեսական խրախուսումը և այլն:

## 8.9. Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության ազդեցության կառավարում

Պահպանվող տարածքների զբոսաշրջության հետ կապված բացասական ազդեցությունը և դրան համապատասխան ծանրաբեռնվածության սահմանափակումները կարող են լինել երեք տեսակի՝

ա/ **բնապահպանական**՝ կապված բնության վրա բացասական ազդեցության հետ,

բ/ **սոցիալ-մշակութային**՝ կապված բազմաբնույթ մշակութային արժեքների և տեղական համայնքների բնականոն կյանքի վրա բացասական ազդեցության հետ,

գ/ **հոգեբանական**՝ կապված հանգիստ, բնական միջավայրում գտնվելու այցելուների ցանկության հետ:

Պահպանվող տարածքներում շրջակա միջավայրի վրա զբոսաշրջության բացասական ազդեցության առկայությունը և մակարդակը կապված է երեք հանգամանքներից՝ ա/ տեղանքի բնութագրից, բ/ զբոսաշրջության նպատակով օգտագործելու մակարդակից, գ/ նախորդ երկուսի հարաբերությունը կառավարելու պահպանվող տարածքների ունակությունից:

Ջրոսաշրջության **բնապահպանական** համատեղելիությունը առավել մեծ նշանակություն ունի պահպանվող տարածքների հազվագյուտ և զգայուն էկոհամակարգերի համար: Պահպանվող տարածքների էկոհամակարգերի վրա կանխատեսելի բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով ցանկալի է ընդհանրապես բացառել զբոսաշրջության որոշ ձևերը: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ վերականգնելը դժվար կամ թանկ է, և նույնիսկ՝ անհնարին: Դրանք կարող են լինել մեծամասշտաբ ենթակառուցվածքի կամ լանդշաֆտի զգալի փոփոխություններ պահանջող զբոսաշրջության ձևեր /օրինակ՝ գոլֆի դաշտեր, դահուկային բազաներ/, կամ շարժիչային տրանսպորտի օգտագործման վրա հիմնված ձևեր:

### 8.9.1. Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության ազդեցության հնարավոր տեսակներ

«Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի շրջանակներում մշակվել և բարձրագույն մարմնի կողմից 2004-ին /COP7 / հաստատվել են *Կենսաբազմազանություն և Տուրիզմ* . Ղեկավարման ուղեցույցներ /տե՛ս Հավելված 1. *Կենսաբազմազանություն և Տուրիզմ* Ղեկավարման ուղեցույցներ, անգլերենով/:

Այս փաստաթղթում թվարկված են զբոսաշրջային գործունեության ազդեցության հնարավոր տեսակները ըստ հետևյալ դասակարգման՝

1. Շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա ազդեցություն:
2. Սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքներ:
3. Հնարավոր օգուտներ:

### 8.9.2. Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափորոշիչներ /ինդիկատորներ/

Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափորոշիչներ անհրաժեշտ են ինչպես թույլատրելի ծանրաբեռնվածությունը որոշելու և սահմանափակելու սխեմաները կիրառելու համար, այնպես էլ շրջակա միջավայրի և տնտեսության վրա զբոսաշրջային

գործունեության ազդեցության գնահատման նպատակով մոնիթորինգի և վիճակագրական տվյալների հավաքագրման և օգտագործման սկզբունքները մշակելու և կիրառելու համար (տե՛ս 8.10. Չբոսաշրջության մոնիթորինգ):

Տուրիզմի միջազգային կազմակերպությունը /WTO/ բացահայտել է, որ կան մեծաքանակ չափորոշիչներ, որոնք կարող են կիրառվել զբոսաշրջային վայրերի համար: Առանձնացվել են հիմնական 29 չափորոշիչներ, որոնք համապատասխանում են զբոսաշրջության ոլորտի հիմնական 29 հարցերին: Դրա նկարագրությունը տրված է Հավելված 2. տեսքով: Թարգմանության աղավաղումներից խուսափելու նպատակով ներկայացված է բնօրինակը անգլերենով:

Չափորոշիչների ընտրությունը պետք է կատարվի համապատասխան տեղական պայմանների, ընդ որում, սա դիմամիկ, կապված հանգամանքների փոփոխություններից և ճշգրտումների ենթակա գործընթաց է: Չափորոշիչներ պետք է սահմանվեն համապատասխան այն կոնկրետ տեղերին և բնագավառներին, որտեղ առկա է ազդեցությունը` զբոսաշրջային բոլոր տիպի ենթակառուցվածք /գիշերելու և սնվելու վայրեր, արահետներ, հանգստի տաղավարներ/ , պատմամշակութային և բնական հուշարձաններ, ավիամերձ տարածքներ, գետերի հուններ, տեղին բնորոշ կենսաբազմազանության տեսակներ, զբոսաշրջության շահույթի բաշխումը, բնապահպան կրթական ծրագրերի առկայությունը և այլն:

Ստորև բերված են շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության ազդեցության չափորոշիչներ:

### **Ֆիզիկական**

- աղբի առկայություն
- աղբի կուտակման և հեռացման ձևերի փոփոխություն
- օգտագործվող ջրի խնայողության ձևերի փոփոխություն
- կեղտաջրերի մաքրման ձևերի փոփոխություն
- ջրի մեջ հայտնված բուսականություն և շինություններ
- արահետների լայնացում/էրոզիա
- այլընտրանքային արահետների հայտնվելը չնախատեսված տեղերում
- այլընտրանքային վրանատեղիներ և այլ հանգստավայրեր չնախատեսված տեղերում
- զբոսաշրջության հետ կապված ծառահատումներ` ուտելիք պատրաստելու, խարույկների, չնախատեսված ենթակառուցվածքի համար
- զբոսաշրջության ենթակառուցվածքների հետ կապված ոչնչացված/կտրված բուսականության մակերես
- բնության հուշարձանների ավերում
- գրություններ ծառերի, քարերի, ինչպես նաև պատմամշակութային արժեքների վրա
- խարույկներ
- ավազածածկույթի փոփոխություն:

### **Կենսաբանական**

- խոտածածկույթի նվազում
- ջրի որակ / աղբյուրներում, գետերում, լճերում/
- թռչունների բնադրավայրերի վիճակի կամ տեղի փոփոխություն
- կենդանիների վարքագծի փոփոխություն
- օտարածին բուսատեսակներ

- օտարածին կենդանատեսակներ
- հրդեհներ:

**Սոցիալ-մշակութային**

- պատմամշակութային հուշարձանների վիճակը/ավերումը
- հողօգտագործման տեսակի փոփոխություն պահպանվող տարածքի շրջակայքում
- սպառման/մատակարարման քանակական և որակական փոփոխություններ / սննդամթերք, ապրանքներ, ծառայություններ/
- զբոսաշրջության համար կազմակերպված հատուկ միջոցառումների քանակը և ծավալը
- տեղական համայնքների վերաբերմունքը զբոսաշրջությանը և զբոսաշրջիկներին
- տեղական ավանդույթների և սովորությունների փոփոխություն:

**Տնտեսական**

- զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի քանակը
- զբոսաշրջության ոլորտում անմիջականորեն ընդգրկված բնակիչների եկամուտներ
- զբոսաշրջության տարբեր ծառայություններ մատուցող և սննդամթերք/ապրանքներ մատակարարող բնակիչների եկամուտներ
- զբոսաշրջության ոլորտում չընդգրկված բնակիչների եկամուտներ
- պահպանվող տարածքների զբոսաշրջությունից ստացված եկամուտներ
- պահպանվող տարածքների բյուջեից հատկացումներ զբոսաշրջության ոլորտին
- զբոսաշրջությունից ստացված եկամուտներից նպատակային հատկացումներ համայնքներին
- տեղական սննդամթերքի/ապրանքների գների փոփոխություն
- զբոսաշրջության հետ կապված նոր կառույցների քանակը և ծավալը
- զբոսաշրջության հետ կապված նոր ձեռնարկությունների քանակը և ծավալը:

**8.9.3. Տարածքների ծանրաբեռնվածության որոշում և կառավարում**

1970-1980 թվականներին **ծանրաբեռնվածությունը** ընդունված էր հասկանալ իբրև այցելուների բացարձակ քանակ: Փորձ էր արվում լուծել բացասական ազդեցության խնդիրները պարզապես այցելությունների քանակական սահմանափակումներով՝ ելնելով էկոլոգիական, սոցիալական և այլ վերլուծություններից: Սակայն այցելուների և շրջակա միջավայրի բարդ հարաբերությունների պատճառով ծանրաբեռնվածության հասկացողությունը շատ դժվար է բնորոշել:

Շատ դեպքերում բացասական ազդեցության մակարդակը կախված է ոչ այնքան այցելուների բացարձակ քանակից, որքան վերջիններիս վարքագծից:

Երբ սկզբնական մոտեցման սահմանափակումները բացահայտ եղան, ի հայտ եկան ծանրաբեռնվածությունը որոշելու և սահմանափակելու մի շարք ավելի կատարելագործված սխեմաներ: Դրանցից առավել հայտնիները թվարկված են ստորև՝ անգլերենով, թարգմանության աղավաղումներից խուսափելու նպատակով:

- 1) Limits of Acceptable Change (LAC)
- 2) Visitor Impact Management (VIM)
- 3) Visitor Experience and Resource Protection (VERP)

- 4) Visitor Activity Management Process (VAMP)
- 5) The Recreation Opportunity Spectrum (ROS)
- 6) Tourism Optimization Model (TOMM).

Այս սխեմաներից յուրաքանչյուրի համար գոյություն ունի համապատասխան գրականություն: Զարկ չհամարելով նկարագրել այստեղ բոլոր սխեմաները, այնուամենայնիվ, թվենք այս սխեմաները կիրառելու ընթացքում ծագող դժվարությունները և պրոբլեմները՝

- կիրառելու համար պահանջվում են մարդկային, ֆինանսական և ժամանակային ռեսուրսներ
- հաճախ կա այցելությունների բացասական ազդեցության հիմնավորված գիտական տվյալների պակաս, արդյունքում՝ եզրակացությունները արվում են, հիմնվելով սահմանափակ տվյալների վրա կամ լինում են սուբյեկտիվ
- անզամ սահմաններից դուրս եկող ծանրաբեռնվածության պարագայում, բավարար անձնակազմ կամ դժվարություններ դիմակայելու ցանկություն չունենալու պատճառով կառավարման անհրաժեշտ գործողությունները միշտ չէ, որ նախաձեռնվում են:

Վերը թվարկված սխեմաներից առավել լայն օգտագործվողն է ոչ միայն զբոսաշրջության ոլորտում, այլև ընդհանրապես կառավարման մեջ կիրառվող Limits of Acceptable Change (LAC) կոչվողը, թարգմանաբար՝ Ընդունելի փոփոխությունների սահմանները /ԸՓՄ/: Այս կոնցեպտը առավել **որակային է**, քան **քանակային** և հիմնված է հետևյալ 4 բաղկացուցիչների վրա՝

1. Ընդունելի և հասանելի ռեսուրսային ու սոցիալական ստանդարտների որոշում:
2. Ցանկալի և գոյություն ունեցող վիճակների հակասությունների փաստագրում:
3. Այդ հակասությունները նվազեցնելուն ուղղված կառավարման գործողությունների որոշում և կիրառում:
4. Կիրառված կառավարման գործողությունների արդյունավետության գնահատում և մոնիթորինգ:

ԸՓՄ սխեման իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ 9 քայլերը ըստ բերված հերթականության՝

1. Բացահայտել տեղանքում ծագած պրոբլեմները՝ զբոսաշրջությունից ստացված անբավարար եկամուտներ, այցելուների կուտակում որոշ տեղերում, կենդանիների վարքագծի փոփոխության օրինակներ և այլն:
2. Որոշել և նկարագրել կառավարման խնդիրները՝ մեղմել բացասական ազդեցությունը բնության վրա, ավելացնել զբոսաշրջությունից ստացվող եկամուտները և այլն:
3. Ընտրել համապատասխան բնական և սոցիալական իրավիճակների չափորոշիչներ՝ կարևոր տեսակների վերարտադրման մակարդակ, ջրի որակ, այցելուների զոհունակության աստիճան և այլն:
4. Զետազոտել և գույքագրել ռեսուրսները և ներկա սոցիալական վիճակը՝ անհրաժեշտ է ունենալ կենսառեսուրսների և զբոսաշրջության վերաբերյալ մեկնարկային տվյալներ:
5. Որոշել բնական և սոցիալական իրավիճակների չափորոշիչների ստանդարտներ՝ ի՞նչն է ցանկալի և իրականորեն հասանելի:
6. Որոշել հնարավոր այլընտրանքները, օրինակ՝ պակասեցնել այցելուների քանակը, թե՞ ուղղել նրանց դեպի պակաս խոցելի տարածքներ, բարձրացնել մուտքի վճարները, թե՞ գրավել այլ տիպի այցելուներ:
7. Որոշել յուրաքանչյուր այլընտրանքին հասնելուն նպատակաուղղված կառավարման գործողությունները:
8. Գնահատել այլընտրանքները և ընտրել օպտիմալը:



9. Իրագործել գործողությունները և կատարել վիճակի մոնիթորինգ, համեմատելով ընթացիկ և մեկնարկային չափորոշիչները:

**8.9.4. Ջրոսաշրջության բացասական ազդեցության կառավարման միջոցներ**

Պահպանվող տարածքներում շրջակա միջավայրի վրա զբոսաշրջային գործունեության հնարավոր **բացասական ազդեցությունը** կարող է ի հայտ գալ զբոսաշրջության տարբեր բաղկացուցիչ մասերից: Դրա հետ կապված ազդեցության կառավարումը վերաբերում է զբոսաշրջության տարբեր բաղկացուցիչներին և պահանջում է կառավարման տարբեր միջոցներ /տե՛ս Աղյուսակ 5/

**Աղյուսակ 5. Բնության վրա զբոսաշրջության ազդեցության կառավարման ձևեր**

Ջրոսաշրջության բաղկացուցիչներ	Թիրախ խմբեր	Կառավարման միջոցներ
զբոսաշրջիկների գործողություններ	զբոսաշրջիկներ	այցելուների կառավարում, գոտիավորում
զբոսաշրջային ենթակառուցվածք	պահպանվող տարածքի ադմինիստրացիա, մասնավոր վարձակալներ	գոտիավորում, ՇՄԱԳ, բնապահպան տեխնոլոգիաների և գործունեության կիրառում, «էկոպիտակ»
ծառայություններ	զբոսաշրջային օպերատորներ, գիդեր, վարորդներ	կանոնակարգող մեթոդական բնույթի նյութեր, «էկոպիտակ»

*Աղբյուր՝ Ստրասդաս, 2002*

**Գոտիավորում**

Գոտիավորումը, ինչպես հայտնի է, պահպանվող տարածքների կառավարման կարևորագույն բաղկացուցիչն է, որը հիմնվում է բնապահպանական դրույթների վրա: Ջրոսաշրջության տեսանկյունից գոտիավորումը կատարվում է նույն՝ շրջակա միջավայրի պահպանության հիմունքներով, բայց այն հավելյալ կարող է ապահովել այցելուների համար տարբեր ռեկրեացիոն հնարավորություններ՝ սկսած պահպանված վայրի բնությունից, մինչև հեշտ հասանելի, բայց ավելի մարդաշատ վայրեր:

Պահպանվող տարածքների էկոհամակարգերի վրա կանխատեսելի բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով ցանկալի է ընդհանրապես բացառել զբոսաշրջության որոշ ձևերը: Ստորև ներկայացված են պահպանվող տարածքներում զբոսաշրջության գոտիավորման ընդհանուր դասակարգումը՝

- այցելուների համար փակ տարածքներ՝ արգելոցային գոտիների առավել զգայուն տարածքներ
- գիտա-ճանաչողական էքսկուրսիաներ փոքրաթիվ խմբերի համար՝ արգելոցային գոտու տարածքներում, բացառությամբ առավել զգայուն տարածքների: Ենթակառուցվածքի բացակայություն, բացառությամբ հասարակ արահետների: Պահպանվող տարածքի անձնակազմի ներկայությունը էքսկուրսիաների ընթացքում պարտադիր է
- չափավոր օգտագործման գոտի՝ ռեկրեացիոն գոտու առավել պահպանված և զգայուն տարածքներում: Հնարավոր է ոչ հիմնական կառույցներ, դիտակետեր, վրանային ճամբարատեղեր, ավելի կատարելագործված արահետներ, այցելուների չափավոր քանակ
- ինտենսիվ օգտագործման գոտի՝ ռեկրեացիոն գոտու պակաս պահպանված և ոչ զգայուն տարածքներում: Զբոսաշրջային ենթակառուցվածքով հագեցած գոտու մոտակայքում: Հնարավոր է տարածքի մակերեսի հարթեցում, հարմարավետ ճանապարհներ և արահետներ, դիտակետեր և հանգստի համար նախատեսված կառույցներ, այցելուների բավական քանակ
- զբոսաշրջային ենթակառուցվածքով հագեցած գոտի՝ զգայուն և առավել պահպանված տարածքներից մեծ հեռավորության վրա, ցանկալի է հնարավորին չափով ռեկրեացիոն գոտու սահմաններից դուրս: Հնարավոր է ենթակառուցվածքների խտություն, ավտոկանգառներ և տարբեր այլ ծանայություններ
- սպորտային ձկնորսության և որսորդության գոտի: Սպորտային ձկնորսությունը համապատասխան թույլտվություններով / լիցենզիաներով/ հնարավոր է բոլոր վերը թվարկված տարածքներում, բացառությամբ առաջինի՝ այցելուների համար փակ տարածքների: Ի տարբերություն դրան, որսորդությունը համատեղելի չէ զբոսաշրջության մյուս ձևերի հետ և պետք է սահմանափակվի միայն հատուկ կառավարվող որսորդության տարածքներում և հատուկ դրա համար ստեղծված որսորդական տնտեսությունների առկայության դեպքում:

### **Այցելուների կառավարում**

Այցելուների կառավարումը նպատակաուղղված է կանխարգելելու կամ լուծելու հետևյալ պրոբլեմները՝

ա/ այցելուների քանակը գերազանցում է տեղանքի բեռնվածության թույլատրելի մակարդակը /քանակական տեսանկյուն/,

բ/ այցելուները ցուցաբերում են ոչ համապատասխան վարքագիծ /որակական տեսանկյուն/:

Շատ դեպքերում բացասական ազդեցության մակարդակը կախված է ոչ այնքան այցելուների բացարձակ քանակից, որքան վերջիններիս վարքագծից:

Ստորև նկարագրված են պահպանվող տարածքների համար օգտագործվող այցելուների կառավարման միջոցները:

Այցելուների քանակի կառավարում

ա/ «կոշտ» միջոցներ

- խմբերում այցելուների քանակական սահմանափակում
- մուտքի վճարի սահմանում որոշ տարածքների համար
- տարածքների կամ երթուղիների սեզոնային /օրինակ՝ բնադրման շրջանում/ կամ օրվա որոշ ժամերի արգելքներ:

Կարևոր է այցելուներին բացատրել «կոշտ» միջոցների կիրառման պատճառները: Հնարավորության դեպքում ցանկալի է այցելությունից առաջ մարդկանց նախօրոք տեղեկացնել սահմանափակում-

ների մասին, որպեսզի նրանք կարողանան համապատասխանորեն պլանավորել իրենց հանգիստը: Բացի դրանից, հնարավորության դեպքում, ցանկալի է անձնակազմի կողմից կազմակերպել սահմանափակումների վերահսկողություն:

*բ/ «փափուկ» միջոցներ*

- այցելուների քանակի պակասեցում կամ նրանց տարակենտրոնացում մուտքի վճարի բարձրացման միջոցով՝ ամբողջ տարվա կտրվածքով կամ սեզոնային: Այդպիսով կարելի է ուղղել այցելուներին դեպի ավելի պակաս այցելվող տարածքներ, ինչպես նաև շահագրգռել, այսպես կոչված «սեզոնից դուրս» զբոսաշրջությունով:

*Այցելուների վարքագծի կառավարում*

*ա/ «կոշտ» միջոցներ*

- սահմանել այցելուների վարքագծի պարտադիր կանոններ՝ հստակ բանաձևված՝ «թույլատրվում է» և «չի թույլատրվում» կետերով և զբոսաշրջիկներին իրազեկել դրանց մասին
- ապահովել անձնակազմի ներկայությունը և հսկողությունը կրիտիկական կետերում՝ այցելուների անթույլատրելի վարագահի՞՞ր կանխելու համար
- զբոսաշրջիկների համար պարտադիր պայման դնել անձնակազմի ներկայացուցչի ուղեկցությունը /այդ թվում՝ ելնելով և անվտանգության նկատառումից/:

Այցելուների վարքագծի պարագայում «փափուկ» միջոցների կիրառումը ավելի ցանկալի է, քան «կոշտ» միջոցների: Հարկադիր միջոցները ցանկալի է կիրառել միայն այն դեպքերում, երբ կիրառված հնարքների անարդյունավետությունը ակնհայտ է դառնում:

*բ/ «փափուկ» միջոցներ*

- այցելուներին տեղեկացնելը և բնապահպանորեն կրթելը նրանց վարագահի՞՞ր կառավելու գլխավոր միջոցն է: Պահպանվող տարածքի կանոնները ենթակա են ավելի հեշտ ըմբռնման, եթե մարդկանց բացատրվում է դրանց անհրաժեշտությունը կոնկրետ պարագայում
- տարբեր տիպի մուտքերը և Այցելուների կենտրոնները լավագույն հնարավորություն են ընձեռում տեղեկությունը այցելուներին հասցնելու համար: Տեղեկացնելու միջոցները պետք է տեղադրվեն նաև պահպանվող ողջ տարածքում, չլինելով սակայն շատ հաճախակի և ձանձրալի
- այցելուներին պետք է խորհուրդ տրվի վարձել ուղեկցորդ, կամ այդ ծառայությունը կարելի է ընդգրկել այլ տիպի, օրինակ՝ մուտքի վճարի մեջ
- մեքենաների կանգառները պետք է տեղադրել զգայուն տարածքներից մեծ հեռավորության վրա: Այս ձևով կարելի է երկարացնել անցնելիք հետիոտն հատվածը, դրանով իսկ նվազեցնելով այցելել ցանկացողների քանակը
- այցելուներին դեպի ավելի ցանկալի վայրերը ուղղելու համար կարելի է դրանք ավելի գրավիչ դարձնել՝ առաջարկելով ավելի հարմար արահետներ, դիտակետեր և հանգստանալու տեղեր: Դրան հակառակ, անցանկալի վայրերը կամ երթուղիները կարելի է պակաս գրավիչ դարձնել, թողնելով, որ ավելանա արահետների խտածածկույթը, կամ ստեղծելով ճանապարհի արհեստական արգելքներ /օրինակ՝ արահետները արգելափակել թափուկներով/:

**Երթևեկության կառավարումը** ևս մեծ նշանակություն ունի զբոսաշրջության բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Պետք է հնարավորին չափ խուսափել շարժիչային փոխադրամիջոցներ օգտագործելուց: Բնությունը զգալու համար երթևեկելու լավագույնը հետիոտն ձևն է: Բացառություն կարելի է անել ճանապարհների երկար հատվածների համար, ինչի դեպքում անձնական օգ-

տագործման մեքենաների փոխարեն նախընտրելի են հատուկ նախատեսված երկկողմանի երթևեկող հասարակական փոխադրամիջոցներ՝ օրինակ միկրոավտոբուսներ:

**ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման փորձաքննություն**

«Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի շրջանակներում մշակվել և 2004-ին հաստատվել են «Կենսաբազմազանություն և Տուրիզմ» Ղեկավար սկզբունքները /տե՛ս Հավելված 1/, համաձայն որի, բնության հատուկ պահպանվող տարածքներում կենսաբազմազանության վիճակի վրա ներգործություն ունեցող զբոսաշրջության նախագծերի և միջոցառումների իրականացման առաջարկությունները պետք է քննարկման ներկայացվեն այդ փաստաթղթում նկարագրված Ծանուցման /տեղեկացման/ ընթացակարգի համաձայն:

ԲՀՊՏ-ի տարածքը քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտ է, որի կառուցապատումը պետք է կատարվի համապատասխան Կառուցապատման միասնական հայեցակարգային նախագծի: Հայեցակարգերը, նախագծերը և նախատեսվող գործունեությունը պետք է ենթարկվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության /ՇՄԱԳ/:

Մեր երկրում այս գործընթացը կարգավորվում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքով, որը «կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպչական հիմունքները»:

Օրենքում սահմանված է, որ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է, որի հիմնական նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել հայեցակարգի և նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրա»:

**Բնապահպան տեխնոլոգիաների և գործունեության կիրառումը** ընդգրկում է այլընտրանքային՝ վերարտադրվող աղբյուրներից ստացված էներգիայի կիրառում, կեղտաջրերի մաքրման և հեռացման, ինչպես նաև աղբի կուտակման և տեղափոխման եղանակների կատարելագործում, ջրի և էլեկտրականության խնայողություն, աղբի քանակի նվազեցում և այլն:

**«Էկոպիտակ»-ի կիրառում**

Կամավորության վրա հիմնված «Էկոպիտակ»-ների և սերտիֆիկացիոն ծրագրերի կիրառումը արդյունավետ միջոց է զբոսաշրջության ոլորտում բնապահպանորեն ներդաշնակ ծառայություններ մատուցողների գնահատման, գովազդման և առաջխաղացման համար: Այն նախօրոք սահմանված կանոններին համապատասխանելու վրա հիմնված կառավարման միջոց է հյուրանոցների, զբոսաշրջային օպերատորների և զբոսաշրջային այլ բիզնեսների համար:

Միջազգային զբոսաշրջության շուկայում գնալով ավելանում է բնապահպանական կանոններին համապատասխանող ծառայություններ փնտրող գնորդների քանակը: Ծառայությունների որակի ստանդարտացման հետ զուգահեռ, «Էկոպիտակ»-ի շնորհիվ մշակակում է, որ տվյալ բիզնեսը համապատասխանում է նաև բնապահպանական ստանդարտներին, ինչը գովազդի և շուկայավարման արդյունավետ միջոց է:

«Էկոպիտակ»-ի շնորհիվ գործընթացը կարող են նախաձեռնել տարբեր կազմակերպություններ՝ մասնավոր, պետական, հասարակական:

Ինչպես ցանկացած սերտիֆիկացման, այնպես էլ էկոպիտակավորման պարագայում, շատ կարևոր է գործընթացի վստահելի լինելը: Սա նշանակում է, որ զբոսաշրջային ձեռնարկության գործունեության համապատասխանումը բնապահպանական կանոններին պետք է գնահատվի անկախ փորձագետի կողմից:

ԲՀՊՏ-ները կարող են օգտագործել սերտիֆիկացիոն ծրագիրը երկու ճանապարհով՝

- ԲՀՊՏ-ն կարող է զբոսաշրջության համար տարածքների վարձակալության առաջնություն կամ բացառիկ իրավունք տալ սերտիֆիկացված ձեռնարկություններին, դրանով իսկ հավաստելով հուսալի սերտիֆիկացման ծրագրի առկայությունը իրենց տարածքում
